ԷՀՄԻԱՇՒՆ

1968 թ. III

ՊԱՀՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Ե



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ— Միշտ անշարժ պահենք զԱթոռ Հայկազնեայս . . 3

Հայ և Անգլիկան եկեղեցիների փոխհարաբերությունների շուրջ Վենափառ Հայրապետի և Քենտրբերիի Արքեպիսկոպոսի միջև փոխանակված գրություններ 7

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿ. ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ— Փոքր խորհրդածություն մը հայրապետական կոնդակի առթիվ 10

ՍԱՀԱԿ ԱՐՔԵՊԻՍԿ. ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ— Քրիստոսի Համբարձումը 12

ԱՍՏՎԱԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ 15

Շարական Համբարձման 17

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ— Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոսի հովվապետական այցելությունը Հյուսիսային Կովկասի և Նոր-Նախիջևանի թեմին 18

Քաղվածքներ Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստերի արձանագրություններից 27

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ 29

ՀԱՅՐԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ— Սիմեոն Երևանցի կաթողիկոսի պայքարը Աղվանից կաթողիկոսական և Կոստանդնուպոլսի պատրիարքական աթոռների կենտրոնախույս ձգտումների դեմ . 31

Հ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ— Մարմաշենի վանքը և նրա վիմագրությունները . 35

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ— Մոզաիկ եկեղեցության արվեստը Հայաստանում . 44

Դ. ՆԱՋԻԿՅԱՆ— Հովհաննես Հինդլյանի մանկավարժական հայացքները 50

Կ. ՂՈՐՂԱՆՅԱՆ— Կարմիր բլուրի պեղումների մասին 56

Հանգիստ հոգեշնորհ Տ. Կոստանդին վարդապետ Թառլանյանի . . 62

Սուրբ Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը հայտարարում է ուսանողների ընդունելություն 1957—1958 ուսումնական տարեշրջանի համար 63

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ՝

ՀԵՐԿԵՍԿԱՆ ՍՈՒՄ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала „Эчмиадзин"

Redaction of the magazine „Etchmiadzin", Etchmiadzin, Armenia, USSR

Երևան, 1957 թ.

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱՂԳԵՆԱՑ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՄԻՇՏ ԱՆՇԱՐԺ ՊԱՀԵՍ ԶԱՐԹՈՒՄ ՀԱՅԿԱԶՆԵՆՑԻ

Երջանկահիշատակ Տ. Տ. Գևորգ Զ. Կաթողիկոսը իր հայրապետության երկրորդ տարում, 1946 թվականին, իր սրբատառ կոնդակով նվիրագործեց, որ «յայսմհետէ յամենայն օրացոյցս եկեղեցւոյ մերոյ յաւուր տօնի Համբարձման Տեառն յաւելցի յիշատակս այս Տարեդարձ փոխման Հայրապետական Աթոռոյն Հայոց ի Սսոյ ի Ս. էջմիածին յամի Տեառն 1441, և պաշտել յեկեղեցիս գայս տօն ազգային հանդիսի և մաղթանօք և երգով «էջ Միածինն ի Հօրէ» շարականի»:

Հայրապետական օրհնությամբ նվիրագործված Ս. էջմիածնի այս նոր տոնը հոգեկան խորունկ հրճվանքով ողջունվեց բովանդակ հայ ժողովրդի կողմից: Մայր Աթոռ Ս. էջմիածնի անվան ու խորհրդի հետ կապված մի որևէ դեպք պատմական իրադարձություն է հանդիսացել միշտ հայ կյանքում: Հայ ժողովուրդը, իր հոգու բովանդակ ջերմությամբ, սիրում է Ս. էջմիածինն ու անմոռանալի կապերով կապված է զգում իրեն Ամենայն Հայոց Կաթողիկոսության հետ, Ս. էջմիածնի հետ:

Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու գերագույն Աթոռն է Ս. էջմիածինը՝ երկնային հայտնությամբ և հրաշքով հաստատված Վաղարշապատում, ըստ Ս. Գրիգոր Լուսավորչի լուսեղեն տեսիլքի, երբ Միածինը իջավ ի Հայաստան աշխարհ և Արարատյան դաշտի սրտի վրա հիմք դրեց հայ հավատի մեծ կաթողիկեին: «Եւ սիւնն հրեղէն՝ կաթողիկէ եկեղեցի է, որ ժողովէ զամենայն ժողովուրդս ի մի միաբանութիւն հաւատոց ի ներքոյ բնոցն իւրոց: ...Եւ տեղին այն լիցի Տաճար Աստուծոյ և Տուն աղօթից խնդրուածոց ամենայն հաւատացելոց և ԱԹՈՌ ՔԱՀԱՆԱՅԱԳԵՏՈՒԹԵԱՆ»:

Ս. էջմիածինը ծնունդն է Լուսավորչի լուսեղեն տեսիլքի, մեր ժողովրդի կրոնական, ազգային զգացմանց կենտրոնը, մեր հնագույն և համազգային սրբավայրը, մեր գոյության ամրակուռ միջնաբերդը, մեր ազգային իդեաների, իդեալների ներշնչարանը, որտեղ դարբնվել է Ս. Մեսրոպի, Ղևոնդի և Վարդանի ոգին:

Հայրապետական Աթոռը Վաղարշապատում մնաց մինչև 485 թվականը, երբ «ազգի ազգի հանգամանք հարկ ի վերայ դնէին կաթողիկոսացն հայոց փոխել զտեղի բնակութեան իւրեանց»:

Հայրապետական Աթոռը առնասարակ հաստատված է եղել քաղաքական իշխանության կենտրոնում, «վասն հանապազորդ բանակցութեանց ընդ տիրոջս աշխարհին մերոյ»:

Անցյալում քաղաքական հարափոփոխ վերիվայրումների հետևանքով և «յերեսաց արշաւանաց հինից» Հայրապետական Աթոռը, հայ ժողովրդի նման, ստիպված է եղել թափառական ու աստանդական կյանք վարել: Մեր եկեղեցական տարեգրությանց մեծագույն դժբախտություններից մեկն է եղել Հայրապետական Աթոռի երկրե երկիր այդ թափառումն ու աստանդականությունը: Այսպես, օրինակ, 485 թվականին Հայրապետական Աթոռը Ս. էջմիածնից փոխադրվել է Գվին, ուր նստում էին «մարզպանք հայոց» և արաբ ոստիկանները, 927 թվակա-

նին՝ Աղթամար, ուր իշխում էին Արծրունիները, ապա Բագրատունիների ժամանակ՝ Արցինա, Անի և ապա Թավբլուր, Հռոմկլա, Սիս, որ Ռուբինյան թագավորների աթոռանիստն էր, և 1441 թվականին նորից վերադարձել է իր նախկին ու պատմական վայրը՝ «բնակ տեղին իր Ս. Էջմիածին»: «Ժամանակի ընթացքին,— գրել է Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը,— տեղափոխվեր է Աթոռը, այլ չէ տեղափոխվեր աստվածաբաշ տեղին իշման և չէ փոխվեր Աթոռույն իշխանության և իրավասության, արտոնության և պաշտամանց կերպն ու կարգը»:

Անցյալում Հայրապետական Աթոռի հալածական վտարանդիությունը, հայ ժողովրդի բռնադատյալ գաղթականությունը, մեր ժողովրդի քաղաքական անկայուն վիճակը պատճառ են հանդիսացել Աթոռի տեղափոխությունների: Սակայն Ս. Էջմիածինը միշտ մնացել է որպես պատմական խարիսխ մեր եկեղեցական նվիրապետության և միասնականության: Էջմիածնի նկատմամբ սերն ու հավատարմությունը, Էջմիածնասիրությունը ընդհանրապես, հայ ժողովրդի նվիրական ու անկողոպտելի ժառանգությունն է, ավանդ մնացած էուսավորչի օրերից:

Հայրապետական Աթոռի Սսից Էջմիածին փոխադրությունը մեր ազգային-եկեղեցական պատմության շրջադարձային դեպքերից մեկն է որպես հիշատակելի թվական:

Կիլիկյայում, 1375 թվականին, հայկական իշխանության՝ Ռուբինյանց անկումով է՛լ ավելի վտանգվում էր նաև Հայաստանյայց Եկեղեցին: Սսի Հայրապետանոցում թելադրում էին կաթոլիկ ֆրանչիսկյան և դոմինիկյան հոգևորականները:

Հատկապես Ռուբինյան վերջին լատինամիտ թագավորները, հակառակ հայ ժողովրդի բուռն ընդդիմության, «վասն քաղաքական ակնկալութեանց» մեծ զիջումներ էին անում Հռոմեական Եկեղեցուն, որպեսզի «յաջողեսցի նոցա պաճել զիշխանութիւն իւրեանց ի Կիլիկիա»:

Հայ հողից ու հարազատ միջավայրից հեռու, օտար եկեղեցական ազդեցությունների շրջանակի մեջ ընկած, Հայաստանյայց Եկեղեցին կարող էր կորցնել իր նվիրապետությունը, ավանդությունները, իր ազգային նկարագիրը, իր ինքնուրույնությունն ու անկախությունը:

Կիլիկիայում քաղաքական իշխանության անկումով, այլևս ոչ մի արդարացուցիչ պատճառ չէր մնում, որ «իր շուքն ու փառքը կորուսած, ափ մը բախտախնդիր եկեղեցականներու ձեռք մնացած, ազգային մարմնի ճակողուքենեն հեռացած, ուղղություն և ավանդություն մոռցած, Եկեղեցվո շահն ու արքությունը մեկ կողմ թողած, լոկ անձնական ու արկածալից գործերու հետամուտ» (Մ. արքեպիսկ. Օրմանյան, «Ազգապատում», Բ. հատ., էջ 2103) Հայրապետական Աթոռը մնար Կիլիկիայում: Հայրապետական Աթոռը Սսում պարում էր իր ամենածանր տագնապներից մեկը, երբ բախտախնդիր մարդիկ փողի, արյան և այլ անազնիվ միջոցների ճանապարհով ճափշտակում էին Կաթողիկոսական Աթոռը:

Համազգային տագնապի այդ ծանր օրերին, Հայ Եկեղեցու և Հայրապետական Աթոռի այդ անփառունակ և տխուր կացության հետ չէին կարողանում հաշտվել արևելյան վարդապետները, աղթամարցիք (վասպուրականցիք), սյունեցիք և բոլոր մյուս հայրենասեր և նախանձախնդիր հոգիները, որոնք վճռեցին փրկել Աթոռը, այն փոխադրելով իր նախնական ու նվիրական սրբավայրը Ս. Էջմիածին, ուր այդ օրերին համեմատաբար ավելի խաղաղ պայմաններ էին ստեղծվել:

Հայրապետական Աթոռի Սսից-Էջմիածին փոխադրության շարժման գլուխն էին կանգնել Տաթևյան աշակերտությունը, Կիլիկյան ողջամիտ ու եկեղեցանվեր հոգևորականները ու ժողովուրդը: Աթոռի փոխադրության առանցքում գործիչներից էին Թոմա վարդապետ Մեծոփեցին՝ Մեծոփա վանքի առաջնորդը, Հովհաննես վարդապետ Կոլոտիկ կամ Հերմոնեցի՝ առաջնորդ Տաթևի վանքի, երկուսն էլ Գրիգոր Տաթևացու աշակերտներ:

Եկեղեցական նվիրակների միջոցով շրջաբերական հրավիրագրեր ուղարկվեցին բոլոր վանքերին՝ «փութանակի և առանց յապաղանաց գալ եպիսկոպոսք և վարդապետք ի խորհուրդ մի բարի և օգտակար»:

1441 թվականի մայիսին Ս. Էջմիածնում հավաքվեցին ավելի քան երեք հարյուր պատգամավորներ, հոգևորական և աշխարհական, «սուրբ հարք և պատուական երիցուք, ազատք և որդիք ազատաց, ձեռնաւորք և տանուտէրք»: Նստեր, որոնց չէր հաջողվել ներկա լինել ժողովին, նամակներով իրենց համաձայնությունն ու միաբանությունն էին հայտնում ժողովի որոշումներին:

Խանդավառ ու սրտագին մթնոլորտում վաղարշապատի ժողովը միաձայնություն հավանություն տվեց Մայր Աթոռի՝ Սսից Էջմիածին հայրենադարձության, որովհետև «չէր այլևս պատճառ ինչ պահելոյ զԱթոռ Հայրապետութեան Հայոց ի տար աշխարհին, հեռի ի ժողովրդենէ հայոց, ապա հարկ ան-

հրաժեշտ կայր փոխել զԱրոռն հայրապետութեան ի Սսոյ անդրէն ի Վաղարշապատ՝ ի բնակ Մայր Աթոռն Հայոց»:

Հայրապետական Աթոռի այս նոր շրջանի առաջին կաթողիկոսն եղավ Կիրակոս Վիրապեցին՝ «այր սուրբ և բարեպաշտոն, հեզ և խոնարհ ի Վասպուրականէ», որը մեծ շքով և հանդիսությամբ 1441 թվականի Համբարձման տոնին օծվեց և բարձրացավ Լուսավորչի Դահի վրա:

Ասից Հայրապետական Աթոռի հայրենադարձությունից հետո, Ս. Էջմիածնում սկսվեց Հայ եկեղեցու համար խաղաղ գործունեության մի նոր ու արդյունավոր շրջան: Փրկվեց և ապահովվեց Հայ եկեղեցու անկախությունը, ինքնուրույնությունը, ուղղափառությունը, վերջ գտան միաբարական ու բյուզանդական վեճերը, ամրապնդվեց Հայ եկեղեցու միասնականությունը, Աղթամարի Աթոռը հպատակվեց և միացավ Մայր Աթոռին, ծաղկեցին գիրն ու գրականությունը, և Հայրապետական Աթոռը, հակառակ բազմաթիվ դժվարությունների, անլուր ողբերգություններ, կատարեց նախախնամական դեր հայ կյանքում կրոնական, քաղաքական և մշակութային բնագավառներում: Ստեփանոս Սալմաստեցին (1545—1567 թ. թ.), Միքայել Սեբաստացին (1567—1579 թ. թ.) զբաղվում են հայ ժողովրդի ազատագրական շարժումներով, Մովսես Դ Տարևացին (1629—1632 թ. թ.), Փիլիպոս Աղթակեցին (1633—1655 թ. թ.), Հակոբ Ջուղայեցին (1655—1680 թ. թ.) և ուրիշ ուսումնասեր հայրապետներ՝ հիմքն են դնում Ս. Էջմիածնի մշակութային-հոգևոր վերազարթոնքի: Հայ եկեղեցին իր վերքերն է բուժում: Սյունիքում՝ Հաթևի դպրոցը, Բաղեշում՝ Ամրդոլու դպրոցը, Նոր-Ջուղայում՝ Ամենափրկիչ վանքը հանդիսանում են ժամանակի հայ մշակույթի զարգացման վառ օջախները, որոնք, հավատարիմ Սահակ-Մեսրոպյան ժառանգության և ոգուն, նոր գեղեցկություններ են բերում հայ մշակույթի գանձարանին: Այդ բոլորի ներշնչողն ու կազմակերպիչն էր Մայր Աթոռը, որպես բարի սերմնացան: Էջմիածնի ջերմ շունչի տակ սկիզբ է առնում, Հայրապետական Աթոռի Ս. Էջմիածին հայրենադարձությունից հետո, մեր կրոնական, քաղաքական և մտավոր վերածնունդը: Հայ ժողովրդի երախտագետ սրտում միշտ անմոռաց կմնան Մայր Աթոռի մեծ հայրապետներ Սիմեոն Երևանցու, Ներսես Աշտարակեցու, Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցու, Մակար Ա-ի, Երիմյան Հայրիկի և ուրիշների երախտիքն ու պայծառ հիշատակը:

Ս. Էջմիածինը Լուսավորչի օրերից մինչև այսօր եղել է մեր ժողովրդի իմացական ու բարոյական ձգտումների վառարանը, մեր ազգային իդեալների ներշնչարանը, հայ սրտերի մեջ բյուրեղացած և շոշափելի դարձած Լուսավորչի կանքեղը:

Մայր Աթոռ Ս. Էջմիածինը՝ Հայ Եկեղեցու ծագման և հաստատության օրերը, այսօր ևս մեր օրերում, կատարում է իր նախախնամական դերը հայ կյանքում: Այսօր, Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա. Վեհափառ Հայրապետը, Մայր Աթոռի հայրենադարձության այս երջանիկ տարեդարձի առթիվ, փափագում է, որ Իր զավակների ուշադրությունն ու սերը միշտ կենտրոնացած մնան Ս. Էջմիածնի վրա և բովանդակ հայությունը, խորունկ գիտակցությամբ, նվիրվի Մայր Աթոռի առաջադիմության և բարձրացման սուրբ գործին:

«Մեր օրերուն կպայծառակերպվի մեր Ս. Եկեղեցին: Հավատքը կվերածնի, հոգիները կմանկանան, Քրիստոսի Ս. Ավետարանը նոր ջերմությամբ և խաղցությամբ կլեցնե բոլոր դատարկ սրտերը: Լո՜ւյս, պայծառ լո՜ւյս կիջնե Հայաստանյայց վրա «մեռոյ լուսաւորութեան վերակացու» մեծ Լուսավորչի անմար կանթեղեն:

Այստե՛ղ հայտնված է Աստված մեր ժողովրդին, և այստե՛ղ է բված խոսքը:

Այստեղե՛ն կսկսի մեզի համար «ճանապարհը, ճշմարտությունը և կյանքը» հոգիներու:

Միածին մեզ կրաշխվի էջմիածնով» (Վեհափառ Հայրապետի 1956 թ. հուլիս 15-ի քարոզից, «Էջմիածին», 1956 թ., № VII, էջ 14):

Վեհափառ Հայրապետի մեծ սիրտն է, որ խոսում է այսօր Իր քարոզների մեջ, երբ նա հորդորում է, որ հայ ժողովուրդը, իր դարավոր եկեղեցասիրությամբ և հայրենասիրությամբ, հավատարիմ մնա Մայր Աթոռին և Մայր Հայրենիքին: Մեր պատմության այս բախտորոշ օրերին, Հայրենի երկրի ազատ պայմաններում, Մայր Աթոռը իր բազմերախտ Հայրապետի ջանքերով, իր փրկարար առաքելությունն է կատարում հայ կյանքում, երբ Հայրենի կառավարության իմաստուն ղեկավարության շնորհիվ, օր-ավուր իր մշակութային, տնտեսական, քաղաքական վերելքն է ապրում մեր սիրելի ու պաշտելի Հայրենիքը՝ Սովետական Հայաստանը:

Մեր ժողովուրդը այսօր Սփյուռքում ապրում է քաղաքական բարդ ու դժվարին պայմաններում: Վեհափառ Հայրապետը հանգամանորեն վերլուծում է հայ ժողովրդի կացությունը և նշում անել կացությունից դուրս գալու միակ ուղին:

«Մեր Ազգը, անողոք նակատագրի բերումով, այսօր բաժնված է աշխարհագրականորեն, բաժնված է բնկերային-քաղաքական հայացքներով, բաժնված է կենցաղային ու մշակութային կյանքի պայմաններով: Միակ գեմիները, ուր բոլոր հայերը անխտիր կրնան միանալ, միակ կամուրջը, որ զմեզ բոլորս կմիացնե, միակ սեղանը, որուն առջև բոլորս կողք-կողքի կրնանք ծունկի գալ աղոթելու Աստուծուն «մարցն մեռոց», միակ դուռը, որ կբացվի բոլորին առաջ առանց պայմանի՝ այդ Հայաստանյայց Ս. Եկեղեցին է, հավետ մեկ և անբաժանելի՝ Միածնի իշխան ամենասուրբ խորհրդով» (Վեհափառ Հայրապետի 1956 թ. սեպտեմբեր 2-ի քարոզից, «Էջմիածին», 1956 թ., № VIII—IX, էջ 19):

Բայց, այսօր, Սփյուռքում, և հատկապես Լիբանանում և Սիրիայում կան հայ ժողովրդի և Հայ Եկեղեցու միասնության հայտնի ու բաբուն թշնամիներ, որոնք բոլոր միջոցներով աշխատում են քայքայել հայ ժողովրդի կուռ միասնությունը, Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը հակադրել Մայր Աթոռին, պառակտել մեր արտասահմանյան թեմերն ու եկեղեցին, առելություն սերմանել նույն ժողովրդի հատվածների միջև:

Մեր ազգային-եկեղեցական պատմության մեջ, մեր ազգային գոյության սպառնացող ներքին և արտաքին հակառակորդական վտանգների դեմ իր ազգու ձայնն է բարձրացրել Մայր Աթոռը:

Այսօր էլ, Վեհափառ Հայրապետը, հանուն Հայ Եկեղեցու, հայ ժողովրդի գերագույն շահերի, Իր հայրապետական բաղձալուր ձայնն է բարձրացնում պատգամելով.

«Եկե՛ք, սիրելի՛ք, մոտեցե՛ք Լուսավորչի անմար կանթեղին, լույս առեք անկե և տարե՛ք ձեզ հետ ձեր Եկեղեցիներուն, ձեր սիրելիներուն, ձեր հայ եղբայրներուն ու քույրերուն, բոլոր Մեր պանդուխտ զավակներուն անխտիր, որպեսզի հավետ վառ մնան կանթեղները հայ հավատացյալներու հոգիներուն:

Ս. Էջմիածինը հայ հավատացյալ ժողովրդի սիրտ և միության ատվածատուր ՄԻԱԿ ԵՐԱՇԽԻՔՆ է:

Բոլոր Մեր զավակներուն վրա շող առ շող թող կաթի Ս. Լուսավորչի տեսիլքի լույսեն, թող բոլորը լուսավորվին ու զորանան այդ տեսիլքի շնորհներով, թող բոլորը առաջնորդվին ու գործեն, ներշնչված եկեղեցիի և Ազգի միության և անբաժանելիության ոգիեն» (նույն տեղում, էջ 18—19):

Հայրապետական Աթոռի Սրից Էջմիածին հայրենադարձության այս տարեդարձի առիթով, «Աղաչեսցուք զԱմենակալն Աստուած, զի անսասան պահեսցէ զեկեղեցի իւր սուրբ յամենայն թշնամեաց երևելեաց և անտեսանելեաց, և կարդասցուք առ նա ըստ հանապազօր մաղթանաց մանկանց Եկեղեցւոյ՝ «Փարեխսուրեամբ վերին քո զօրաց միշտ անշարժ պահեա զԱթոռս Հայկազնեայս»:

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿՑԱՆՔ

ՀԱՅ ԵՎ ԱՆԳԼԻԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՔԵՆՏԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱԶԳԵՆ Ա, ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

Զերդ Սրբություն.

Այս երկրին Ձեր տված այցելության ժամանակ, որից ես ունեմ այնքան առատաձիգ հիշողություններ, ես մտածեցի այն կարելիության մասին, որ մեր երկու եկեղեցիների ներկայացուցիչների միջոցով կկարողանանք կազմակերպել աստվածաբանական և գործնական տիպի խորհրդակցություններ: Եվ քանի որ Զերդ Սրբությունը ևս մտածում է, որ այդպիսի խորհրդակցություններ կարող են օգտակար լինել, ես այժմ համարձակվում եմ այդ հարցը առաջ քաշել:

Քանի որ մինչև այժմ մեր երկու եկեղեցիների միջև չեն եղել մեծ չափով այդպիսի խորհրդակցություններ, օգտակար կլիներ, որ նախապես քննվեին նկատի առնվելիք հարցերի ընդհանուր նպատակն ու բնույթը. հարցի այլ կողմերը ևս պետք է ուշադրությամբ նկատի առնվեն վերջնական եզրակացության հանգելուց առաջ:

Հետևաբար ես պիտի առաջարկեի՝ որպես նախնական քայլ, որ Հայոց եկեղեցին ներկայացնող երեք անձնավորություններ և Անգլիայի եկեղեցին ներկայացնող երեք հոգի մի քանի օրով հանդիպեին միմյանց՝ խնդիրը քննելու և առաջարկներ ներկայացնելու համար թե՛ Զերդ Սրբության և թե՛ ինձ: Ուրախ պիտի լինեի մի քանի առաջարկություններ անելով այդպիսի մի հանդիպման օրակարգի առնչությամբ, երբ Դուք համաձայնվեիք այդպիսի հանդիպման հնարավորության մասին:

Մեզ համար ընդհանրապես հարմար կլիներ, եթե նախնական այդ հանդիպումը տեղի ունենար առաջիկա տարի քան թե այս, և ժամանակ տվեր կատարելու բոլոր անհրաժեշտ պատրաստությունները: Հանդիպումը կարելի է կազմակերպել այստեղ Լոնդոնում կամ Փարիզում, իսկ եթե Դուք կփափագեիք մի այլ վայր Ձեզ ավելի մոտ, այդ դեպքում երուսաղեմը կարելի էր նկատի ունենալ:

Շատ ուրախ պիտի լինեի իմանալով, ու Ձերդ Սրբությունը համաձայնվել է այդպիսի հանդիպման, և հարմար ժամանակին կնշանակի Իր երեք ներկայացուցիչներին, հայտնելով միաժամանակ Ձեր ցանկությունը այդ հանդիպման ժամանակի և վայրի մասին:

Հիշելով Ձեր այցելության ժամանակ մեր բարեկամական հարաբերության երջանկությունը, հղում եմ Ձեզ իմ հարգալից և սիրալիր ողջույնները և իմ աղոթքները, որպեսզի Աստված օրհնի Ձեզ և Ձեր եկեղեցին:

Մնամ Ձեզ սիրող եղբայր ի Քրիստոս՝

ՋԵՈՖՖՐԻ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՔԵՆՏԲԵՐԻԻ,
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՎ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ
ՀԱՄԱՅՆ ԱՆԳԼԻՈ

31 հուլիսի 1956 թ.
Լամբեթի պալատ

ՆՈՐԻՆ ԱՄԵՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՋԵՈՖՖՐԻ, ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՔԵՆՏԲԵՐԻԻ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՎ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ՀԱՄԱՅՆ ԱՆԳԼԻՈ

Ձերդ Սրբազնություն,

Բավական ժամանակ անցած է այն օրերեն, երբ Մենք երջանկությունն ունեցանք Լամբեթի պալատին մեջ վայելելու Ձերդ Ամենապատվության և Ձեր ազնիվ Տիկնոջ սիրալիր հյուրասիրությունը, Անգլիոյ հայ համայնքին Մեր հովվական այցելություն տալու ժամանակ: Մեր հիշողության մեջ անջնջելի մնացած է այն ջերմ, սրտաբուխ ընդունելությունը, որ ցույց տրվեցավ Մեր անձի նկատմամբ Ձեր և Անգլիկան եկեղեցվո ամբողջ հոգևոր դասի կողմեն:

Բարեկամական անկեղծ մթնոլորտը և փոխադարձ սիրո ու համակրանքի պայմաններու մեջ մեր միջև ստեղծված փոխըմբռնումը արդեն իսկ պետք է նկատվի գեղեցիկ գրավականը մեր երկու եկեղեցիներու հետագա մերձեցման և բարեկամական կապերու համար:

Ի հաստատումն Մեր 1956 թվականի սեպտեմբեր 22-ի հեռագրի, հանույթն ունինք Ձերդ Ամենապատվության հայտնելու հետևյալը.

Ընդառաջելով Անգլիկան և Հայ եկեղեցիներու փոխադարձ հարաբերությունների սերտացման վերաբերյալ Ձեր բարի ցանկություններուն, որոնց Մենք ուրախությամբ համամիտ գտնվեցանք Լոնդոն գտնված ժամանակ մեր ունեցած խոսակցությունների ընթացքին, այսու պատիվն ունինք հայտնելու, որ Մենք ուրախ կըլլայինք սույն հարցի շուրջը տեսակցություններ ունենալու Ձեզ համար հարմար մի որևէ ժամանակ:

Ինչ կվերաբերի տեսակցությունների վայրին, ապա մենք հարմար կնրկատենք Երուսաղեմը: Հայաստանյայց Եկեղեցվո պատվիրակությունը բաղկացած պիտի ըլլա երեք բարձրաստիճան հոգևորականներե, Երուսաղեմի հայոց Սրբազան Պատրիարքի կամ տեղապահի գլխավորությամբ:

Այսպիսով, կմնա որ Ձերդ Սրբազնությունը բարի ըլլա այսուհետև հրչտելու տեսակցությունների ժամանակը և Մեզ հայտնելու այդ մասին, տեսակցությունները սկսելեն երկու ամիս առաջ:

Սրբազան եղբայր, հաճեցեք ընդունիլ Մեր հարգանքի և սիրո ողջույնները, ինչպես նաև լավագույն բարեմաղթություններ Ձեր և Ձեր ազնիվ Տիկնոջ Բաջառողջության և եկեղեցանվեր գործոց հաջողության համար: Թող Տերը հաստատ պահե ու պայծառացնե Անգլիկան Ս. եկեղեցին և անոր արժանավոր սպասավորները:

Ձեզ սիրող եղբայր ի Քրիստոս և աղոթարար՝

ՎԱԶԳԵՆ Ա.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

28 հունվար 1957
Ս. Էջմիածին

ՆԱՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱԶԳԵՆ Ա, ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

Ձերդ Սրբություն.

Ձեր համակր ինձ մեծ հաճույք պատճառեց և իմ մեջ զարթեցրեց երջանիկ հիշողություններ այն բարեպատեհ առիթով, երբ ես կարողացա ողջունել Ձեզ որպես այցելու մեր երկրին և եկեղեցուն:

Արդարև ես շատ ուրախ եմ իմանալով, որ Ձերդ Սրբությունը ընդունում է մեր երկու եկեղեցիների հարաբերությունների լրիվ հարցի և դրանց է՛լ ավելի սերտացման հնարավորության մասին նախնական խորհրդակցությունների առաջարկը, յուրաքանչյուր կողմի երեքական ներկայացուցիչների մասնակցությամբ: Ուրախությամբ եմ ընդունում Երուսաղեմը որպես ամենահարմար վայրը, որտեղ կարող են տեղի ունենալ այդ խորհրդակցությունները, և ես միջոցներ ձեռք պիտի առնեմ, նշանակելու մեր եկեղեցու կողմից երեք ներկայացուցիչ՝ հանդիպում ունենալու Ձեր երեք ներկայացուցիչների հետ: Ինձ թվում է, որ այդպիսի խորհրդակցությունները սկսելու լավագույն ժամանակը պիտի լիներ հավանաբար առաջիկա տարվա սկզբները: Այս բանը դեռևս մի հիչ վաղ է, բայց ես խորհում եմ, որ մեր տեսակետից այս պիտի լիներ հարմարագույն կարգադրությունը, որովհետև շատ հավանական է, որ այս տարվա ընթացքում, Երուսաղեմի մեր հոգևորականության մեջ կատարվեն զանազան փոփոխություններ: Այնուհետև այս խնդրում ես պետք է կատարեմ որոշ ուսումնասիրություններ, և ինչպես Ձերդ Սրբությունն է ասաջարկում, կգրեմ Ձերդ Սրբության նշված ժամանակից առաջ:

Խնդրում եմ ընդունել իմ եղբարական ջերմ ողջույնները, և վստահ եղեք, որ մեր աղոթքները պիտի առաջնորդեն մեզ ավելի սերտ հասկացողության և եղբայրակցության Հայաստանյայց հնագույն պատմական եկեղեցու հետ:

Մնամ Ձեզ սիրող եղբայր ի Քրիստոս՝

ՋԵՈՖՖՐԻ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՔԵՆՏԲԵՐԻԻ,
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՎ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ
ՀԱՄԱՅՆ ԱՆԳԼԻՈ

27 փետրվարի 1957 թ.
Լամբեթի պալատ



ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿ. ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ
(Պատրիարք Թուրքիոյ Հայոց)

ՓՈՔՐ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹՅՈՒՆ ՄԸ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿԻ ԱՌԹԻՎ

Մեծ հաճույքով ենք արտատպում Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Վազգէն Ա Վեհափառ Հայրապետի «Հայաստանեայց Հայ Հոգևորականութիւնն» ուղղված 1957 թվականի հունվար 14-ի սրբատառ կոնդակի առթիվ Թուրքիայի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Գարեգին Արքեպիսկոպոս Խաչատուրյանի Կոստանդնուպոլսի «Շողակաթ»-ի 1957 թվականի փետրվար-մարտ համարում լույս տեսած բովանդակալից այս հոդվածը։—ԽՄԲ.։

Հայրապետական սույն կոնդակը, ներքինով և արտաքինով, ձևով և բովանդակությամբ գեղահյուս, ուղղված հայ հոգևորականության, կբերն մեզի մեղմաշարժ ծփանքը միմաստության ալիքներուն, որոնք կպոռթկան ու կպղպջան Իր սրտի ծովու ալքեն։ Կճանչնանք մենք զինքը։ Նախքան օծումն Իր շնորհազարդ, ուներ Նա Իր վրա «Հոգի Տեառնայ Օծումը՝ ներքին, որ ապա ստացարտույս մյուռոն-ով կկնքեր բարձրագույն կոչումը դեպի Միածնահիմն և Առաքելական Մայր Աթոռ Ս. Լուսավորչի, վերարծարծելու անպարան կանթեղն անոր մշտավառ Օծումը երեքկին՝ ամետարանությանն։

...Հստակ և անսեթևեթ են, արդարև, սույն կոնդակին խոսքերը՝ հայրական և եղբայրական, հայրապետական-շնորհալիական շունչով ու շուքով ալ հեղինակավորված։ Եվ նաև առաքելական, զի Իր հորդորները զնոտիր անօթ և մեծ առաքյալ Պողոսի գրչեն կառնեն իրենց թելադրանքն ու շեշտը, խոնարհ ու խիստ միանգամայն, Իր խղճմտանքին վկայությամբ ճշմարիտ։

Հովվապետ մըն է, որ ունի սրինգ և փող, որոնցմով լսելի կընա Իր դաշն ձայնն ու ղեկավարությունը սաստը Իր հովվակիցներուն, կատարյալ գիտակցությամբ Իր պաշտոնին ծանր պատասխանատվության։ Հովվակիցներուն՝ ամեն աստիճանի, բոլոր Տիմոթեոսներուն, որոնք կոչված են ոդալարուտ վայրերու մեջ հանգստացնելու և հանդարտ ջրերու մոտ անուշանելու իրենց հոտը՝ բանականությամբ հագած պատկերն Աստուծու։ Հովվակիցներուն, որոնց մեջ պարտի ապրիլ ու գործել «Հոգևորականը», բարձրագույն և ազնվագույն տեսիլի մը շողերուն առաջնորդությամբ։

«Ալեծփանք մը կաս, ակնարկեցինք, Հայրապետին սիրտ ծովուն մեջ, ի տես նավաբեկյալներու։ Դառն վիշտի կոտտումներով և թեկուզներով խռովված։ Հասկնալի՞... Եվ արդարանալի՞։ Իր արթուն աչքին առջև չե՞ն հոգիի ահավոր դատարկումները, իրենց գրասանակները լայնցնող ու զգեստի քղանցքները երկայնցնող, ընթրիքներու մեջ «հառաջագահ», ժողովարաններու մեջ «նախաթոռ» ըլլալ սիրող, հրապարակներու մեջ ողջունվիլ և մարդոցմե «Ռաբբի, Ռաբբի» կոչվիլ ուզող «հոգևորականներ»-ու մեջ։ Ամեն աստիճանի, ամեն աստիճանի։ Պարապություն մը փգացած հպարտությամբ՝ և ունայնամտությամբ, և ասոնց ծնունդ ամեն մեղքերով կոնդակին մեջ մատնանշված։

Հայաստանյաց եկեղեցվո «նավուղիղը», դեգերելով խորտակված նավերու հանդեպ, ինչպե՞ս լողալ, «ձեռն ի ծնոտի դնելով» զարտասվաց գետերը չիջեցնե, և հուզված ծովուն վրա ծփացող բեկորներուն, իբր գանակոր խոդխոդվածներ»-ու դեմ կանգնած, ինչպես չհեծե «ողորմագին թախծանքով։ Ո՞վ պիտի կրնար, Նարեկացի լափ, տալ հրաշալի պատկերը միմանալի գոյության այս ջախջախված տապանը-ին, հոգևորեն դատարկված ու աղարտված տա-

պանին։ Այս հոգեկան խոռվքն ու տառապանքն են, որ ալեկոծեր են ղգալուն սիրտը մեր Հայրապետ-Նավուղիին։ «Շատ դատնացած էինք և չկրցանք չգրելը»,— կհայտնե Իր մեկ նամակին մեջ, առնչութեամբ Իր այս կոնդակին։ Եվ ավելին ալ կըսե, կարծես խղճահարելով— իզո՞ւր— թե «Արդյոք շատ խիստ էին Իր խոսքերը։ Մենք կհավատանք Իր նարեկացիական սրտի «ճենճերումը»-նեռուն, տխուր ու իրական պատկերին առջև հոգեկան այս նավարեկութեանց հոգևորական դատուն մեջ ընդհանրապես։

Շունչ մը կա այս կոնդակին մեջ, այն «Ընդճանրական»-են՝ որ Շնորհալիին է։ Պիտի կարդացվի այս «ընդհանրական»-ը, մոտ ատենն, «Շողակաթ»-ի մեջ, ե դարու Ոսկիեն զանակ մ'առած շնորհալիական արձաթահյուս բարբառով և այժմյան լեզվի վերածումով միանգամայն։ Տխուր է խորհիլ և հաստատել, թե ԺԲ դալում Հռոմկլայի ոռձերու և կարիճներու բերդ-ին մեջ՝ նժդեհացած ծերունազարդ Հայրապետեն մինչև Ի դարուս Իր սեփական Լուսախորանի Աթոռին վրա բազմած մեր երիտասարդ Հայրապետը, նույն հոգեխոռվքն ու մտահոգությունն ունին հոգևորականության մեջ երևան եկած տխուր երևույթներու մասին, երևույթներ, ուր «այս աշխարհը կբռնատիրե հոգիին վրա նյութի բիրտ կապանքներով, աստվածադրոշմ նկարագիրը մարդուն,— պահանջելի և հազվագյուտ վկայականը հոգևորական կոչումին։

«Ոչինչ ունենալ և ամեն ինչ ունենալ։ Աղքատ են բոլոր անոնք, որ չեն ըմբռներ խորհրդածելի ճշմարտությունն առաքելագրատ այս հակադրության։ «Ամենայն ինչ»-ը արտաքին պերճանք մը կամ ճոխություն մը չէ, ոչ ալ փայլ մը կամ փառք մըն է սին։ «Ծածկված, ներքին գանձ» մըն է այն; ոգեկան իրավ արժեքներու հարստություն մը, որ որքան քաջնվի ու բաշխվի՝ այնքան կառատանա։ Զի տալը առնել է և աղքատանալը՝ հարստանալ։ «Ոչինչ»-ը անձին գանձումն է նյութական առավելությանց, հորանալն ու հափրանալն է այլամերժ անձին, անչափ և անսահման, անմիտին խղճական շտեմարանումն է «բաղում բարությանց»՝ զորս գիշեր մ'իսկ կարելի չըլլար վայելել. չէ որ «զաղափաղփուն են հնարագիտությունք մեր», ըստ Իմաստունին, և «ամենայն գործն զեղծ և զաղփաղփուն՝ ի կործանումն դարձուցանէ», ըստ Ոսկեբերանի։ Դարանակալ մահը կա, որ կուլ պիտի տա այսպես համբարված բոլոր բարիքները, վերածելով զանոնք որդի և փոշիի։ Կա, սակայն, նաև «Աստուծով մեծանալը», «մեծանալ գործով բարությանց», «գանձել անձանց հիմն բարի ի հանդերձեալսն», ձեռք բերելու համար «ճշմարիտ կեանք»-ը։ Ահա թե ինչպես կարելի է «ոչինչ ունենալ» և «ամեն բան ունենալ»։ Սրբազնագույն Հայրապետը իրավունքով կհիշեցնե մեզ ավետարանաշունչ այս ճշմարտությունը։ Եվ ի՞նչ անփոխանակելի այս հարստությունը, որմե զրկված են «բազում տարիներու համար բազում ինչս ունենալ կարծող անմիտները։ Եվ որքան ողբալի, այս անմիտներու շարքին մեջ տեսնել, փրնեց հոգևոր կոչման բարձրության վրա ըլլալե հետո։ մեր հոգևորականներեն շատերը։ Սուրբ նախանձախնդրության զայրույթը նեղված Իր կուրծքին տակ, դեռ կուսապ է, զուսապ մեր Հայրապետին լեզուն, ձաղկելու համար այսպիսի անմիտները և ուղղության հրավիրելու զանոնք։

Ցնցվինք, ցնցվինք բոլորս ալ և ականջ տանք Հովվապետ-Ավետարանչի ձայնին և կոչին։ Ըլլանք «օրինակ հավատացյալներուն՝ խոսքով, վարքով, սիրով, հավատքով և սրբությամբ», որպեսզի մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի շնորհին հետ, մեր Հայրապետին օրհնությունն ալ գա մեր վրա։

Եվ Դո», շնորհազարդ Ս. Հայրապետ Ամենայն Հայոց և միակ տեսանելի և օծյալ Գրիգոր Հայաստանյաց Եկեղեցվո միակ Մարմնույն, մի՛ խղճահարիր սիրելի քաղցրությամբը թաթաղուն լեզվիդ խստությանը համար։ Ան բուժիչ է։ Շնորհալին Քեզ քաջալերե։

«Աղբիւր կենաց և փրկութեան մեռոյ,
Հոգի Հօր և Որդւոյ...
Շնորհազարդ պայծառացո՝ զգաւազան
իշխանութեան մեռոյ Հայրապետին,
Զի օրհնեսցուք զՔեզ, Տէր, այժմ և
յաւիտեան»։
(ՇԱՐԱԿԱՆ)

ՔԱՐՈԶ

ՍԱՀԱԿ ԱՐՔԵՊԻՍԿ. ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԳՐԻՍՏՈՍԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԸ

«Հաստատում եղեք աշխարհի և հավերժության փառքում»

Ազգերի մշակույթի և կրոնական կյանքի պատմության և հավատալիքների մեջ, մեծ նշանակություն է ունեցել սրբազան լեռների խորհուրդը։

«Ամենաուած խօսեցաւ ի գարձանց, լուսարուք բնակիչք երկրի»։

Օլիմպոս, Սինա, Հիմալայա և այլ լեռների անունները սերտորեն կապված են եղել տվյալ ժողովուրդների պատմության և կրոնական հավատալիքների հետ։

Հայ ժողովրդի պատմությունը սկիզբ է առել աստվածաշնչական Արարատ լեռան լանջերի վրա և Արարատ լեռը՝ իր նվիրական անունով ու խորհրդով, իշխել է հայ ժողովրդի ողջ պատմության վրա։ Մեր հին հավատալիքների համաձայն, Արարատը խտացումն է եղել մեր ժողովրդի պատմության և խորհրդանշանը. մեր տոկունության, մեր ազատատենչ իղձերի, պայքարի և հաղթանակի։

«Համբարձի զալչ իմ ի լերինս, ուստի եկեսցէ ինձ օգնութիւն»։

Քրիստոնեական կրոնի սրբազան պատգամները, բարոյական սկզբունքների վեհությունը և նոր կյանքի քարոզը նմանապես հնչեցին լեռնից Գալիլիայում՝ Երանության լեռան բարձունքից։ Քրիստոս իր աստվածությունը առաջին անգամ ցույց տվեց աշակերտներին Թաբոր լեռան բարձունքներում՝ «ի սուրբ լերինն»։ Նա Իր արյունը թափեց Գողգոթայի բարձունքում և հարությունից հետո դարձյալ «ի Գալիլիա ի լեառնն ժամադիր եղև նոցա»։

Եվ այսօր, Համբարձման օրը, Զիթենյաց լեռան կատարից հրաժեշտ տալով Իր աշակերտներին, փակեց Իր երկրավոր կյանքի վերջին էջը։

«Որքա՜ն գեղեցիկ են ոտքերը Նրա, որ ավետարանում է լեռների վրա և խաղաղություն է քարոզում»։

Մեր Տերը Իր երկրավոր կյանքի գեղեցկագույն օրերը ապրեց լեռների բարձունքներում։ Նա սիրում էր առանձնանալ լեռների լռության մեջ, գարձրանալ լեռների վրա, է՛լ ավելի մոտ լինելու համար երկնքին, Աստուծուն։

Ինչքա՞ն թելադրիչ ու օգտակար է գաղափարի, նվիրման մեծ մարդկանց համար Քրիստոսի այս որինակը։ Առանձնանալ, լինել «աստվածամերձ դրացնությանս» մեջ երկընքի հետ, բարձրանալ՝ կյանքը ալեկոծող կրքերից, թշնամանքներից, հուսահատեցնող պայմաններից ու բացվել երկնքից իջնող մխիթարության ձայնին, որ մարդկանց մղում է նորից դեպի կյանք, դեպի աշխատանք, դեպի պարտականություն։ Մեծ հոգիները, մեծ տեսանողները հասունացել ու կազմակերպվել են առանձնության մեջ, Աստուծո հետ դեմ առ դեմ խոսակցության ընթացքում, լեռների կատարներում։ Հարկ է բարձրանալ միշտ դեպի վեր, դեպի բարձունքները, Աստուծուն որոնելու գերագույն ճշմարտության հասնելու համար, բարձրանալ մտքով, հոգու թևերով, ժամանակի և միջոցի կաշկանդող ուժերից վեր։ Սրբազան լեռները հանդիսացել են Աստուծո և մարդու, երկրի և երկնքի հանդիպման վայր։

Եկե՛ք, հավատացյալ եղբայրնե՛ր և քույրե՛ր, մեր հավատի ուժով ու հոգու թևերով թռչե՛նք ու Համբարձման այս առավոտյան բարձրանա՛նք Ձիթենյաց սարի վրա, ականատես լինելու համար Քրիստոսի երկրավոր կյանքի վերջին ու սրտառուչ դրվագին, երբ նա «հաստատիր եղև աշխարհի և համբարձաւ փառօքս»։

Ս. Հարության մեծ ու պատմական դեպքից անցել էին քառասուն օրեր, որոնց ընթացքում հաճախ հարուցյալ Տերը, խորհրդավոր՝ բայց միշտ մարդկային կերպարանքի տակ բազմիցս երևաց Իր ահաբեկված և վշտից հուսահատված աշակերտներին, որոց յանդիման կացոյց զինքն կենդանի յետ շարչարանացն իւրոց ի բազում ապուեստս, յաւուրս քառասուն Երևել նոցա», խոսեց նրանց հետ «վասն արքայութեան երկնից», քաջալերեց, նրանց առաջ մի անգամ ևս գծեց առաքելական ծանր բայց անհրաժեշտ քարոզչության և գործունեության ընդարձակ շրջանակը՝ «Գնացէ՛ք, աշակերտեցէ՛ք զամենայն հեթանոսսս», բացատրեց ու պարզաբանեց Ս. Գրոց մարգարեական կանխասացությունները, նրանց վերահաստատեց իրենց առաքելական կոչման ու հավատի մեջ և դի հաղորդել ընդ նոսա հացի, պատուէր տայր նոցա յԵրուսաղեմէ մի մեկնել, այլ սպասել աւետեացն Հօրս։ Հրաժեշտի հուզիչ ու տնմիջական, անկեղծ խոսքեր ու խորհրդածություններ էին սրանք, խորապես մարդկային, ուղղված առաքյալներին, որոնք քրիստոնեության լույսը պետք է տանեին աշխարհին՝ նահատակության, արյան, կրակի միջով։ Մեծ Վարդապետը հեռանում է նրանցից՝ բաժանվում է յուրայիններից ու թեև «մարմնով հեռանում է առհավետ, բայց նրա հոգու պատկերը մնում է Իր աշակերտների սրտի խորքում, որպես ներշնչման, հույսի և քաջալերության մշտական մի զորություն»։

Քրիստոսի երկրավոր կյանքի վերջին րոպեներն են, Օրը հինգշաբթի. մի պայծառ առավոտ։ Վերջին անգամ լինելով շրջապատված Իր առաքելական խմբով, Հիսուս դուրս է գալիս Վերջին ընթրիքի՝ Վերնատան շենքից, պնցնելով Կենտրոնի ձորը, Գեթսեմանիի պարտեզի կողքով, բարձրանում է Ձիթենյաց լեռը։ Նա ծանոթ է այդ ճանապարհին։ Հաճախ է բարձրացել այնտեղ՝ աղոթելու և առանձնանալու համար։ Առաքյալները չէին իսկ կասկածում, որ այդ վերջին անգամն է, որ բարձրանում են Հիսուսի հետ այդ մտերիմ արահետներով։ Արդեն հասել են բարձունքը։ Ահա Երուսաղեմը, ահա Սողոմոնյան տաճարը, Նրանց աչքերի առաջ փռվել են հայրենի քաղաքն ու գյուղերը, մինչև Հորդանան ու Մեռյալ ծով։ Առաքյալների շրթները գոհաբանական սաղմոսներ են մրմնջում։ «Յովհաննէս մկրտեաց ի ջուր, այլ դուք մկրտիցիք ի Հոգին Սուրբ, ոչ յետ բազում ինչ աւուրցս այսոցիկ... այլ առջիք զօրութիւն ի հասանել Հոգւոյն Սրբոյ ի վերայ ձեր և եղիջիք ինձ վկայք յԵրուսաղէմ, մինչև ի ծագս երկրի»։ Ապա Հիսուս ձեռքերը բարձրացնում է դեպի երկինք, օրհնում բոլորին և այդ դիրքի մեջ հուշիկ բարձրանում դեպի երկինք, և ապա ինչպես պայծառակերպության առավոտը՝ ամպն կալաւ զնա յաչաց նոցա։ Աշակերտները հիացած, ապշած, կանգնել են քարացած իրենց զարմանքի մեջ, երբ ճերմակներ հագած երկու մարդիկ ցնցում են նրանց.

— Ո՞վ գալիլիացիներ, ինչո՞ւ զարմացած նայում եք դեպի երկինք, այն Հիսուսը, որ

համբարձավ, դարձյալ կգա ձեզ մոտ նույն փառքով, ինչպես Նրան տեսաք երկինք համբառնալիս։

Քրիստոս համբարձել էր երկինք։

Առաքյալները, տխրագգաց ուրախությամբ, վերադարձան Երուսաղեմ, որովհետև ամեն մի բաժանում իր մեջ ունի իր տխրությունն ու վիշտը։ Բայց իրապես երկինքը այնքան մոտ ու շոշափելի չի եղել երբեք առաքյալների սրտին, ինչպես այժմ, Քրիստոսի համբարձումից հետո։ Նրանց սրտում, հոգիներում, ամբողջ էության մեջ հնչում է լուսավոր ուրախությամբ, Փրկչի վերջին ու մեծագույն խոստումներից մեկը՝ «Ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչև ի կատարած աշխարհիս»։

Հիսուս համբարձավ «փառօք յերկինս», բայց նա ներկա է առաքյալների սրտի ու հոգու մեջ, ներկա է նրանց խոհերի ու խոսքերի մեջ, նա ներկա է աշխարհում ու մարդկության մեջ՝ որին նա ուզեց փրկել, նա ներկա է Իր հիմնած եկեղեցու մեջ, ու ներկա կլինի բոլոր հավիտյաններում։ Քրիստոս Իր համբարձումից հետո ևս ավելի ամուր կապերով է կապված Իր առաքյալների և եկեղեցու հետ, նա է նրանց զորագյուխը, հրամանատարը. նրա անունով առաքյալները պիտի գրոհեն հեթանոսական խավարի և նրա ուժերի դեմ։ «Ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչև ի կատարած աշխարհիս»։ Քրիստոս Իր եկեղեցու հետ է եղել միշտ ու կլինի նրա և՛ խաղաղ օրերին և՛ տագնապի ժամերին։

Արդարև Քրիստոս «հաւատարիմ եղև աշխարհի և համբարձաւ փառօք», ու մի օր կգա նորից, զօրութեամբ և փառօք բազմօք։



ԱՍՏՎԱԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

ՄԱՐԴԱՐԷՈՒԹԻՒՆ ԵՍԱՅԵԱՅ

Իսկ այս ո՞վ է որ գիմեալ գայ յԵդովմայ, կարմրուրիւն ծորձոց իւրոց ի Բոսորայ, գեղեցիկ պատմուճանաւ և բուռն զօրութեամբ: Ես խօսիմ զարդարուրիւն և իրաւունս փրկութեան:

Վասն է՞ր կարմիր են ծորձք քո, և հանդերձք իբրև ճնծանահարի, լիոյ ճնծանի կոխելոյ:

Հնծան հարի միայն, և ի հեթանոսաց ոչ ոք էր ընդ իս. կոխեցի զնոսա սրտմտութեամբ և հմլեցի զնոսա բարկութեամբ և իջուցի յերկիր, և զամենայն հանդերձս իմ բարձեցի. Զի հասեալ էր ի վերայ նոցա օր հատուցման, և ամ փրկութեան, եկեալ հասեալ: Եւ հայեցայ՝ և ոչ ոք էր որ օգնէր, զմտաւ ածի, և ոչ ոք էր որ ի բիկունս հասանէր. փրկեաց զնոսա բազուկ իմ, և սրտմտութիւն իմ միայն զդէմ կայաւ. կոխեցի զնոսա բարկութեամբ իմով, և իջուցի զնոսա յերկիր:

(ԳԼՈՒԽ ԿԳ, 1—6)

ՍԱՂՄՈՍ

Համբարձաւ Աստուած օրհնութեամբ, և Տէր մեր ձայնիւ փողոյ:

Ծափս հարէք, ամենայն հեթանոսք, աղաղակեցէք առ Աստուած ի ձայն ցնծութեան: Տէր բարձրեալ և անարկու, Թագաւոր մեծ ի վերայ ամենայն երկրի: Հնազանդ արար զժողովուրդս ընդ մեզ, և զհեթանոսս ի ներքոյ ոտից մերոց: Ընտրեաց զմեզ իւր ի ժառանգութիւն, զեղեցկութեանցն Յակոբայ զոր և սիրեաց: Համբարձաւ Աստուած օրհնութեամբ և Տէր մեր ձայնիւ փողոյ: Սաղմոս ասացէք Աստուծոյ մերում, սաղմոս ասացէք Թագաւորին մերում, սաղմոս ասացէք: Թագաւոր մեծ ի վերայ ամենայն երկրի Աստուած է, սաղմոս ասացէք նմա իմաստութեամբ: Թագաւորեաց Աստուած ի վերայ հեթանոսաց, Աստուած նստաւ յաթոռ սրբութեան իւրոյ: Իշխանք ժողովրդոց ժողովեցան առ Աստուած Աբրահամու, զի Աստուծոյ զօրութիւնք յերկրէ յոյժ համբարձան:

(ՍԱՂՄՈՍ ԽԷ (ԽԷ), 2—10)

ԳԻՐՔ ԱՌԱՔԵԼՈՑ

Զբանն առաջին զոր արարի վասն ամենայնի, ո՛ Թէոփիլէ, զոր սկսաւ Յիսուս առնել և ուսուցանել, Մինչև յօրն պատուիրելոյ առաքելոցն ի Հոգւոյն Սրբոյ՝ զորս ընտրեացն, և վերացաւ. Որոց յանդիման կացոյց զԻնքն կենդանի յետ չարչարանացն իւրոց և ի բազում արուեստս յաւուրս քառասուն երևել նոցա, և ասել վասն արքայութեանն Աստուծոյ: Եւ ի հաղորդել ընդ նոսա հացի՝ պատուէր տայր նոցա յԵրուսաղեմէ մի՛ մեկնել, այլ սպասել աւետեացն Հօր զոր լուարուքն յԻնէն: Զի Յովհաննէս մկրտեաց ի ջուր, այլ դուք մկրտիցիք ի Հոգին Սուրբ, ոչ յետ բազում ինչ աւուրցս այսոցիկ: Եւ նոքա մատուցեալ հարցանէին զնա և ասէին, Տէր, եթէ ի ժամանակի՞ ասա յայսմիկ հաստատելոց իցես զարքայութիւն Իսրայելի: Ասէ զնոսա, Ոչ է ձեզ գիտել զժամս և զժամանակս, զոր Հայր եդ յիւրում իշխանութեան: Այլ առցիք զօրութիւն ի հասանել Հոգւոյն Սրբոյ ի վերայ ձեր. և եղիցիք Ինձ վկայք յԵրուսաղէմ և յամենայն Հրէաստանի և ի Սամարիա և մինչև ի ծագս երկրի: Եւ զայս իբրև ասաց, մինչդեռ հայէին նոքա, վերացաւ. և ամպն կալաւ զնա յաչաց նոցա: Եւ մինչդեռ պշուցեալ հայէին ընդ երկինս երթալոյ նորա, և անհասսիկ արք երկու երևեցան նոցա ի հանդերձս սպիտակս, Որք և ասացին, Արք Գալիլեացիք, զի՞ կայք հայեցեալ ընդ երկինս. այս Յիսուս որ վերացաւն ի ձէնջ յերկինս՝ սոյնպէս եկեսցէ զոր օրինակ տեսէք զնա երթեալ յերկինս: Ապա դարձան յԵրուսաղէմ յանուանեալ լեռնէն Զիթենեաց, որ է մերձ յԵրուսաղէմ ըստ շաբաթուն ճանապարհի: Եւ իբրև մտին, ելին ի Վերնատունն ուր վաճէին իսկ էին, Պետրոս և Յակովբոս, Յովհաննէս և Անդրէաս, Փիլիպպոս և Թովմաս, Բարթողիմէոս և Մատթէոս, Յակովբոս Ալփեան և Շմաւոն Նախանձայոյզ և Յուդա Յակովբեան: Սոքա ամենեքեան էին հանապազորդեալ միաբան յաղօթս հանդերձ կանանաւքն և Մարիամաւ Մարքն Յիսուսի և եղբարքն նորա:

(ԳԼՈՒԽ Ա, 1—14)

ԾԱՂԿԱՔԱՂ ՇԱՐԱԿՆՈՑԻՑ

ՇԱՐԱԿԱՆ ՀԱՄԲԱՐՁՄԱՆ

Համբարձաւ Տէրն մեր յերկինս
Ասելով աշակերտացն՝
Նստարուք ի Հաղարիդ Երուսաղէմ,
Մինչև զզենուցուք զօրութիւն ի դարձանց:

Միաբանեալ սուրբ առաքելքն,
Միախուռն և միտկրօն,
Միաբան նստէին ի սուրբ Վերնատանն,
Եւ ակն ունէին գալստեան Սուրբ Հոգւոյն:

Յանկարծակի եհաս
Ի նմանութիւն լուսոյ փայլման,
Եւ եկեալ բնակեցաւ ի սուրբ առաքելսն,
Մինչդեռ նստէին ի սուրբ Վերնատանն:

Համբարձաւ Տէրն մեր Քրիստոս՝
Օրհնութեամբ ընդ ամպս երկնից,
Եւ առաքելոցն երկրպագեալ դարձան յԵրուսաղէմ,
Միաբանութեամբ վեր առաքէին զաղօթս:

Մտեալ ի յերկինս բիւրաւոր զօրք
Բազմութեամբ երեշտակաց,
Որք աղաղակէին և ասէին՝
Օրհնեալ եկեալ ի յանունն Տեառն:

Նստեալ ընդ աջմէ ծնողին,
Կատարելով զխոստացեալ պարգևս,
Մխիթարիչ Սուրբ Հոգին գայ առ ձեզ,
Աղբերացուցանել զմեծ զողորմութիւն:

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱՉԳԵՆ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀՈՎՎԱՊԵՏԱԿԱՆ ՍՅԳԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ԵՎ ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԹԵՄԻՆ

Մայիսի 17-ին, ուրբաթ օր, Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը հովվապետական այցելությամբ մեկնեց Նոր-Նախիջևանի և Հյուսիսային Կովկասի թեմը։

Մեկնումից առաջ, առավոտ կանուխ, Մայր Տաճարի զանգակների քաղցր հնչյունների տակ, ամբողջ միաբանության ուղեկցությամբ, Վեհափառ Հայրապետը իջավ Մայր Տաճար աղոթելու, և ապա Իր օրհնությունը տալով Տաճարում ներկա գտնվող միաբանության անդամներին, ուսանողության և հավատացյալ ժողովրդին, մեկնեց Երևանի օդանավակայանը։

Վեհափառ Հայրապետին բարի ճանապարհ մաղթելու համար օդանավակայան էին եկել Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, Մայր Աթոռի ողջ միաբանությունը՝ գերաշնորհ Տ. Սահակ և Տ. Եղնիկ սրբազանների գլխավորությամբ։ Ողջերթի էին եկել նաև մայրաքաղաքի եկեղեցիների քահանայից դասն ու եկեղեցական խորհուրդները, Ճեմարանի տեսչական ու դասախոսական կազմը, վանքի պաշտոնեությունը։

Վեհափառ Հայրապետին ճանապարհելու համար օդանավակայանումն էին նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պ. Հ. Գրիգորյանը, Խորհրդի նախագահի տեղակալ պ. Ս. Հովհաննիսյանը, մամուլի ներկայացուցիչներ և թղթակիցներ։

Ողջերթի սրտառուչ բարեմաղթությունների և ծափերի տակ ինքնաթիռը ժամը 9.30-ին բաժանվում է Մայր Հայրենիքի հողից և ուղղություն է վերցնում դեպի Դոնի-Ռոստով։

Հովվապետական այս ուղևորության ժամանակ Վեհափառ Հայրապետի շքախմբի կազմի մեջ էին Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ գերաշնորհ Տ. Վարդան եպիսկոպոս Տեր-Սահակյանը, Շիրակի թեմի առաջնորդական տեղապահ հոգեշնորհ Տ. Կոմիտաս վարդապետ Տեր-Ստեփանյանը, Վեհափառի գավազանակիր հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Մարգսյանը, բարեշնորհ Պետրոս սարկավագ Բերբերյանը և Մայր Աթոռի դիվանապետ պ. Հայկ Առաքելյանը։

Գարնանային բույրով հագեցած առավոտյան ժամերին ինքնաթիռով ճանապարհորդությունը շատ հաճելի է։ Ինքնաթիռը սավառնում է Արարատյան դաշտի վրայով, հայրենի լեռների վրայով, միշտ դեպի վեր ու միշտ դեպի առաջ։

Երկու ժամ տևող հաճելի թռիչքից հետո ինքնաթիռը վայրէջք է կատարում Վրացական ՍՍՌ-ի գեղեցկագույն վայրերից մեկում՝ Սուխումիում, Հանգստանալուց հետո դարձյալ ինքնաթիռը ճախրում է ամպերից վեր, Սև ծովի ափերով։

Ժամը 1.30-ին ինքնաթիռը իջնում է օդանավակայան, Ռոստովումն ենք արդեն։ Օդանավակայանում հավաքվել է խուռն բազմություն։ Վեհափառ Հայրապետը դիմավորվում է ուրախության խանդավառ ցույցերով։ Ռոստովի հայ գաղութի անունից մի պատգամավորություն, թեմի առաջնորդ

Հոգեշնորհ Տ. Գարեգին ծայրագույն վարդապետ Տեր-Հակոբյանի գլխավորությամբ, բարձրանում է ինքնաթիռ բարի գալուստ մաղթելու Վեհափառ Հայրապետին։ Օդանավակայանում Վեհափառ Հայրապետին դիմավորում են նաև Ռոստովի Ռուս եկեղեցու ներկայացուցիչները, որոնք ծնկի եկած համբուրում են Վեհափառ Հայրապետի Ս. Աչը, ՍՍՌՄ Մինիստրների Սովետին առընթեր Կրոնական դավանանքների խորհրդի Ռոստովի մարզի լիազոր պ. Ա. Տ. Բայկովը, տեղական իշխանությունների և մամուլի ներկայացուցիչները։

Ապա բազմաթիվ ավտոմեքենաների ուղեկցությամբ Վեհափառ Հայրապետը առաջնորդվեց Ռոստովի հայոց եկեղեցին և ընդունվեց եկեղեցու բակում հավաքված հավատացյալների խանդավառ և սրտառուչ բարեմաղթություններով։ «Հրաշափառ»-ի հաղթական հնչյունների տակ Վեհափառ Հայրապետը մտավ Ռոստովի հայոց Ս. Լուսավորիչ եկեղեցին։ Արարողության ավարտումից հետո, հանուն Ռոստովի հայ համայնքի, բարի գալստյան ջերմ խոսքեր արտասանեց թեմի առաջնորդ հոգեշնորհ Տ. Գարեգին ծայրագույն վարդապետ Տեր-Հակոբյանը։ Ռուս Եկեղեցու և հոգևորականության ու հավատացյալների անունից ողջույնի սրտագին խոսք ասաց ռուսաց Մայր եկեղեցու ավագերեց արժանապատիվ Տ. Անատոլի քահանան։ Շատ անկեղծ և սրտագին հնչեցին պ. Ա. Տ. Բայկովի խոսքերը Վեհափառ Հայրապետի Ռոստով այցելության ուրախ առթիվ։

Ռոստովի հայ համայնքի անունից Վեհափառ Հայրապետին ողջունեցին պ. Համազասպ Փողկրողյանը և իրավաբան պ. Դավիթ Բեկալյանը։

Ապա խոսք առավ Վեհափառ Հայրապետը.

«Սիրելի հավատացյալ ժողովո՛ւրդ.

Ուրախ սրտով մեկնեցինք Ս. Էջմիածնից՝ այցելելու համար ձեզ և Նոր-Նախիջևանի և Հյուսիսային Կովկասի թեմի Մեր հավատացյալ որդիներին և Մայր Աթոռի հարազատ Մեր զավակներին, որոնք ապրում են այս հյուրընկալ ափերին։ Բերում ենք ձեր բոլորին սրտագին ողջույններ և օրհնություն հայրապետական։ Հոգեպես մխիթարված ենք լսելով ձեր ներկայացուցիչների խոսքերն ու բարեմաղթությունները, որոնցում արտահայտվում էին ձեր բոլորի արդար մտածումներն ու ազնիվ զգացմունքները Մայր Աթոռի և Ամենայն Հայոց Հայրապետության նկատմամբ։ Այս ուրախ առթիվ նույնքան գոհունակություն է պատճառում Մեզ ներկայությունը Ռոստովի Ռուս Ուղղափառ եկեղեցու ներկայացուցիչների, որոնք այնքան սրտագին խոսքեր ասացին Մեզ։ Նրանք իրենց բարի դեմքով և ժպիտով դարձյալ հաճեցուցին իրենց առաջնորդի՝ գերաշնորհ Տ. Ֆլավիան արքեպիսկոպոսի զգացմունքները, որոնց համար հայտնում ենք Մեր շնորհակալությունները։ Մեր ցանկությունն է այցելել նաև Ռոստովի ռուսաց Մայր եկեղեցին՝ այնտեղ էլ աղոթելու համար Աստուծո, և ողջունելու ռուս ժողովրդին։

Թույլ տվեք նաև ողջունել ու Մեր շնորհակալությունը հայտնել պետական իշխանության ներկայացուցիչ պ. Բայկովին՝ նրա ողջույնի սրտագին խոսքերի համար։ Հույս ունենք, որ ուրիշ առիթներ էլ կունենանք միմյանց հանդիպելու և խոսելու եկեղեցական մեր գործերի մասին։

Շնորհակալություն բոլորին՝ այսօրվա ջերմ ու խանդավառ ընդունելության համար։ Աստված անսասան պահի մեր մեծ Հայրենիքը, և բոլոր ամրապնդվի հայ և ռուս ժողովուրդների և եկեղեցիների բարեկամությունը»։

Այս բոլորին հաջորդում է աջահամբույրը։ Ժողովուրդը, մեծ ու փոքր, սիրով ու երկյուղածությամբ, մոտենում է ի համբույր Վեհափառ Հայրապետի Ս. Աչի՝ Մայր Աթոռի հավերժության և Վեհափառ Հայրապետի կյանքի արեշատության մաղթանքներ մրմնջելով։

Նույն օրը առաջնորդարանում Վեհափառ Հայրապետը բարեհաճում է ընդունել բազմաթիվ պաշտոնական այցելություններ։

***

Շաբաթ, 18-ը մայիսի։ Գարնանային գեղեցիկ օր։ Վեհափառ Հայրապետը ցանկանում է այցելել Ռոստով քաղաքի մերձակա գյուղ հայկական գյուղերը։ Վեհափառ Հայրապետին ուղեկցում են Իր շքախմբի անդամները և այլ պաշտոնական անձնավորություններ։

Ավտոմեքենաներով հասնում ենք Զալտրը գյուղը, ուր բնակվում են 1500 ընտանիքներ և ուր կա գեղեցիկ եկեղեցի Ս. Համբարձում անունով։ Այստեղ քահանայագործում է նորընծա արժանապատիվ Տ. Արսեն քահանա Համամշյանը։

Հեռվից լսվում է եկեղեցու զանգերի զվարթ զողանջը։ Վեհափառ Հայրապետը ընդունվում է խանդավառությամբ և առաջնորդվում եկեղեցի, ուր հավաքվել էր խուռն բազմություն։ Ավանդական հյուրասիրության գեղեցիկ զգացմունքով Վեհափառ Հայրապետին մատուցում են աղ ու հաց։ Վեհափառ Հայրապետը օրհնում է հացն ու

աղը և մաղթում բերքի և հացի առատություն, հորդորելով չմոռանալ նախնյաց սովորությունները, վառ պահել Հայրենիքի և Եկեղեցու սերը։ Եկեղեցում հավաքված բազմությունը արցունքոտ աչքերով լսում է Վեհափառ Հայրապետի պատգամը։ Ամբողջ հոգով ուրախանում է ժողովուրդը, երբ Վեհափառ Հայրապետը հայտնում է, որ Ջալտրրի Ս. Համբարձում եկեղեցին վերանորոգվելու է մոտ ապագայում Մայր Աթոռի միջոցներով։

Դժվարությամբ բաժանվում ենք չալտրցիներից։ Պետք է այցելել նաև ուրիշ հայ գյուղեր, որոնք անհամբեր սպասում են Վեհափառ Հայրապետի շնորհաբեր այցելության։ Ահա մեր աչքի առաջ պարզվում է կանաչների մեջ կորած սքանչելի մի գյուղ՝ Թոփտի, որի կենտրոնում դեպի երկինք է խոյացել հայ ճարտարապետության գեղեցիկ կոթողներից մեկը՝ Ս. Փրկիչ եկեղեցին։ Վերջին պատերազմի և ժամանակի ավերիչ հարվածները իրենց դրոշմը դրել են նաև այս շքեղ եկեղեցու ճարտարապետական կառույցի վրա։ Մենք մեզ զգում ենք կարծես Հայաստանի հարազատ գյուղերից մեկում։ Հայկական ոճիմք, շունչ, հավատ ամեն կողմ։ Բարեպաշտ հայեր կարոտով, սիրով շրջապատել են Վեհափառ Հայրապետին և նրա շքախմբի անդամներին։ Խորապես հուզված այդ բոլորից, խոստում է Վեհափառ Հայրապետը և պատգամում.

«Սիրեցեք ռուս ժողովրդին, որը տվել է ձեզ կյանքի ու ինչքի ապահովություն, բայց մի մոռանաք նաև, որ դուք հայեր եք և Հայաստանյայց Եկեղեցու հարազատ զավակներ։ Միշտ վառ պահեցեք ձեր սրտում Լուսավորչի կանթեղի լույսը, Հայրենիքի սերը, հայ լեզվի և դպրության գուրգուրանքը»։

Այստեղ էլ Վեհափառ Հայրապետը հայտնում է Մայր Աթոռի միջոցներով Ս. Փրկիչ եկեղեցին վերանորոգելու մասին։

Թոփտի գյուղի հոգևոր հովիվն է արժանապատիվ Տ. Կարապետ քահանա Հակոբյանը։

Աջահայրությունից հետո մենք շարունակում ենք մեր ճանապարհը դեպի Մեծ-Սալա հայկական գյուղը։ Ճանապարհը անցնում է ռուսական անծայրածիր դաշտերի միջով։ Ահա վերջապես հեռվից բարձունքի վրա Մեծ-Սալան՝ Ս. Աստվածածին եկեղեցիով։ Դարձյալ աղ ու հացով է դիմավորվում Վեհափառ Հայրապետը և առաջնորդվում եկեղեցի՝ «Ուրախ լեր Սուրբ եկեղեցի» շարականի երգակցությամբ։

Եկեղեցում խոսք է առնում Վեհափառ Հայրապետը և ասում, որ Ինքը եղավ շրջանի բոլոր հայ գյուղերում և հետաքրքրվեց հայ հավատացյալ ժողովրդի կյանքով և նրանց գործերով։ Ապա Վեհափառը վրդովմունք է հայտնում, որ «Աստված պիտի ոգևի Մեզ՝ վերանորոգելու ու բարեզարդելու այս շրջանի բոլոր հայ եկեղեցիները և Մեր բոլոր բարի ցանկությունները պիտի իրագործվեն»։ Վերջում Վեհափառ Հայրապետը սեր և միաբանություն է ցանկանում բոլորին և տալիս Իր սիրո ողջույնն ու հայրապետական օրհնությունը։

Վերադարձի ճանապարհին Վեհափառ Հայրապետն այցելեց նաև Ս. Խաչ վանքը, որի բակում կանգնեցված են մեր ժողովրդի անմահ զավակներից երկուսի՝ Միքայել Նալբանդյանի ու Ռափայել Պատկանյանի հուշարձանները։ Վեհափառ Հայրապետը այցելեց նաև Ռոստովի հայոց գերեզմանատունը և գերեզմանատան եկեղեցին։

***

Շաբաթ երեկոյան Վեհափառ Հայրապետը նախագահեց կիրակամտի ժամերգությունը։ Ժամանակից շատ առաջ արդեն հայ և ռուս հավատացյալների բազմությունը լցրել էր եկեղեցին ու նրա բակը։ Վեհափառ Հայրապետը «Հրաշափառ»-ով առաջնորդվում է եկեղեցի։

Հավարտ ժամասացության, Վեհափառ Հայրապետը քարոզում է.

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ամէն»։

Ողջո՞ւյն ձեզ, սիրելի հավատացյալնե՛ր, սիրո ողջո՞ւյն և հայրապետական օրհնությո՞ւն ձեզ բոլորիդ։ Ողջո՞ւյն և օրհնությո՞ւն նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնից և Հայաստան աշխարհից, ձեր հարազատ հայրերից և եղբայրներից, որոնք ապրում են Արարատյան հողի վրա, Արարատի և Արագածի հավիտենական նայվածքների հովանու տակ։

Սրանից մեկ ու կես տարի առաջ Ս. Էջմիածնում կատարվեց կաթողիկոսական ընտրություն և վերացավ սգի սև քողը Լուսավորչի Աթոռից, և Աստուծո կամքով այդ լուծը ծանրացավ Մեր ուսերի վրա։

Դուք Մեզ ճանաչում էիք նախապես որպես Ռումինիայի հայոց առաջնորդ։ Ավելի քան երկու տարիներ առաջ Մենք առաջին անգամ այցելեցինք Ռոստով և մի կիրակի պատարագեցինք այս սուրբ եկեղեցում։ Մենք լավագույն հիշատակներ ենք պահել այդ այցելությունից։ Այսօր նորից ձեր մեջ ենք գտնվում որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս, որի ուսերին է ծանրանում Հայ եկեղեցու ղեկավարության ծանր պարտականությունը և եկեղեցական բազմատեսակ կարիքներ։ Սակայն վայելելով Սովետական

կառավարության բարյացակամ վերաբերմունքն ու հայ հավատացյալ ժողովրդի աջակցությունը, Աստուծո օգնությամբ և ողորմությամբ պիտի կարողանանք այդ գործը կատարել: Հուսով ենք, որ սիրով սկսված Մեր աստվածահաճո գործը պիտի արդյունավորվի: Պիտի ծաղկի մեր եկեղեցին և նոր հաջողություններ պիտի կարողանանք արձանագրել մեր հոգևոր կյանքի կազմակերպման և զարգացման գործում:

Ինչպես գիտեք, Մեր ընտրությունից հետո անհրաժեշտ համարեցինք այցի նյել ի Սիյուռաս աշխարհի ցրված մեր ժողովրդին և անցյալ տարվա փետրվար, մարտ և ապրիլ ամիսներին այցելեցինք Լիբանան, Եգիպտոս, Իտալիա, Ֆրանսիա, Անգլիա: Մեր այցելած երկրներում ապրում են հարյուր հազարավոր հայեր: Նրանց թիվը ավելի քան մեկ միլիոն է: Սակայն Մենք նրանց կեսին միայն կարողացանք այցելել, և նրանք բոլորը Մեզ ընդունեցին անսահման սիրով և խանդավառությամբ: Նրանց վերաբերմունքի մեջ Մենք կարդացինք նրանց ճշմարիտ հայու հոգին, վասնզի Մեր անձի միջոցով նրանց սերը ուղղվում էր դեպի մեր Մայր Աթոռը, մեր Մայր Հայրենիքը և դեպի բոլոր այն հոգևոր գանձերը, որ կազմում են մեր ժողովրդի ժառանգությունը անցյալից: Ահա այս այցելությունից հետո Մենք Մայր Աթոռ վերադարձանք ավելի մխիթարված, գավառնս և զոտեպնդված, Մեր աշխատանքը շարունակելու համար Ս. Էջմիածնում: Հարմար նկատեցինք այժմ էլ այցելել մեր ներին բեմերը: Այցելեցինք նախ Շիրակի բեմը, իսկ այսօր՝ ձեզ: Պիտի այցելենք նաև Վրաստան և Ադրբեջան և զուցե նաև ուրիշ կենտրոններ, երբ Տերը կամենա:

Մենք ուզում ենք հանդիպել մեր ժողովրդին ամեն տեղ, նրան կապելու համար իր հայրենի ավանդություններին, եկեղեցուն, լեզվին և դպրության, որպեսզի հայ ժողովուրդը լինի «մի հոտ և մի հովիվ», այսինքն մի ամբողջական ժողովուրդ իր Ամենայն Հայոց Հայրապետությամբ: Մենք վստահ ենք, որ դուք Մեզ լավ եք հասկանում, դուք, որ ապրում եք այս հյուրընկալ հողում, ռուս բարի ժողովրդի մեջ և վայելում եք նրա եղբայրական ասպնջականությունը: Սիրեցե՛ք ռուս ժողովրդին, խաղաղությամբ ապրեցեք նրա հետ և ամուր պահեցեք ձեր հայ լինելու գիտակցությունն ու զգացմունքը՝ հայու գիտակցությամբ հավա-

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԱՌԱՋՆՈՐԴՎՈՒՄ Է ՌՈՍՏՈՎԻ ՀԱՅՈՑ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՍԿԶԲՆԱՐԱՆ

տարիմ մնալով ռուս ժողովրդին և Սովետական Մեծ Հայրենիքին:

Դուք պետք է լավ ճանաչեք ձեր պատմությունը, ձեր մեծ նախնիքներին և ապրեք նրանց կյանքի օրինակով:

Այս զգացմունքով օրհնում եմ ձեզ և ցանկանում, որ լինեք հոգով ու մարմնով առողջ. կենսուրախ, ամեն»:

***

Կիրակի, 19-ը մայիսի, «Տօն երեման Սրբոյ Խաչի» Հայրապետական հանդիսավոր սուրբ պատարագ է մատուցում Վեհափառ Հայրապետը Ռոստովի հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում: Սուրբ պատարագը ներդաշնակ ու ապրումներով է հրգում եկեղեցու երգեցիկ խումբը, զեկավարությամբ արժանապատիվ Տ. Գևորգ ավագ քահանա Դարբինյանի: Սուրբ Պատարագին սպասարկում են գերաշնորհ Տ. Վարդան եպիսկոպոս Տեր-Սահակյանը, հոգեշնորհ Տ. Կոմիտաս և Տ. Ծղիշ վարդապետները: Ծովածավալ բազմություն կա եկեղեցում, քանզի Պատարագին ներկա են Ռոստովի Ռուսաց եկեղեցու առաջնորդ Տ. Ցլավիան արքեպիսկոպոսը իր շքախմբով և Կրոնական դավանանքների Ռոստովի մարզի լիազոր պ. Ա. Տ. Բայկովը: «Հայր մեր»-ից առաջ Վեհափառ Հայրապետը քարոզում է.

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, ամէն»:

Սիրելի հավատացյալնե՛ր, մեր աղոթքներում և մեր հոգևոր երգերում հաճախ երգում ենք ու փառաբանում խաչի զորությունը և մխիթարվում ենք նրա համար, որ խաչը, որ անարգանքի նշան էր քրիստոնեությունից առաջ, Քրիստոսի խաչելությունից հետո հանդիսացավ փրկության նշան: Խաչը, որ մինչև Քրիստոս մահվան գործիք էր, Գողգոթայի մեծ զոհաբերությամբ դարձավ կյանքի, անմահության և հույսի աղբյուր ու հաճապարհ բացեց հավայն մարդկության հոգու փրկության: Մենք հավատում ենք Քրիստոսի սուրբ խաչի զորության ու շնորհների: Դրա համար Ս. Խաչի տոնը մեր եկեղեցին կատարում է տարին չորս անգամ: Այսօր Ս. Խաչի երևման տոնն է, որով փառաբանում ենք այն երանելի օրը, երբ Երուսաղեմում Ս. Խաչը օրը ցերեկով երևաց Երուսաղեմի երկնակամարում, ավելի պայծառ փողփողումով քան արևի լույսը, տարածվեց հորիզոնից հորիզոն՝ իբրև խորհուրդը նոր հավատի ճշմարտության և աստվածային զորության:

Խաչի զորությունը տակավ տարածվեց աշխարհի երեսին, քրիստոնեությունը դառնալով ժողովուրդների և պետությունների կրոն:

Սիրելի ժողովո՛ւրդ, մենք Քրիստոսի անունով կոչվում ենք՝ Քրիստոնյաներ և մեր դրոշը Ս. Խաչն է: Ս. Խաչը հոգեկան ուժ է և նա միշտ էլ հաղթող է ընդդեմ թշնամվույն: Քրիստոսի Սկզբնական երբեմն տարացել է և ունեցել անկման շրջաններ, սակայն այն Աստվածը, որ Իր Որդուն ուղարկեց աշխարհ Իր Եկեղեցին հաստատելու համար մարդոց մեջ, և որ Իր սուրբ արյունը թափեց երկրի վրա, այդ նշմարիտ Աստվածը Իր անհերևույթ նախախնամող աչով հսկում է այդ Եկեղեցու վրա, և Ս. Հոգու միջնորդությամբ վերաշինում, ոգեշնչում և ծաղկեցնում է այն:

Մեր Սկեղեցին էլ շատ դժվար օրեր է ապրել իր պատմության ընթացքում: Հաճախ բարբարոս ազգեր քանդել են մեր Սկեղեցին և գերի տարել մեր ժողովրդի զավակներին: Եվ կարծես եղավ մի ժամանակ, երբ սարդիկ մտածում էին, թե ոչ ևս է հայ ժողովուրդը, ոչ ևս է Հայաստանյայց Ս. Սկեղեցին...: Մեր հավատացյալ ժողովուրդը խաչը ուսին բարձրացավ Գողգոթա և խաչվեց բայց չմեռավ, ու սարություն առավ իբրևս Քրիստոսը: Այսօր հաղթական է մեր բազմադարյան Ս. Եկեղեցին:

Այսօր շնորհիվ Սովետական բարեխնամ կառավարության բարյացակամության, մեր Սկեղեցին ոտք է դրել մի նոր շրջանի սեմին՝ վերաշինության ու վերածաղկման սեմին: Ս. Էջմիածինն այսօր ուրախ է, որ իր շուրջը հավաքված են երիտասարդ ու խոստմնալից միաբաններ, որոնք Ամենայն Հայոց Հայրապետի կողքին աշխատում են շինել ու վերանորոգել այն, ինչ քանդվել է դարերի ընթացքում: Բաց է Հոգևոր Ճեմարանը, վերաշինվում են մեր պատմական վանքերը, սկրսած լուսո խորան Մայր Տաճարից: Մենք հավատացած ենք, որ ոչ միայն Մայր Տաճարը, այլ նաև նրա շուրջը գտնվող մյուս եկեղեցիները մոտ ապագայում պիտի վերանորոգվեն ու վերստանան իրենց նախկին փայլը: Մենք պիտի կարողանանք օգնել նաև ձեզ՝ վերանորոգելու համար ձեր թեմի պատմական եկեղեցիները: Մենք վստահ ենք, որ Մեր այս շինարար գործին իր մասնակցությունը պիտի բերի նաև Հայաստանից դուրս գտնվող Մեր սիրելի ժողովուրդը, որովհետև մենք բոլորս կազմում ենք մի ժողովուրդ, մի Սկեղեցի, Ամենայն Հայոց Հայրապետության գլխավորությամբ:

Այս Ս. Սեղանից, ուր պաշտվում է սուրբ և անմահ պատարագ, տալիս ենք ձեզ բոլորիդ հայրապետական օրհնություն: Թող Տեր պարգևի ձեզ առողջություն հոգու և մարմնի, որպեսզի ապրեք խաղաղ ու երջանիկ, հեռու մնալով բոլոր տեսակի փորձանքներից:

Մենք ուրախ ենք և իսկապես մխիթարված, որ ազգիս այս պահին Ռոստովի հայոց Ս. Լուսավորիչ եկեղեցում ներկա է նաև Ռուս Եկեղեցու առաջնորդ ու ներկայացուցիչ Ցլավիան սրբազան արքեպիսկոպոսը իր շքախմբով: Ողջունում ենք նրան քրիստոնեական սիրով, աղոթելով, որ Տերը անսասան պահի Ռուսական Ուղղափառ Ս. եկեղեցին և ծաղկեցնի Ալեքսի Պատրիարքի հովվական գավազանը՝ ի փառս Աստուծո և ռուս հավատացյալ ժողովրդի:

բերությունները և նրանց աշխատանքը հավիտյանս հավիտենից, ամեն»:

Այստեղ պատասխան ճառով հանդես է գալիս Ռոստովի ռուսաց առաջնորդ գերաշնորհ Տ. Ցլավիան սրբազանը.

«Մենք խորապես երջանիկ ենք զգում մեզ, մեր մեջ ունենալով Ամենայն Հայոց Հայրապետ Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա-ին։ Զղացված ենք և երախտագիտ այն սիրալիր խոսքերի համար, որ նա ասեց մեզ։ Մենք պիտի թարգմանը հանդիսանանք Նորին

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՄԲ ՌՈՍՏՈՎԻ ՀԱՅՈՑ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱԿՈՒՄ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ է ԿԱՏԱՐՎՈՒՄ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԶՈՀՎԱԾ ՄԱՐՏԻՐՆԵՐԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՍՈՒԱՋ

Ռուս Պրավոսլավ Եկեղեցու հետ մեր եկեղեցու հարաբերությունը երկար տարիների պատմություն ունի: Այսօր մենք ավելի սիրով ենք միմյանց հետ քան երբևէ և ճշմարիտ գործակիցներ Քրիստոսի՝ սիրո և խաղաղության Ավետարանը քարոզելու նվիրական ճանապարհի վրա:

Ողջույնի և եղբայրական սիրո խոսք ունենք այս հանդիսավոր առիթով մանավանդ Մոսկվայի և համայն Ռուսիոց Պատրիարք Նորին Սրբություն Ալեքսիին, որի հետ ունենք անձնական բարի ծանոթություն: Թող Աստված օրհնի մեր երկու եկեղեցիների բարի հարաբերությունները և նրանց աշխատանքը հավիտյանս հավիտենից, ամեն»:

Սրբություն Ալեքսի Պատրիարքի առաջ բոլոր այն խոսքերի, ինչ արտասանեց Նրա հասցեին Ամենայն Հայոց Հայրապետը։

Սուրբ պատարագի վերջում շատեր հաղորդվում են Վեհափառ Հայրապետի ձեռքով։ Ապա Վեհափառ Հայրապետի հանդիսավորությամբ, եկեղեցու բակում, Հայրենական պատերազմում զոհված հերոսների հուշարձանի առաջ կատարվում է հոգեհանգստյան պաշտոն։ Վեհափառ Հայրապետն օրհնում է խրնկելի հիշատակը Հայրենիքի համար անձնուրացորեն զոհված հայ և ռուս մարտիկների։ Ամեն կողմից լսվում են հեկեկանքի ձայներ։ Ամբողջ ժողովուրդը ազոթում է։

Սրբություն Ալեքսի Պատրիարքի առաջ բոլոր այն խոսքերի, ինչ արտասանեց Նրա հասցեին Ամենայն Հայոց Հայրապետը։

Սուրբ պատարագից հետո Քեմական խորհուրդը, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, կազմակերպել էր մեծ ճաշկերույթ, Ռոստովի «Մոսկովյան» հյուրանոցի մեծ դահլիճում։ Ընդունելության հրավիրվել էին բազմաթիվ եկեղեցական և պետական անձնավորություններ։

Առաջին բաժակը առաջարկվում է Վեհափառ Հայրապետի կենացը։ Երկրորդ բաժակը Վեհափառ Հայրապետն առաջարկում է Մոսկվայի և համայն Ռուսիո Պատրիարք Նորին Սրբություն Ալեքսիի կենացը։ Ապա կենացներ են առաջարկվում Սովետական կառավարության՝ ի դեմս Կրոնական դավանանքների Ռոստովի մարզի լիազոր պ. Բայկովի, որը իր շնորհակալությունն է հայտնում եղած ուշադրության համար։

Ճաշկերույթը ուրախ տրամադրությամբ շարունակվում է ավելի քան երկու ժամ, որի ընթացքում ներկաները մեծ հաճույքով լսում են հոգեշնորհ Տ. Կոմիտաս վարդապետի, շնորհունակ Պետրոս սարկավագի և Ռոստովի հայ եկեղեցու երգեցիկ խմբի մենակատարների կատարմամբ հայկական ու հայրենասիրական երգեր։ Ճաշկերույթը փակվում է «Էջ Միածին» ի Հօրէ» շարականով, որը երգում են ներկաները մեծ հուզմունքով։

***

Երկուշաբթի, 20-ը մայիսի, ժամը 11-ին Վեհափառ Հայրապետը պաշտոնական այցելություն տվեց Ռոստովի քաղաքային Սովետի նախագահ պ. Վասիլի Դիմիտրովիչ Սուկիմենկոյին, արժանանալով ջերմ ընդունելության։ Վեհափառ Հայրապետին ուղեկցում էր Իր շքախումբը։ Ընդունելության ժամանակ Վեհափառ Հայրապետը ողջունելով պ. նախագահին, ասաց.

«Որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս առաջին անգամն է, որ այցելում ենք Ռոստով քաղաք, ծանոթանալու համար մեր եկեղեցիներին ու ժողովրդին։ Շատ ուրախ ենք, որ որպես տեղական իշխանության ներկայացուցիչ, Մեզ դիմավորեց և քաղաքս մաղթեց պ. Բայկովը։ Ցանկացանք այցելել Ձեզ որպես Կաթողիկոս, բերելու համար Մեր հայրապետական ողջույնները Ձեզ և Ձեր միջոցով այս հերոս քաղաքին և նրա շինարար բնակիչներին։

Ռոստովը ոչ միայն գեղեցիկ քաղաք է, այլ նաև հերոս քաղաք։ Մենք, որպես Թուխարեստի հայոց երբեմնի առաջնորդական տեղապահ, պատերազմի ընթացքում սրտի ուրախությունով էինք հետևում այս քաղաքի դիմադրություններին, երբ այն ձեռքից ձեռք էր անցնում, և մտածում էինք ասելով, թե ի՞նչ մնաց այս քաղաքից։ Այսօր իրոք որ երջանիկ ենք՝ որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս և որպես հայ մարդ՝ տեսնելով այս քաղաքը ամբողջապես վերաշինված և այսքան բարեզարդ ու շքեղ։

Հայրենական պատերազմի հերոսների հիշատակը հարգելու լավագույն կերպն է այն հերոսական աշխատանքը, որով ժողովուրդը վերաշինել է իր հանդված քաղաքները, առավել ծաղկեցնելով նրանք։

Աղոթում ենք առ Աստված, որ այլևս երբեք պատերազմներ չմոտենան Սովետական Հայրենիքի սահմաններին և այս վերածնված քաղաքին, որի գլուխն է Դուք, հարգելի պ. Սուլիմենկո, և որ այս քաղաքում բնակվող քաղաքացիները լինեն երջանիկ ու խաղաղ։

Մենք վստահ ենք, թե ռուս եղբայրների կողքին իրենց քաղաքացիական պարտականությունը կատարում են նաև մեր հայ ժողովրդի զավակները, որոնք բնակվում են այս քարի և բերի ափերին, ի շինություն և ի բարգավաճում մեծ Ռոստովի։

Կեցցե՛ Ռոստով քաղաքը, հաջողություն Ձեզ և Ձեզ հետ աշխատող ձեռքերին»։

Վեհափառ Հայրապետի այս սրտառուչ խոսքերին պատասխանեց պ. նախագահը ասելով.

«Ես խորին շնորհակալություն եմ հայտնում Ձեր ուշադրության համար և Ձեր այցելությունը մեզ մոտ քող բարի գալուստ լինի։ Պատերազմի ընթացքում մեր քաղաքը 80%-ով կործանվեց. բոլոր կենսական կենտրոնները ավերվել էին, քաղաքի բնակչությունը չափազանց մեծ դժվարությունների առաջ էր կանգնած։ Վերջնական ազատագրումից հետո միայն մեզ հաջողվեց նորոգություններ անել ու վերականգնել այն, ինչ Ձեր աչքերով տեսաք։ Ամբողջ բնակչությունը մի նշանաբան ուներ՝ «Կկառուցենք քեզ, մեր սիրելի քաղաք»։

Ապա պ. նախագահը Վեհափառ Հայրապետին պատմում է Ռոստով քաղաքի շինարարական ծրագրերի, արդյունաբերական և մշակութային կյանքի մասին։

Խոսելով Ռոստովի հայ ազգաբնակչության մասին, պ. Սուլիմենկոն ասում է. «Մենք գոհ ենք հայ քաղաքացիներից և գնահատում ենք նրանց ազնիվ աշխատանքը և հայրենասիրությունը՝ մեր ընդհանուր շահերի ամրապնդման ճանապարհի վրա»։

Վեհափառ Հայրապետը, ընդգծելով ամբողջ հայ ժողովրդի սիրո և հավատարմության զգացմունքները դեպի ռուս մեծ ժողովուրդը և Սովետական Հայրենիքը, վերջացնում է Իր խոսքը ասելով.

«Եվ վստահ եղեմ, սիրելի պ. Սուլիմենկո, որ ինչպես միշտ, նաև այսօր և հավիտյան, փոքրիկ հայ ժողովուրդը ամենաճավատարիմ պահակներից մեկն է և կլինի մեր մեծ Հայրենիքի հարավի սահմանների վրա»:

Հայտնապես հուզված այս խոսքերից, պ. նախագահը խորին շնորհակալություն է հայտնում Վեհափառ Հայրապետին և սրբազին բարեմաղթություններ է անում հայ ժողովրդի և Հայ Եկեղեցու համար, ավելացնելով, որ Ռոստով քաղաքը միշտ սիրով պիտի սպասի Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայորդ այցելություններին, և որ ինք միշտ պատրաստ է ամենայն բարյացակամությամբ իր աջակցությունը բերելու Ռոստովի շրջանում հայ եկեղեցիների և դպրոցների հետ կապված հարցերի բարվոք լուծման համար։

Վեհափառ Հայրապետը ապա հրաժեշտ է առնում Ռոստովի քաղաքային Սովետի պ. նախագահից սիրալիր մթնոլորտում, լավագույն տպավորությունների տակ։

***

Նույն օրը, ցերեկվա ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետը այցելեց Ռոստովի ռուսաց Մայր եկեղեցին, ուր ընդունվեց արտակարգ խանդավառությամբ։ Տաճարի ավագ դռնից մինչև Ս. Սեղան գորգեր ու ծաղիկներ էին փռվել Վեհափառ Հայրապետի ոտքերի առաջ։ Ոտաբոբիկ բազմությունը ջերմորեն դիմավորում է Ամենայն Հայոց Կաթողիկոսին։ Երբ Վեհափառ Հայրապետը մտնում է Տաճար, եկեղեցու երգչախումբը երգում է ցնծագին՝ «Քրիստոս յարեաւ ի մեռելոց», հայերեն լեզվով։

Մայր Տաճարի առաջ ողջույնի և բարի գալստյան սրտագին խոսք ասաց Ռոստովի թեմի ռուսաց առաջնորդ գերապատիվ Տ. Ցլավիան արքեպիսկոպոսը.

«Մեր Տերը ասաց՝ «Սիրեցէք զմիմեանս. և այս սիրո կենդանի ապացույցն ենք տալիս մենք, երկու եկեղեցիների ներկայացուցիչներս, Դուք, որպես Ամենայն Հայոց Սրբազնագույն Կաթողիկոս և ես՝ Ռոստովի թեմի ռուս հավատացյալների առաջնորդ։ Բարի եկաք Դուք մեր տունը, որ Աստուծո տունն է։ Ինչքան ծանոթ է մեզ, երկրորդ անգամն է, որ Ռոստով քաղաքը շնորհ է վայելում ընդունելու Ամենայն Հայոց Կաթողիկոսին։ Առաջին այդ այցելությունը եղել է 1912-ին, երբ երջանկահիշատակ Գևորգ Ե կաթողիկոսն է ժամանել օրհնելու իր ժողովրդին, և այսօր ահա Ձեր շնորհարեր ներկայությունը մեր մեջ։ Մենք սիրում ենք Ձեզ»։

Ցլավիան սրբազանի ջերմ խոսքերին պատասխանում է Վեհափառ Հայրապետը. խորին շնորհակալություն հայտնելով՝ ի դեմս սրբազանի ամբողջ ռուս հոգևորականության և հավատացյալներին, որոնք այնքան սիրալիր և ջերմ ընդունեցին Իրեն իրենց եկեղեցում։ Ապա Վեհափառ Հայրապետը շարունակում է.

«Մենք միշտ սիրով ենք աղոթել Պրավոսլավ եկեղեցիների մեջ, Ռումինիայում և Բուլգարիայում։ Այսօր էլ նույնքան սիրով և երկյուղածությամբ գալիս ենք Մեր աղոթքը անելու Ձեր Ս. եկեղեցու կամարների տակ։ Թող Տերը ռուս ժողովրդին տա երջանիկ ու խաղաղ երեր, թող Տերը է՛լ ավելի պայծառացնի Ձեր եկեղեցին, թող երկար ու առողջ կյանք պարգևի Մեր սիրելի եղբայր նորին Սրբություն Ալեքսի Պատրիարքին, որի հետ Մենք անձամբ ծանոթ ենք ավելի քան տասը տարի։ Թող Տերը ամուր և անսասան պահի Հայ և Ռուս եկեղեցիների եղբայրական համագործակցության ուխտը, օրհնի ռուս և հայ ժողովուրդների անբակտելի միությունը»։

Ապա Վեհափառ Հայրապետը առաջանում է դեպի եկեղեցու Ս. Սեղանը, Իր ոտքերի տակ սփռված ծաղիկների վրայով, և աղոթում է Ս. Աստվածածնի ավագ խորանի առաջ ու ծանոթանում եկեղեցու հոգևոր պաշտոնյաների հետ։ Այդ ուրախ առթիվ որպես հիշատակ Վեհափառ Հայրապետին նվիրվում է Ս. Դիմիտրի Ռոստովսկու սրբանկարը։

Ոքանչելիորեն զարդարված և իսկապես պայծառ ռուսական Մայր եկեղեցուց դուրս գալով, Վեհափառ Հայրապետը ծանոթանում է բակում եղող առաջնորդարանին, ապա գոհ սրտով և լավագույն հիշատակներով հրաժեշտ է առնում Ցլավիան սրբազանից և ռուս հավատացյալ ժողովրդից։

Վեհափառ Հայրապետը, արժանապատիվ Տ. Անատոլի և Տ. Սերգեյ ավագ քահանաների առաջնորդությամբ, այցելում է նաև Ռոստովի ռուսական Բլագովեշչենսկի և Ալեքսանդրյան եկեղեցիները։ Ռուս հոգևորականությունը և հավատացյալները ամենուրեք մեծ սիրով և խանդավառությամբ դիմավորում են Ամենայն Հայոց Կաթողիկոսին։ Ալեքսանդրյան եկեղեցու ավագերեցը, որպես հիշատակ, Վեհափառ Հայրապետին նվիրում է 1956 թվականին Մոսկվայում ռուսերեն լեզվով նոր տպագրված մի Աստվածաշունչ։

Ռոստովի ռուսական եկեղեցիների այցելությունից հետո, Ցլավիան սրբազանը, ի պատիվ Վեհափառ Հայրապետին, կազմակերպել էր ընդունելություն, որն անցավ ջերմ և սրտագին մթնոլորտում։

❊❊❊

Հոյսորդ առավոտ, մայիսի 21-ին, Վեհափառ Հայրապետը հրաժեշտ է առնում Ռոստովից։

Վեհափառ Հայրապետին ճանապարհելու համար Ռոստովի օդանավակայանն էին եկել Ռոստովի հայոց թեմի առաջնորդ հոգեշնորհ Տ. Գարեգին ծայրագույն վարդապետ Տեր-Հակոբյանը, հոգևոր դասը և թեմական խորհրդի անդամները, Ռուս Եկեղեցու ներկայացուցիչ արժանապատիվ Տ. Անատոլի և Տ. Սերգեյ քահանաները և Կրոնական դավանանքների Ռոստովի մարզի լիազոր պ. Ա. Տ. Բայկովը։

Ողջերթի սրտազեղ արտահայտությունների և բարեմաղթությունների մեջ Վեհափառ Հայրապետը օրհնում է բոլորին և բարձրանում թռչնաթիռ։ Շուտով ինքնաթիռը բարձրանում է օդ և ուղղություն վերցնում դեպի մեր Մայր Հայրենիքը։

Երևանի օդանավակայանում Վեհափառ Հայրապետին դիմավորելու էին եկել Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պ. Հ. Գրիգորյանը, խորհրդի նախագահի տեղակալ պ. Ս. Հովհաննիսյանը, Մայր Աթոռի ամբողջ միաբանությունը, մայրաքաղաքի քահանայից դասը և եկեղեցական խորհուրդները, Մայր Աթոռի պաշտոնեությունը, «Էջմիածին» ամսագրի խմբագրությունը։

Ավտոմեքենաների շարանը ուղղվում է դեպի Էջմիածին։ Մայր Տաճարի գանգակների քաղցր ու հարազատ հնչյունների տակ, Վեհափառը առաջնորդվում է դեպի Մայր Տաճար, ուր գոհաբանական աղոթքներ ու մաղթանքներ են կատարվում Վեհափառ Հայրապետի բարեհաջող վերադարձի առթիվ։

Եկեղեցական թափորով Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Վեհարան, ուր «Պահպանիչ»-ով օրհնում է բոլորին։

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ

❊❊❊

Նոր-Նախիջևանի և Հյուսիսային Կովկասի հայոց թեմին հովվապետական այցելություն տալուց հետո, Վեհափառ Հայրապետը հետևյալ շնորհակալական հեռագիրն է հղում Նորին Սրբություն Ալեքսի Պատրիարքին.

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԱԼԵՔՍԻԻՆ

ՄՈՍԿՎԱ

Նոր-Նախիջևանի հայոց թեմին տված հովվապետական Մեր այցելության ժամանակ, Մեզ խորապես հուզեց այն բացառիկ ջերմ ընդունելությունը, որ ցույց տվեց Մեզ Նորին Սրբազնություն Ցլավիան Արքեպիսկոպոսի, ռուս հոգևորականության, ինչպես և ռուս հավատացյալ ժողովրդի կողմից։

Այսպիսի սիրալիր ընդունելությունը Մենք համարում ենք որպես քրիստոնեական եղբայրական սիրո և անկեղծ բարեկամության արտահայտություն՝ Ռուս Ուղղափառ և Հայ Առաքելական Եկեղեցիների, ինչպես նաև ռուս մեծ ժողովրդի և հայ ժողովրդի միջև։

Հնադարյան Ս. Էջմիածնի կամարների տակ աղոթում ենք առ Աստված ի շինություն և ի փառս մեր Եկեղեցիների, համբարձումն մեր ժողովուրդների դարավոր բարեկամության։

Անկեղծ սիրով և լավագույն բարեմաղթություններով,

Ձեր եղբայր ի Քրիստոս՝

ՎԱԶԳԵՆ Ա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՔԱՂՎԱԾՔՆԵՐ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

1957 Թ. ՄԱՅԻՍԻ 5-Ի ՆԻՍՏԻՑ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ նիստում գոհունակությամբ կարդացվեց «Գալուստ Կյուլպենկյանը» հիմնարկության կենտրոնական խնամակալության 27 ապրիլ թվակիր հայտարարությունը, որով հայտնվում էր, թե «Բարերարի կտակի մատնանշի համաձայն, 300.000 դոլարից մինչև 400.000 դոլար պիտի հատկացվի Ս. Էջմիածնի նորոգության և բարեկարգության համար»։

Գերագույն Հոգևոր Խորհրդում արձանագրվեց նաև, որ մեծանուն բարերարի որդի պարոն Նուբար Կյուլպենկյանը Վեհափառ Հայրապետին ուղղված իր մայիս 1 թվակիր գրագրով հայտնում է, թե մոտ օրերս պաշտոնական մի պատգամավորություն կայցելի Ս. Էջմիածին՝ խորհրդակցելու համար Վեհափառ Հայրապետի հետ։ Պատգամավորության կազմի մեջ կլինեն Ճարտարապետ պ. Եդվարդ Ուլուճյանը և անգլիացի տընտեսագետ սըր Սիդնի Քեյնը։

***

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԸ իր սույն նիստում քննեց Ադրբեջանի և Թուրքեստանի առաջնորդական տեղապահ հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետ Մարտիկյանի գրությունը՝ Թաքվի և Կիրովաբադի քահանաներին հայրերի համար սահմանված բնակարանային վարձը թեմի 1957 թվականի նախահաշվի մեջ մտցնելու և հաստատելու մասին։ Գերագույն Հոգևոր Խորհուրդը որոշեց բավարարել հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետի խնդրանքը։

***

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԸ իր սույն նիստում զբաղվեց նաև վրահայոց թեմի առաջնորդի փոփոխության և թեմի կազմակերպական հարցերով։ Գերագույն հոգևոր խորհուրդը որոշեց.

1) Վրահայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Վարդան եպիսկոպոս Տեր-Սահակյանին, առողջական վիճակի և առաջացած տարիքի պատճառով, կոչել հանգստյան.

2) Թբիլիսի գործուղել արժանապատիվ Տ. Ռուբեն քահանա Մարտիրոսյանին և Մայր Աթոռի դիվանապետ պ. Հ. Առաքելյանին՝ թեմի եկեղեցական գործերով։

3) Հաստատել Վրահայոց թեմական խորհրդի և վերստուգիչ հանձնաժողովի նորընտիր կազմը։

1957 Թ. ՄԱՅԻՍԻ 24-Ի ՆԻՍՏԻՑ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ սույն նիստում Վրաստանի Թեմի առաջնորդ նշանակվեց Շիրակի Թեմի առաջնորդական տեղապահ հոգեշնորհ Տ. Կոմիտաս վարդապետ Տեր-Ատեփանյանը։

***

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ սույն նիստում կարդացվեց և արձանագրվեց Ամենապատիվ Տ. Խաչ արքեպիսկոպոս Աջապահյանի հեռագիրն այն մասին, որ Սիրիական կառավարությունը մայիս 8 Թվակիր իր որոշումով արտոնել է Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսական օրինական Աթոռի հաստատումը Սիրիայի մայրաքաղաք Դամասկոսում

ՄԱՅՐ ԱԹՈՌԻՄ

ՄԱՅԻՍԻ 3-ԻՆ, ՈՒՐԲԱԹ, վերաբացվեց Հոգևոր Ճեմարանը զատկական արձակուրդներից հետո։ Նույն օրը սկսվեցին դասավանդությունները։

***

ՄԱՅԻՍԻ 4-ԻՆ, ՇԱԲԱԹ, զատկվա տոների կապակցությամբ Թբիլիսի և Բաքու գնացած բարեշնորհ Հովհաննես Դանիելյան, Սարգիս Բեհրուդյան և Կարապետ Բենլիյան սարկավագները վերադարձան Մայր Աթոռ, հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետի պլխավորությամբ։

***

ՄԱՅԻՍԻ 5-ԻՆ, ԱՇԽԱՐՀԱՄԱՏՐԱՆ ԿԻՐԱԿԻԻՆ (Կանաչ կիրակի), Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Հակոբ քահանա Հակոբյանը։ Քարոզեց գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը «Սիրտ սուրբ հաստատեա յիս Աստուած և հոգի ուղիղ նորոգեա ի փորի իմում» բնաբանով։

***

ՄԱՅԻՍԻ 10-ԻՆ, ՈՒՐԲԱԹ, Վեհարանում, երեկոյան ժամը 9-ին միաբանության համար դասախոսեց հոգեշնորհ Տ. Հուսիկ արեղա Սանթուրյանը «Վեհափառ Հայրապետի ուղևորությունը Իտալիա և Միլանի հայ գաղութը» թեմայով։

***

ՄԱՅԻՍԻ 12-ԻՆ, ԿԱՐՄԻՐ ԿԻՐԱԿԻԻՆ, Մայր Տաճարում պաշտվեց հանդիսավոր սուրբ պատարագ։ Պատարագեց ու քարոզեց Հոգևոր Ճեմարանի վերակացու արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարությանը Կարմիր կիրակիի խորհրդի և նշանակության մասին։

***

ՄԱՅԻՍԻ 15-ԻՆ, ՁՈՐԵՔՇԱԲԹԻ, երեկոյան ժամը 5-ին Հոգևոր Ճեմարանում բանախոսեց Ֆրանսահայ պ. Ադասի Դարբինյանը, որը եկել էր Մայր Հայրենիք՝ 1957 թվականի ամռանը Ֆրանսիայից դեպի Սովետական Հայաստան տուրիզմ կազմակերպելու համար։ Բանախոսությանը ներկա էին Վեհափառ Հայրապետը, Մայր Աթոռի ամբողջ միաբանությունը և վանքի պաշտոնեությունը։

Բանախոսության ներկա էին նաև ճարտարապետներ Մ. Մազմանյանը և Ռ. Իսրայելյանը։

Պ. Դարբինյանը հանգամանորեն խոսեց Ֆրանսահայ գաղութի ազգային, գրական, մշակութային և եկեղեցական կյանքի մասին, ծանրացավ Ֆրանսահայ գաղութի հայրենասիրական զգացմունքների և Մայր Հայրենիքի ու Ս. Էջմիածնի հետ մշակութային, եկեղեցական, հոգեկան կապերի ամրապնդման վրա և այս ամռան Ֆրանսահայ գաղութից դեպի Սովետական Հայաստան ու Ս. Էջմիածին կատարվելիք տուրիզմի վրա։

Բանախոսության վերջում պ. Ա. Դարբինյանը սիրով պատասխանեց միաբանության և ուսանողության կողմից տրված զանազան հարցերին։

Հինգ րոպե ընդմիջումից հետո գործադրվեց գեղարվեստական ծրագիր։ Թավջութակի վրա դաշնամուրի ընկերակցությամբ նվագեց Բուխարեստի միջազգային ֆեստիվալում առաջնություն շահած շնորհալի թավջութակահար օրիորդ Մեդեա Աբրահամյանը, արժանանալով ջերմ ընդունելության։

Վերջում Վեհափառ Հայրապետը, ի նշան հայրապետական գնահատության, տաղանդավոր արվեստագիտուհուն նվիրեց Միլանոյից ստացված մի գեղեցիկ թավջութակ։

❋❋❋

ՄԱՅԻՍԻ 16-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, երեկոյան ժամը 9-ին, Վեհարանում, միաբանության համար դասախոսեց հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սարգսյանը «Վեհափառ Հայրապետի ուղևորությունը Վենետիկ և հայ վենետիկը» նյութի շուրջ։

❋❋❋

ՄԱՅԻՍԻ 19-ԻՆ- ԿԻՐԱԿԻ, «Տոն երևման Սրբոյ Խաչի»։ Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Խորեն վարդապետ Էլլուչյանը «Ես եմ հովիւն քաջ, հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարացս» ընթերցանով։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

❋❋❋

ՄԱՅԻՍԻ 22-ԻՆ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, երեկոյան ժամը 9-ին, Վեհարանում, միաբանության համար դասախոսեց արժանապատիվ Տ. Ռուբեն քահանա Մաղտիրոսյանը «Վեհափառ Հայրապետի ուղևորությունը Ֆրանսիա և Փարիզի հայ գաղութը» նյութի շուրջ։

❋❋❋

ՄԱՅԻՍԻ 26-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց Շիրակի թեմի առաջնորդական տեղապահ հոգեշնորհ Տ. Կոմիտաս վարդապետ Տեր-Ստեփանյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

❋❋❋

ՄԱՅԻՍԻ 28-ԻՆ, ԵՐԵՔՇԱԲԹԻ, երեկոյան ժամը 8-ին Վեհարանում միաբանական լսարանում բանախոսեց Հոգևոր Ճեմարանի դասախոս և վերակացու արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարուքյանը «Վեհափառ Հայրապետի ուղևորությունը Անգլիա և Անգլիայի հայ գաղութը» նյութի շուրջ։

❋❋❋

ՄԱՅԻՍԻ 29-ԻՆ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, Համբարձման տոնի կապակցությամբ, Արայի լեռան վրա գտնվող Մաղկավանք ուխտատեղին մեկնեցին արժանապատիվ Տ. Հակոբ քահանա Հակոբյանը, բարեշնորհ Պետրոս սարկավագ Բերբերյանը և ուսանողներ Ժիրայր Ճերեճյանն ու Գևորգ Էլլիբեկյանը։

❋❋❋

ՄԱՅԻՍԻ 30-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, Համբարձման տոնի առթիվ, Մայր Տաճարում հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց Գեղարդուն Հոգևոր Խորհրդի անդամ դերաշնորհ Տ. Վարդան եպիսկոպոս Տեր-Սահակյանը։ Շատ կողմերից Ս. Էջմիածին ուխտի էին եկել բազմաթիվ հավատացյալներ օրվա տոնի կապակցությամբ։ Քարոզեց հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետ Սարգսյանը Համբարձման տոնի առթիվ, ծանրանալով Ս. Աթոռի Սսից Էջմիածին փոխադրության պատմական նշանակության վրա։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ հայրապետը։

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԱՅԻՍԻ 8-ԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ այցելեց Սովետական կանանց կոմիտեի հրավերով Երևան ժամանած Ավստրիայի կանանց պատվիրակությունը, որին գլխավորում էր Ավստրիայի դեմոկրատ կանանց միության փոխ-նախագահ տիկին Մարիա Սուքինը։ Կանանց պատվիրակությունը եղավ Մայր Տաճարում և եկեղեցա-հնագիտական թանգարանում և մեկնեց լավագույն տպավորություններով։

❋❋❋

ՄԱՅԻՍԻ 14-ԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ այցելեց Իտալիա—ՍՍՌՄ ընկերության պատվիրակությունը, Իտալիայի պառլամենտի անդամ Հորացիո Թարբոյերիի գլխավորությամբ։

Հյուրերը եղան Մայր Տաճարում, թանգարանում։ Վերջում Վեհափառ Հայրապետը թարեհաճեց ընդունել պատվիրակության անդամներին։ Հյուրերը հրաժեշտ առին Վեհափառ Հայրապետից և Մայր Աթոռից՝ շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար։

❋❋❋

ՄԱՅԻՍԻ 22-ԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ այցելեց չիլիական ականավոր բանաստեղծ և հասարակական գործիչ, ժողովուրդների միջև խաղաղություն ամրապնդելու համար միջազգային Լենինյան մրցանակի լաուրեատ Պաբլո Ներուդան իր տիկնոջ հետ։

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅՐԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՍԻՄԵՈՆ ԵՐԵՎԱՆՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՅՔԱՐԸ ԱՂՎԱՆԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԵՎ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԽՈՒՅՍ ՁԳՏՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ

Սիմեոն Երևանցին մեկն էր մեր այն մեծանուն կաթողիկոսներից, որոնք նախանձախնդիր են եղել Հայ Եկեղեցու միասնականության և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գերագահության սկզբունքներին։ Սիմեոն Երևանցու օրոք Հայ Եկեղեցու միասնությանը և Մայր Աթոռի հեղինակությանը սպառնում էին լուրջ վտանգներ։ Այն օրերին կենտրոնախույս ձգտումներ հանդես էին բերել Աղվանից կաթողիկոսությունը և Կոստանդնուպոլսի Պատրիարքությունը։ Սիմեոն կաթողիկոսը, հանուն Հայ Եկեղեցու միասնության և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի իրավունքների, հետևողականորեն պայքար մղեց այս երկու Աթոռների կենտրոնախույս ձգտումների դեմ։

1763 թվականին Աղվանից Ներսես կաթողիկոսը մահամերձ հիվանդ էր։ Նրա հորիղբորորդին՝ Իսրայելը, որին Ներսեսը տղա հասակից օծել էր եպիսկոպոս, հետագայում Աղվանից կաթողիկոս դարձնելու նպատակով, տեղի Շահվերդի խանի և մելիքների համաձայնությամբ ինքնագլուխ օծվում է կաթողիկոս և նստում Գանձակում։ Հակոբ կաթողիկոսը ապօրինի է համարում այս օծումը և Իսրայելի կաթողիկոսությունը չի հաստատում։ Նույնպիսի վերաբերմունք է դրսևորում նաև Հակոբ կաթողիկոսի հաջորդ Սիմեոն կաթողիկոսը Իսրայելի նկատմամբ։ Նա Իսրայելին կանչում է Մայր Աթոռ, բայց վերջինս հրաժարվում է ներկայանալուց։

Միևնույն ժամանակ Գանձասարի Հովհաննես եպիսկոպոսն էլ, տեղի խանի և մելիքների աջակցությամբ, ինքնագլուխ օծվում է կաթողիկոս և նստում Գանձասարում, առ ոչինչ համարելով Սիմեոն կաթողիկոսի խորհուրդներն ու հրամանները։

Աղվանից կաթողիկոսության նման երկփեղկումը բացատրվում է ժամանակի քաղաքական և տնտեսական պայմաններով։ Գանձասարը, որ Աղվանից կաթողիկոսության օրինական աթոռավայրն էր, գտնվում էր Իրրահիմ խանի իշխանության սահմաններում, իսկ Գանձակը՝ Շահվերդի խանի։ Այս երկու ազդեցիկ և միմյանց թշնամի խաներից յուրաքանչյուրը, նկատի առնելով իր տնտեսական և քաղաքական շահերը, ամեն կերպ ձգտում էր իր իշխանության ներքո ունենալ Աղվանից Կաթողիկոսական Աթոռը, և այդ իսկ պատճառով միջամտում էր Հայ Եկեղեցու գործերին, պաշտպանության տակ վերցնելով մեկին կամ մյուսին։

Ստեղծված այս եկեղեցական տագնապի առաջ, Սիմեոն կաթողիկոսը, հայրապետական հորդորներից և հրահանգներից հետո, վճռաբար դիմեց վերջին և խիստ միջոցների, հանուն հայ ժողովրդի և Հայ Եկեղեցու միասնական շահերի։ Նա բանադրեց Իսրայելին և Հովհաննեսին, նրանց համարելով «Ապորինաւորս», «Քանոնաքակս», «Ապրատամբս»։ Նրանցից յուրաքանչյուրը, սակայն, ի վնաս մյուսի, ձգտում է սիրաշահել Սի-

մեռն կաթողիկոսի հաճությունը և դրանով ամրապնդել իր դիրքերը։

1765 թվականի աշնանը Շահվերդի խանը, իր բարեկամ Երևանի Հուսնի խանի միջոցով, ուղում է Սիմեոն կաթողիկոսից ստանալ Իսրայելի կաթողիկոսացման հրամանը։ Սիմեոն կաթողիկոսը պատասխանում է նրան. «Մինչև... ոչ գայցէ խոնարհութեամբ ի Ս. Աթոռ մեր և առ տուս մեր, չէ հնար թէ արասցուք մեք զայդ»[1]։

Գանձակեցիները, առանց կարդալու, արհամարհանքով հետ են ուղարկում Սիմեոն կաթողիկոսի հորդորագիրը, ցույց տարով իրենց անհնազանդությունը։ Իր պատասխան գրում Շահվերդի խանը, հիմնվելով ոչ ճիշտ և դիտումնավոր աղբյուրների վրա, աշխատում է ապացուցել ոչ միայն Աղվանից Աթոռի ավագագույն լինելը, այլ նաև արդարացնել գանձակեցիների ըմբոստությունը։ «Մի զքեզ այդքան մեծացուցաներ, — գրում է Շահվերդի խանը Սիմեոն կաթողիկոսին,— զի չես գու կարի իմն, քան զսա և Աթոռն տրին ատգագարդն և նախ է քան զձերդ... կաթողիկոս մեր Իսայէին է, և զնա ընդունիմք և ոչ զայլ ոք, եթէ դու կարի ի յայս աշխատիս, բոշ գլխացաւանց քեզ կու մնայ և մեք ի կամաց մերոց ոչ եմք դառնալոց, շատ մի երկարացուցաներ»[2]։

Սիմեոն կաթողիկոսը, տեսնելով որ հնարավոր չէ նամակագրությամբ հարցը լուծել, Գանձակ է ուղարկում Թիֆլիսի առաջնորդ Զաքարիա վարդապետին, նրան հանձնարարելով հանգամանորեն բացատրել խանին հարցի էությունը և համոզել Իսրայելին էջմիածին գալու։ Զաքարիա վարդապետի հետ ուղարկում են արխիվային մի քանի փաստաթղթեր, որոնց համաձայն Աղվանից կաթողիկոսը պարտավոր էր ենթարկվել Մայր Աթոռին և միայն նրա Գահակալից ստանալ կաթողիկոսական իշխանությունը։

Մինչ դեպքերն այսպիսի ընթացքի մեջ էին, Իբրահիմ խանի թելադրությամբ Մայր Աթոռ էր փոխացել Հովհաննես ապօրինի կաթողիկոսը, կարծելով, թե Իսրայելը արդեն ճանաչվել է Մայր Աթոռի կողմից։ Հովհաննեսի հետ Իբրահիմ խանը Սիմեոն կաթողիկոսին ուղարկել էր հետևյալ գրությունը. «Պարտիս առանց իրիք պատճառի զհրամանն կաթողիկոսութեան տայ Յովհաննէսիդ և փոխով յետ յղեցն»։

Սիմեոն կաթողիկոս հարցը ժամանակավորապես լուծելու համար ուղում էր Հովհաննեսին պահել Ս. Էջմիածնում իբրև եպիսկոպոս և Իսրայելին կանչել Մայր Աթոռ, նրանից հնազանդության գիր առնել և կաթողիկոսական իշխանությամբ ուղարկել Գանձասար։ Սակայն Իսրայելը մերժում է գալ Իբրահիմ խանի և Հովհաննեսի մոտ, մանավանդ, որ վերջինս պատրաստ էր մերժտապես հնազանդ լինելու երդումը տալ։

Դեկտեմբերի 25-ին, Ս. Էջմիածնում, Սիմեոն կաթողիկոսը շքով և հանդիսությամբ Հովհաննեսին օծում է կաթողիկոս և նրանից վերցնում հնազանդության թուղթ, որ «Միշտ ի հնազանդութեան Ս. Աթոռոյս և աթոռակալացն սորին մնասցէ և երկրին իւրոյ զնոյն պատուիրեսցէ, զի զնոյն առնիցեն և ի Ս. Աթոռս եկեալ յաթոռակալացն տրին ծանիցին»[4]։ Բացի այս, դրված կանոններով որոշվում էին Աղվանից կաթողիկոսության իրավասության սահմանները։

Սրանով, իհարկե, Աղվանից կաթողիկոսության տագնապը լուծվեց։ Շահվերդի խանն ու իր համախոհները միայն Իսրայելին էին ճանաչում որպես կաթողիկոս։ Նրանք շարունակում էին իրենց պայքարը և՛ Հովհաննեսի, և՛ Սիմեոն կաթողիկոսի դեմ։ Նրանց համար արդեն ջախջախիչ հարված էր, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսն անդեկ էր իրենց հակառակորդի՝ Հովհաննեսի կողմը։ Իսրայելն ու խանը դիմում են վրաց թագավոր Հերակլ Բ-ին, որը միջնորդում է Սիմեոն կաթողիկոսի մոտ։ Սիմեոն կաթողիկոսը Հերակլի մոտ է ուղարկում իր տեղապահ գիտնական Մկրտիչ վարդապետին՝ հանգամանորեն թագավորին բացատրելու խնդրի էությունը և խոսելու այն մասին, որ Աղվանից կաթողիկոսը միշտ ենթարկվել է Մայր Աթոռին։

Մինչև 1777 թվականը Իսրայելը մնում է բանադրանքի տակ։ Ժողովրդից բազմաթիվ բողոքներ են ուղարկվում Սիմեոն կաթողիկոսին։ Ի վերջո, Իսրայելն ու իր կողմնակիցները ստիպված են լինում կտրել իրենց համառությունը և տեղի տալ։ Սիմեոն կաթողիկոսը, սակայն, անգիջող էր, բայց ստիպված է լինում համաձայնել, որովհետև Իսրայելին ու իր կողմնակիցներին ցերմ կերպով պաշտպանում էր նաև Հերակլ թագավորը։

1777 թվականին Իսրայելը, Գանձակի խանի որդի Ջավադ խանի և լուսայինների ուղեկցությամբ, հասնում է Ս. Էջմիածին, դղրում և բանադրանքից արձակվում է։ Ջավադ խանը ճիգ ու ջանք չի խնայում համո-

1 Գյուտ ավագ քահանա Ագանյանց, «Դիվան հայոց պատմության», Թիֆլիս, 1894 թ., 11-րդ հատ., էջ 289։

2 Նույն տեղում, էջ 315—316։

3 Նույն տեղում, էջ 312։

4 Նույն տեղում, էջ 367—368։

գելու Սիմեոն կաթողիկոսին, որպեսզի Խորայելը լինի ամբողջ Աղվանից կաթողիկոս։ Սիմեոն կաթողիկոսը մերժում է խանի առաջարկը և կտրուկ ասում. «Մի ուեր ստիպեր զմեզ վասն այդր, զի մեք ո՛չ եմք կամել և դու ընդ վայր խոսեցոց եաս»[5]։

Նույն տարին Սիմեոն կաթողիկոսը, Ս. Խաչի տոնից հետո, Խորայելին և Հովհաննեսին կանչում է Ս. Էջմիածին՝ նրանց հաշտեցնելու և որոշելու նրանց կաթողիկոսական իրավասությունները։ Կանգնեցնելով նրանց դեմ-դիմաց, նախ հանդիմանում է թե՛ նրանց և թե՛ նրանց ապօրինաբար ձեռնադրող էպիսկոպոսներին։ Վերջիններս չքմեղանալով, պատասխանում են. «Մեք զի՞նչ արասցուք, մելիքք և իշխանք երկրին բռնութեամբ այնպէս ետուն առնել, մեք որպէ՞ս կարէաք ընդդիմանալ հրամանաց նոցա։ Պատասխանեաց (Սիմեոն կաթողիկոսը — Հ. Վ.) թէ՝ օձանողն դուք էիք, և ոչ նոքա, պարտ էր ձեզ ասել, թէ ոչ է մարմնաւոր իշխանութիւն, պարտ է ուրեմն, զի հաւանութեամբ բոլոր երկրայնոց տանս Աղուանից լիցի և հրամանաւն Ս. Էջմիածնի կաթողիկոսին, զի կայ առնուցու և անվրդով լիցի, և մի՛ խռովութիւն ինչ ծնցի ի մէջ երկրիս։ Պատասխանեցին թէ՝ թէպէտ և եղեն ոմանք ի մէնջ որ զայդ ասացին, այլ չեղև լսող, մանաւանդ թէ ոչ կարէաք ընդդէմ կալ մարմնաւորի իշխանութեան. զի տանջանք և զան և հարուածք հասուցանելոց էին զմեզ անխտիր, թէ ոչ լսէաք նոցա»[6]։

Այնուհետև հաշտեցնելով երկու կաթողիկոսներին, Սիմեոնը, կանոնով ու կաթողիկոսական վճռով, որոշում է նրանց իրավասությունների սահմանները։ Խորայելը պետք է նստեր Գանձակում, իսկ Հովհաննեսը՝ Գանձասարում։ Նրանք միմյանց վիճակում ոտնձգություններ չպիտի անեին։ Խորայելի մահից հետո Գանձակի Աթոռը պետք է դադարեր գոյություն ունենալուց և մնար միայն Գանձասարի Աթոռը։ Առ այս Գանձակեցիներին և մյուսներին Սիմեոն կաթողիկոսը գրում է, թե երբ «Խորայէլ կաթողիկոսն վախճանիցի, յայնժամ թէ մի կաթողիկոսն լինիցի յայդ երկրոյդ, դուք ևս նմա ծառայեսջիք։ Իսկ եթէ այլ ևս երկու կաթողիկոս լինիցին, յայնժամ դուք ևս մի՛ հնազանդիջիք նոցա, և ոչ միայն ի նոցանէ, այլ Ս. Աթոռոյսդ»[7]։

Այս ձևով էլ ավարտվում են Աղվանից կաթողիկոսության խնդիրները, որոնց խաղաղ և շինարար կարգավորման համար Սիմեոն կաթողիկոսը գործադրեց հնարավոր իր բոլոր ջանքերը։

Սիմեոն կաթողիկոսի ժամանակ մտահոգության առարկա էին դարձել նաև Կոստանդնուպոլսի Պատրիարքական Աթոռի խնդիրները։ Մայր Աթոռի և Կոստանդնուպոլսի Պատրիարքության միջև առաջ էին եկել տարաձայնություններ քաղաքական և այլ հանգամանքների պատճառով։ Սիմեոն կաթողիկոսի գլխավոր նպատակն է եղել արմատախիլ անել այդ խորթ երևույթները, սերտացնել երկու Աթոռների կապերը, ջերմորեն պաշտպանելով Մայր Աթոռի նվիրապետական իրավունքները։

Մայր Աթոռի և Կոստանդնուպոլսի Պատրիարքության հարաբերությունների միջև որոշ սառնություն է առաջ գալիս Սիմեոն կաթողիկոսի օրոք։ Կոստանդնուպոլսում ապրող հայ մեծահարուստները՝ ամիրաները, մերձավոր հարաբերությունների մեջ էին Օսմանյան արքունիքի հետ և մեծ դեր էին խաղում մեր ազգային-եկեղեցական կյանքում։ Նրանք կարող էին ցանկացած ժամանակ Օսմանյան արքունիքից ստանալ այս կամ այն պատրիարքի հեռացման կամ հաստատման հրովարտակը։ Բացի այդ, Կոստանդնուպոլսի հայ բնակչությունը միատարր չէր, կային և՛ տեղացիներ, և՛ գաղթականներ Արևելյան Հայաստանից։ Գաղթականները կամ հայաստանցիները առավելապես հակված էին դեպի Մայր Աթոռը և պաշտպանում էին նրա շահերը, իսկ տեղացիները՝ Պատրիարքարանի շահերը։ Քաջալերվելով և հովանավորվելով Օսմանյան արքունիքից, ամիրաները աշխատում էին ընդլայնել Պատրիարքարանի իրավասությունների սահմանները և տիրանալ նոր վիճակների ի վնաս Մայր Աթոռի։ Այսպիսի կացության առաջ Սիմեոն կաթողիկոսն աշխատում էր Կոստանդնուպոլսում ունենալ Մայր Աթոռի գործակալ (վեքիլ), որի հիմնական պարտականություններից մեկը պիտի լիներ Մայր Աթոռի գերագահ իրավունքների պաշտպանությունը։ Հաճախ էր պատահում, որ Կոստանդնուպոլսում Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրամաններն ու հրահանգները ձգձգվում էին, կամ չէին կատարվում։ Ավելին. պատրիարքն ու մի քանի ամիրաներ նույնիսկ ընդդիմանում էին կաթողիկոսի կարգադրություններին և դժվարություններ հարուցում Կոստանդնուպոլսում կաթողիկոսական փոխանորդ ունե-

---

5 Գյուտ ավագ քահանա Աղանյանց. «Դիվան հայոց պատմության», 1913 թ. Թիֆլիս, 11-րդ հատ., էջ 150։

6 Նույն տեղում, էջ 207—208։

7 Նույն տեղում, էջ 327։

նալու դեմ։ Հետագայում երբ Սիմեոն կաթողիկոսին հաջողվում է այդ հարցը դրականապես լուծել, երկու Աթոռների հարաբերությունները մասնակիորեն միայն բարելավվում են։ Գրիգոր պատրիարքն աշխատեց ստեղծված դրությունից իսկույն ևեթ օգուտ քաղել։ Նա ցանկանում էր եպիսկոպոս դառնալ, ուստի խնդրում է Սիմեոն կաթողիկոսից ձեռնադրվել տեղում, երեք եպիսկոպոսների ձեռքով, պատճառաբանելով, թե իբր այդ իրավասությունը վերապահվում է Կոստանդնուպոլսի Աթոռին, համաձայն Նիկիայի ժողովի որոշման՝ «յերից եպիսկոպոսաց եպիսկոպոս ձեռնադրիցն։ Այս առաջարկին Սիմեոն կաթողիկոսն ուղարկում է հետևյալ կտրական և խիստ պատասխանը.

«Արդ ասէ հնգետասան կանոնք գոն ի յատուկ բուսաւորչացն մերոց, ընթերցիր դայ՛ և նկատեա՛. զնեա՛ և դայլ գրեանս մեր և հարց զինագոյնս, տես, եթէ ի Լուսաւորչէն մերմէ մինչև ցառ մեզ լեալ է երբեք յազգի մերում զոր խնդրեսդ և ես արարիցս։ Իսկ եթէ ոչ, ես որպէ՞ս կարեմ ցանկաքակ լինել աւագնոց կանոնացն և չար օրինակ ապագայից։ Յետ այսորիկ գրեաց ես, թէ հաւատա՞ս և ընդունի՞ս զու, զի ի Լուսաւորչէ անտի Ս. Աթոռս է մայր և գլուխ ամենայն եկեղեցեաց Հայաստանեայց և Հայրապետն սորին եկեղեցւոյ և եկեղեցականաց գլուխ և հրամանատու ամենայնի։ Իսկ այժմ որովհետև ցրուեալք են ազգ մեր ընդ չորիս ծագս աշխարհի յայլ և այլ յիշխանութիւնս, վասն որոյ՝ որպէս թէ ըստ մեծի մասին ընկճեցեալ է իշխանութիւն և հրաման սորին և մնացեալ է սա միայն այդ կարգ, որոյ աղագաւ որպէս թէ ճարակտուր և բռնադատեցեալ յօգտից իւրեանց թեքեն սմա զպարանոցս։ Արդ՝ այդ ևս տալք այլոյ, այնուհետև զի՞նչ ունիցի և ո՞վ զաս և զի սմա նստոցն կաթուղիկոս հաշուէ և յանիժամ մի՞թէ և քո զխղճմտանք զքեզ ոչ տանջեսցեն։ Գրեա, ասէ, թէ միայն ենք, զկասն եթէ միանգամ յուծցուք, այլ կարե՞մք կապել, զի սպասեն ամենեքեան և յայսպիսւոյ լուծման... Վասն այսորիկ ասէ՝ թէև մեռանիցէ ես հասանիցէ ինձ այսր ադագաւ, ոչ թողից և ոչ բաւ կամեցայցդ»[8]։

Հաջորդ պատրիարքների (Զաքարիա և Հովհաննես) ժամանակ էլ շարունակվում է միմեանց դրությունը։ Դրանց մասին Ղուկաս կաթողիկոսը ցավով պատմում է. «Որոյ որդիք բարձրացան անդ ի պատիւ, զամենայն բանն մեր ընդ ձախին կամէին շրջել, իւրովի հալէր և մաշէր լուսաւորդին (Սիմեոն կաթողիկոսը—Հ. Վ.), որպէս և մեք այժմ»[9]։

«Զայսուիկ առնելով,— գրում է Ղուկաս կաթողիկոսը,— թէ՛ հինն և թէ՛ նորն (պատրիարքները—Հ. Վ.) կամէին զինքեանս գլուխ ազգի ցուցանել, և իշխող հասարակութեան, ոտնափոխ առնել կամելով զպատիւն Ս. Աթոռոյս և զսորին Հայրապետի բացարձակ իշխանութիւնն կամէին խափանել և ի ներքոյ հրամանաց իւրեանց կացուցանել»[10]։

Սսի և Աղթամարի կաթողիկոսական Աթոռները Սիմեոն կաթողիկոսի օրոք խաղաղ և անվրդով էին և լավ մթնոլորտ էր պահպանվում նրանց և Մայր Աթոռի միջև։

Սիմեոն կաթողիկոսն իր գրչով, խոսքով, հեղինակությամբ նախանձախնդրորեն պայքարեց Մայր Աթոռի գերագահությունն ու Հայ եկեղեցու միասնությունը չլատոս տխուր երևույթների և ձգտումների դեմ, որովհետև մեր եկեղեցական միասնությամբ արտահայտվել է նաև մեր ազգային միասնությունը։ Խոսելով Աղթամարի կաթողիկոսական Աթոռի առաջ գալու մասին, նա ասում է. «Եթէ ոչ միայն կաթողիկոսութիւնն բաժանեցաւ, այլ և գրեթէ բոլոր ազգս Հայոց յերկուս բաժանեցաւ յայնմ հետէ»[11]։

Սիմեոն կաթողիկոսի համար մի էր Հայաստանյայց եկեղեցին և մի ու անբաժանելի Ամենայն Հայոց Հայրապետությունը։ Մեր նվիրապետական մյուս Աթոռները հանդես են եկել հետագայում քաղաքական պայմանների ստիպման և փոփոխության պատճառով։

«Էմիածնանիստ կաթողիկոսն յաւաղ և յետոյ և մինչև ցայսոր շնորհիւն Աստուծոյ և նախապատիւ, գերագահ, հռչակաւոր անուանի քան զայլսն ի յամենայն ազգս և է սիրելի և ահարկու ի վերայ ամենեցուն, որ եթէ հարկն պահանջիցէ և զիրաւունս ունիցի, կարէ և բանիւ առնել զմիւս կաթողիկոսսն և լուծանել ի կարգէն։ Նմանապէս և զեպիսկոպոսունսն և զայլ կարգաւորս նոցին։ Բայց նոքա ոչ բան կարեն իսկ ի կաթողիկոսն Էջմիածնի, և ոչ ի կարգաւորս և յաշխարհականս նորին վիճակի»[12]։

---

8 Գյուտ ավագ քահանա Աղանյանց, «Դիվան հայոց պատմության», 3-րդ հատ., էջ 701—702։

9 Նույն տեղում, 4-րդ հատ., էջ 278—279։

10 Նույն տեղում, էջ 321։

11 Սիմեոն կաթողիկոս, «Ջամբռ», գլ. Ը., էջ 53։

12 Նույն տեղում, էջ 54—55։

Հ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

(Պատմական գիտություններ)
բեկնածու, ճնագետ)

ՄԱՐՄԱՇԵՆԻ ՎԱՆՔԸ ԵՎ ՆՐԱ ՎԻՄԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա) ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Մարմաշենի հռչակավոր վանքը գտնվում է Հայկական ՍՍՌ Ախուրյանի շրջանում, Ներքին Ղանլիջա հին գյուղում, Լենինական քաղաքից մոտ 12 կիլոմետր դեպի արևմուտք, Ախուրյանի ձորում։ Գյուղը ներկայումս փոխադրվել է սարահարթի վրա, Լենինականից Լենգէս տանող խճուղու եզրին և վերանվանվել է Վահրամաբերդ։

Մարմաշենի վանքը եղել է Հայաստանի կրոնական խոշոր կենտրոններից մեկը և պատկանում է հայ արվեստի և ճարտարապետության հռչակավոր կոթողների թվին։ Քարերի վառ կարմիր գույնը, նրանց ողորկ մշակումը, ճարտարապետական ձևերի հետաքրքիր ու բնորոշ լուծումը, կառուցողական ձևերի բարձր տեխնիկան, հարուստ և վերին աստիճանի նուրբ մշակված զարդաքանդակները է՛լ ավելի վեհություն և գեղեցկություն են տալիս նրան։

Թե երբ է հիմնադրվել այդ նշանավոր մենաստանը՝ ստույգ հայտնի չէ։ Պատմական աղբյուրները շատ աղոտ տեղեկություններ են պարունակում նրա մասին։ Նրա անցյալ պատմությանը նյութ են հանդիսանում վանքի վիմագրությունները և վերջին շրջանում կատարված հնագիտական ուսումնասիրությունները։

Մարմաշենի վանքով հետաքրքրվող բանասերները, տեղագիրներն ու ճանապարհորդները, ելնելով գլխավոր եկեղեցու հարավային պատի վրա եղած ընդարձակ արձանագրությունից (արձանագրություն Ա), նրա հիմնադրումը վերագրում են Վահրամ Պահլավունի իշխանին, ժ դարի վերջերին։ Սակայն կատարված հնագիտական ուսումնասիրությունները հաստատում են, որ մինչև Վահրամ Պահլավունու այնտեղ կատարվող շինարարությունը, դեռ դարեր առաջ, գոյություն է ունեցել Մարմաշենի վանքը։

Այս իրողության որպես ապացույց կարող են ծառայել նոր պեղված եկեղեցին և վանքից քիչ հյուսիս գտնվող փոքր եկեղեցին, որոնց ճարտարապետական և կառուցողական ձևերը խիստ բնորոշ են Զ—է դարերին։ Այդ տեսակետից բնորոշ է այն, որ վանքի գլխավոր եկեղեցու հյուսիսային պատի վրա փորագրված մի այլ, ավելի ընդարձակ արձանագրության մեջ (արձանագրություն Բ) երկու խումբ է հիշատակվում—հիմնական խումբը՝ Մեծ Մարմաշենը և Փոքր Մարմաշենը կամ Վերին վանքը։

Մարմաշենի վանքով զբաղվող նախորդ բոլոր հեղինակները նշված Վերին վանքը դնում են Վերին Ղանլիջա գյուղի մեջ, հավանաբար հիմք ընդունելով գյուղի Վերին անունը, առանց նկատի առնելու, թե այդ Վերին Ղանլիջան իրոք Մարմաշենի վանքից վերև է գտնվում, թե ներքև։ Խնդիրն այն է, որ այդ երկու՝ Վերին և Ներքին Ղանլիջա գյուղերի աշխարհագրականորեն ոչ ճիշտ անվանումը շփոթության մեջ է գցել ոչ միայն հիշյալ հեղինակներին։

Աշխարհագրական տեսակետից Ներքին Ղանլիջա գյուղը գտնվում է ավելի վերև (գետի հոսանքն ի վեր) քան Վերին Ղանլիջան, բայց որովհետև վերջինս գետնի մակերեսի կազմության տեսակետից գտնվում է ավելի բարձր դիրքում, ձորի լանջին, իսկ մյուսը՝ գետափին, այդ պատճառով կոչել են Վերին Ղանլիջա։ Հասկանալի է, որ արձանագրության մեջ հիշատակված Վերին վանքը պետք է գտնվեր գլխավոր վանքից դեպի վերև, այսինքն դեպի հյուսիս։ Եվ իրոք, վանքից դեպի հյուսիս գտնվում է վերը նշված փոքր եկեղեցին, որը բոլոր ուսումնասիրողները վերագրում են է դարին։ Դրանից էլ բխում է, որ Մարմաշենի ընդհանուր վանքը գոյություն ուներ է դարին։ Այդ ժամանակից մինչև Վահրամ Պահլավունու կողմից այնտեղ կատարվող նոր շինարարությունը՝ ոչինչ հայտնի չէ Մարմաշենի վանքի մասին։

Սամվել Անեցին[1] Մարմաշենի վանքի կառուցումը դնում է հայոց ՆԼԵ—ՆԽԳ (435—443), այսինքն մեր թվագրության 986—994 թվականներին։ Վանքի գլխավոր եկեղեցու վրա Վահրամ Պահլավունու թողած արձանագրության համաձայն վանքը կառուցված է ՆԼԷ—ՆՀԸ (437—478=988—1029) թվականներին։ Ի դեպ, պետք է նշել, որ արձանագրության մեջ ՆԼԷ թվականի է տարը նման է և Ե տառին, ուստի ընդօրինակողներից ոմանք ընթերցում են Ե (5), ոմանք էլ Է (7)։ Մեր կարծիքով ավելի ճիշտը Սամվել Անեցու կողմից հիշատակվածն է, այսինքն Ե (5)։

Վանքի կառուցման վերաբերյալ Սամվել Անեցու և Վահրամ Պահլավունու թողած արձանագրության տեղեկությունները 35 տարով տարբերվում են իրարից։ Բացի այդ, երկու փաստաթղթերի մեջ որոշակի պարզ չէ, թե Վահրամ Պահլավունին միայն գլխավոր եկեղեցի՞ն կառուցեց, նրա վրա փորագրելով վերը հիշված արձանագրությունը, թե դրա հետ միաժամանակ և ուրիշ շենքեր։

Կատարված ուսումնասիրությունները հաստատում են, որ Սամվել Անեցու վկայությունը վերաբերում է միայն գլխավոր եկեղեցուն, իսկ Վահրամ Պահլավունու արձանագրությունը՝ բացի գլխավոր եկեղեցուց, նաև երկրորդ եկեղեցուն և ժամատանը։

Գլխավոր եկեղեցու արևմտյան պատի արտաքին երեսի վրա քանդակված է մի խաչ, որի ներքևում փորագրված է «Թուիս ՆԼԵ (1026) իս Մատաթէս կանգնեցի»։ Արձանագրությունը փորագրված է այնպես, որից պարզ երևում է, որ այդ ժամանակ, այսինքն 1026 թվականին, գլխավոր եկեղեցուն կից արդեն գոյություն ունեին գավթի կամ ժամատան կիսասյունները։ Որոշ է, որ նախ կառուցվել և ավարտվել է գլխավոր եկեղեցին՝ նրա հյուսիսային կողմում, իսկ վերջում գավիթը, որի շինարարությունը 1026 թվականին արդեն մոտ էր ավարտվելուն։ Վերը նշված երկու եկեղեցիների ճարտարապետական ու կառուցողական ձևերը նույնպես վկայում են, որ նրանք կառուցված են միաժամանակ։

Մինչև 1224 թվականը, շուրջ երկու հարյուր տարի, ոչ մի հիշատակություն չկա Մարմաշենի վանքի մասին։ Հավանական է, որ թուրք-սելջուկյան արշավանքները ամայության հասցրին նաև այս մենաստանը՝ ինչպես Շիրակի բազմաթիվ մյուս վանքերը։

Մարմաշենի վանքի գլխավոր եկեղեցու հյուսիսային պատի վերը նշված ընդարձակ արձանագրությունը նաև հավաստում է, որ Գրիգոր արքեպիսկոպոսը և իր եղբայր Ղարիբը, որոնք իշխանաց իշխան Վահրամի թոռներն էին, 1224 թվականին վերստին նորոգում են կաթողիկեն (գլխավոր եկեղեցին) և վերահաստատում վանքը, որն ավերված էր անօրենների կողմից, եկեղեցին ամբողջ էր դարձված իսկ վանքը՝ գյուղ։ Հեռացնում են գյուղի բնակիչներին և ամբողջ շրջակայքը սեփականում վանքին։ Այդ ժամանակ է, որ վանքը հասնում է իր զարգացման և բարգավաճման ամենաբարձր աստիճանին։

Սակայն վանքի այդ բարգավաճ վիճակը երկար չի տևում։ Ընդամենը մի տասնամյակ անց սկսվում են թաթար-մոնղոլական արշավանքները, որոնք ամայացրին ողջ Շիրակը՝ իր վանքերով հանդերձ։ Մարմաշենի վանքը նորից մնում է լքված ու ամայի վիճակում։ Միայն 19-րդ դարի 30-ական թվականներին, երբ Ռուսաստանը գրավեց Հայաստանի հյուսիսային մասերը և ռուս-թուրքական սահմանը դարձավ Ախուրյան գետը, Ղարսի հայ գաղթականների մի խումբ բնակություն հաստատեց վանքի շուրջը և գլխավոր եկեղեցին մաքրելով դարձրին գյուղական եկեղեցի։

Խրիմյան Հայրիկի ժամանակ փորձեր արվեցին վերականգնելու Մարմաշենի վանքը, նույնիսկ վերանորոգման որոշ աշխատանքներ կատարվեցին, սակայն, ինչպես երևում է, Հայրիկի ջանքերը հաջողությամբ չպսակվեցին։

[1] «Յամուէլի քահանայի Անեցւոյ Հաւավմունք ի գրոց պատմագրաց», Վաղարշապատ, 1893 թ., էջ 108։

Բ) ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

Մարմաշենի վանքի մասին լույս տեսած աշխատություններում նրանց հեղինակները երեք եկեղեցի և մեկ գավիթ են արձանագրում վանքում. ոմանք էլ չորս եկեղեցի՝ վանքի եկեղեցիների խմբին միացնելով նաև Փոքր Մարմաշենի եկեղեցին կամ Վերին վանքը։ Ճարտարապետ Թորոս Թորամանյանը, որն այնքան շատ է զբաղվել Շիրակի ու Արագածոտնի հուշարձանների ուսումնասիրությամբ, 1924 թվականի սեպտեմբերի 4-ին առաջին անգամ այցելելով Մարմաշենի վանքը, գավթի արևմտյան կողմում նկատում է քարուկիր շարվածքի հետքեր. նա այն միտքն է հայտնում, որ այդտեղ պետք է գոյություն ունենան կլոր հատակագիծ ունեցող մի շենքի մնացորդներ։

1932—1935 թվականների ընթացքում Մարմաշենի վանքը կատարած մեր բազմաթիվ այցելությունների և կատարած հնագիտական հետազոտությունների հետևանքով միանգամայն հաստատվեց հանգուցյալ ճարտարապետի ենթադրությունը՝ այնտեղ գոյություն ունեցող կլոր հատակագծով շենքի մասին։

1954 թվականի հունիս և հուլիս ամիսներին կատարված հնագիտական պեղումների հետևանքով բացվեցին մի եկեղեցու շենքի մնացորդներ, որի հատակագիծը արտաքուստ կլոր է, ներսից խաչաձև՝ կիսակլոր խաչթևերով։ Արևելյան և արևմտյան խաչթևերի երկու կողքերին կան փոքրիկ խորաններ, որոնք արևելյան կողմից ունեն համալափ արսիդներ։ Նույն արևելյան խաչթևում պահպանվել է բեմի սալահատակի մի մասը։

Եկեղեցուց պահպանվել են միաստիճանի բարձր ստիլոբատը (հենապատերը կամ ցոգոլը) և պատերի ստորին մասերը՝ հյուսիսային և արևմտյան կողմից երեք քարաշար, արևելյան կողմից երկու քարաշար, իսկ հարավային կողմից պահպանվել է միայն հիմնապատը։ Ներսից պահպանվել են խաչթևերի, ինչպես և արևելյան երկու և արևմտյանի հյուսիսային կողմի խորանների ստորին մասերը. արևմտյան կողմի խաչթևի հարավային պատը և դրան կից խորանը ամբողջովին քանդված են։

Պահպանված մասերը շարված են գլխավորապես կարմիր և մասամբ էլ սև տուֆի ողորկ տաշված խոշոր քարերով, պեմզայով խառնված ամուր կրաշաղախով մածուցված։ Ստորին մասը կամ պոդյումը (ցոգոլի և պատերի միջև եղած մասը) պատած է զանազան ձևի գոտկանման զարդերով։ Քանդված մասերի բեկորները տեղում չեն պահպանված։

Պեղված եկեղեցու պահպանված մասերի ուշադիր ուսումնասիրությունը և նրանց համեմատությունը մինչ այժմ կանգուն կամ կիսավեր մնացած նույնատիպ եկեղեցական շենքերի հետ, ինչպես և պեղումներից հայտնաբերված կերամիկայի մնացորդները, հնարավորություն են տալիս ենթադրելու, որ նա եղել է կենտրոնագմբեթ, հավանաբար եռահարկ և իր կառուցվածքով հիշեցնում է Զվարթնոցի տաճարը, թերևս նրա նախնական տիպը, համեմատաբար փոքր չափի։ Ուստի պետք է ենթադրել, որ նա կառուցված լինի Զ դարի վերջերին կամ է դարի սկզբներին։

Բացի այդ եկեղեցու մնացորդներից, նրա հյուսիս-արևելյան կողմում, շատ մոտիկ, հայտնաբերվեց մի փոքրիկ շենք, մատուռի նմանությամբ, որը նույնպես ավերակ վիճակում է։ Շարված է նույն տուֆի տաշված քարերով, կրաշաղախով, հավանաբար կառուցված լինի Ժ—ԺԱ դարերում և ծառայած որպես դամբարան։

Մարմաշենի վանքում 1954 թվականին կատարված հնագիտական պեղումները, որոնք շարունակվեցին նաև 1955 և 1956 թվականներին, պարզեցին, որ Մարմաշենի վանքի հուշարձանների խումբը չի սահմանափակվում երեք եկեղեցիներով ու գավիթով, ինչպես նշում են տեղագիրները, և որ նրա հիմնադրումը չի պատկանում Ժ—ԺԱ դարերին՝ Պահլավունյաց իշխաններին, այլ ավելի վաղ, հավանաբար Կամսարական տոհմի իշխաններին, որոնց սեփականությունն էր կազմում այդ ժամանակ Շիրակը։

Մարմաշենի վանքի հուշարձանների խմբում կատարվող հնագիտական պեղումները չեն ավարտված. հետագա տարիների պեղումները ցույց կտան, թե ուրիշ էլ ինչ շենքեր էին մտնում այդ խմբի մեջ։

Գ) ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Մարմաշենի վանքը բաղկացած է երկու խմբից՝ Մարմաշենի հիմնական վանքը կամ Մեծ Մարմաշենը, որի կազմի մեջ առայժմ կան չորս եկեղեցի, մեկ գավիթ-ժամատուն, մեկ դամբարան և գերեզմանոց. ապա Փոքր Մարմաշենը կամ Վերին վանքը, որը բաղկացած է մի եկեղեցուց և կից գերեզմանոցից։

Գլխավոր եկեղեցին գտնվում է հիմնական խմբի կենտրոնում. դա ընդարձակածավալ, գմբեթավոր մի հոյակապ կառուցվածք է՝ երկարաձիգ ուղիղ քառանկյունի հատակա-

գծով։ Կողերի պատերը ներսից ունեն երկուական բավականին շեշտված ելուստներ, որոնցից ձգվող կիսասյուները միանալով անտաձև (հարթ) կամարներով գոտկում են թաղակապ ծածկը՝ իրենց վրա կրելով շքեղազարդ գմբեթը։ Արևելյան կողմում տեղավորված է բարձր և բավական առաջ ընկած բեմը՝ մշակված կիսաշրջան աբսիդի ձևով։

Արևելյան կողմի ելուստները շատ մոտ լինելով աբսիդին և կից լինելով բեմին, խորանների առջևում ստեղծել են նախախորանների ձևով շատ նեղ ու խոր տարածություններ։ Միակ շքամուտքը արևմտյան կողմից է։ Ցուրաքանչյուր ճակատից և դրանց համապատասխան գմբեթի չորս կողերից բացվում են մեկական կամարակապ լուսամուտներ։ Արևելյան, հարավային և հյուսիսային պատերի մեջ, արտաքուստ կան երկուական եռանկյունաձև մեծ խորշեր։ Պատերն արտաքուստ մշակված են զույգ պլանաձև որմնասյուների վրա հենվող գեղազարդող կամարաշարով։ Լուսամուտների շրջանակները ներկայացնում են հարթ պատի վրա քանդակված բուսական ու երկրաչափական ձևերի զարդաքանդակներ։ Աբսիդի պատերի մեջ կան յոթ հատ համաչափ դասավորված կամարակապ խորշեր, որոնք եզերվում են բարակ գլանաձև դոտկազարդերով. քիվերն ունեն կոդովանյուս զարդաքանդակներ։

Խիստ յուրահատուկ են գմբեթի կառուցման ձևը և նրա հարթաքանդակները։ Ընդհանրապես այդ հուշարձանը ոժտված է իր դարաշրջանին բնորոշ ճարտարապետական հատկանիշներով, որոշակի գեղազարդությամբ, որոնք մշակված են վերին աստիճանի նուրբ ձևով։ Ամբողջ շենքը կառուցված է վառ կարմրագույն ամուր տուֆ քարից, որն ավելի է դեղեցկացնում նրա տեսքը։ Նկատվում է, որ նրա կառուցողներն ունեցել են ոչ միայն մեծ հմտություն, այլև խիստ զարգացած ճաշակ։

ՄԱՐՄԱՇԵՆ — Վանքի ընդհանուր տեսարանը արևելքից

Եկեղեցին, ինչպես ասացինք առաջին գլխում, կառուցել է Պահլավունյաց Վահրամ իշխանը 986—994 թվականներին։

Երկրորդ եկեղեցին, որ գտնվում է գլխավոր եկեղեցու հյուսիսային կողմում, կառուցված է հար և նման գլխավոր եկեղեցուն, ինչպես ճարտարապետական ձևերի, այնպես էլ հարդարանքների տեսակետից, միայն դա համեմատաբար շատ փոքր է նախորդից։ Կառուցել է նույն Վահրամ Պահլավունին

994—1029 թվականների ժամանակաշրջանում։ Այդ հուշարձանը ավերակ վիճակում է, ըստ որի քանդված է ծածկը՝ գմբեթի հետ, արևմտյան պատը և հյուսիսային պատի մեծ մասը՝ մինչև արևելյան աբսիդը։ Կանգուն մնացած մասերից թափված է երեսապատման մեծ մասը։

Երրորդ եկեղեցին գտնվում է գլխավոր եկեղեցու հարավային կողմում. սա նույնպես գմբեթավոր փոքր շենք է, երկարաձիգ ուղիղ-քառանկյունի հատակագծով։ Ցուրաքանչյուր անկյունում ունի մի-մի փոքրիկ խորան, որոնք եկեղեցու հատակագիծը ներսից դարձնում են խաչաձև՝ ուղղանկյուն խաչթևերով։ Միակ, փոքրիկ դուռն արևմտյան կողմից է՝ զարգարուն շրջանակով։ Այդ հուշարձանից նույնպես թափված է երեսապատման քարերի, տանիքի ու գմբեթի վեղարի սալաքարերի մեծ մասը։ Թե երբ և ով է կառուցել այդ եկեղեցին, ստույգ հայտնի չէ, նրա ճարտարապետական ու կառուցողական ձևերը բնորոշ են ԺԱ—ԺԲ դարերին։ Դա նույնպես կառուցված է կարմիր տուֆի տաշված քարերով։

Դավիթը կամ ժամատունը գտնվում է գլխավոր եկեղեցու արևմտյան կողմում, կից, միանգամայն ավերակ վիճակում— պահպանվել են արևմտյան ու հյուսիսային պատերի ստորին մասերը՝ երկու մետր բարձրությամբ, հարավային պատի ստորին քարաշարը և ներսի չորս սյուների խարիսխները։

Պահպանված մասերը որոշակի կերպով ցույց են տալիս, որ նա կառուցված է գավիթներին հատուկ ձևով, այն է՝ ներսում եղած չորս սյուները և դրանց հանդեպ պատերի վրա եղած երկուական կիսասյուները միանալով կամարներով, կազմել են թաղակապ ծածկը, կենտրոնում հատուկ անցքով՝ հրդեհով։ Այդ գավիթը նույնպես կառուցել է Վահրամ Պահլավունի իշխանը՝ երկրորդ եկեղեցուց հետո. մինչև 1029 թվականը։ Նա հանդիսացել է Պահլավունյաց տան պանթեոնը։ Այդ գավթի մեջ են թաղված ինքը Վահրամ Պահլավունին, նրա թոռները՝ Ղարիբը և Գրիգորը և շատ ուրիշներ։ Հայտնի չէ, թե երբ է ավերվել այդ գեղեցիկ շենքը։

Չորրորդ կամ նոր պեղված եկեղեցին գտնվում է գավթի արևմտյան կողմում, որի մասին հարկ եղածին չափ խոսվեց համապատասխան գլխում։ Սակայն թե երբ է ավերվել այդ հրաշալի հուշարձանը՝ ստույգ հայտնի չէ։ Հայր Ալիշանը[2] տեղեկացնում է, որ 1801 թվականին ռուս-պարսկական պատերազմի ժամանակ հայերը Այլարատից դաղթելով՝ մի քանի օր մնում են Մարմաշենի վանքում, ուր Հովհաննես վարդապետ Ռսկերշյանը ընդօրինակում է մեծ եկեղեցին և թվում է ուրիշ չորս փոքր, ավերակ եկեղեցիներ, հավանաբար վանքի խմբին միացնելով նաև փոքր Մարմաշենը կամ Վերին վանքը։ Դրանից հետո ոչ մի հիշատակություն չկա այդ եկեղեցու մասին։ Նույնիսկ Հովհաննես եպիսկոպոս Շահխաթունյանը[3], Սարգիս վարդապետ Ջալալյանը[4] և Արել վարդապետ Մխիթարյանը[5] Մարմաշենի մասին գրած իրենց աշխատություններում չեն հիշատակում այդ եկեղեցին։

Այդ բոլորից, ինչպես և կատարված հնագիտական պեղումներից պարզ է դառնում, որ 1830-ական թվականներին Ղարսից եկած հայ գաղթականները, որոնք բնակություն հաստատեցին վանքի շուրջը, հարթում են այդ եկեղեցու փլատակները, վրան բնակելի շենքեր կառուցում՝ օգտագործելով եկեղեցու քարերը։

Գամբարանանման շենքը, որը բացվեց պեղումների ժամանակ, գտնվում է վերջին եկեղեցու և գավթի արանքում։ Փոքրիկ, մատուռի նմանությամբ մի շենք է, կառուցված կարմիր տուֆի տաշված փոքր քարերով, որի պատերի ստորին երկու քարաշարքերն են պահպանվել։ Միակ, շատ փոքրիկ մուտքը արևմտյան կողմից է։ Սրա կառուցման ժամանակը նույնպես որոշ չէ, սակայն գետնի մակերեսի նկատմամբ նրա ներսվածքից երևում է, որ պետք է կառուցված լինի ԺԱ դարում, գլխավոր եկեղեցու և գավթի կառուցումից հետո։ Չնայած ներսում չեն պահպանվել գերեզմանաքարեր, բայց անկասկած է, որ նա դամբարան պետք է եղած լինի և պատկանած լինի Պահլավունյաց տոհմին։

Գերեզմանոցը գտնվում է վանքի հուշարձանների խմբի արևելյան կողմում։ Հին գերեզմանների տապանաքարերը, որոնք բացվեցին պեղումների ժամանակ, երեսները հարթ ձևով են և գտնվում են եկեղեցիների հիմքերի հավասար բարձրության վրա։ Դրանց վրա հետագայում թաղված են նոր ընակիչների ննջեցյալները, որոնց գերեզմանների վրա որպես տապանաքար օգտա-

[2] Հ. Ղ. Ալիշան, «Նիբակ», Վենետիկ, 1881 թ., էջ 147—154։

[3] Հ. եպիսկ. Շահխաթունյան, «Մատենագրություն...», Էջմիածին, 1842 թ., հատ. Ա, էջ 270—277։

[4] Սարգիս վրդ. Ջալալյան, «Ճանապարհորդություն...», Տփխիս, 1842 թ., մասն Ա, էջ 223։

[5] Արել վրդ. Մխիթարյան, «Տեղագրություն Մարմաշենու», Վաղարշապատ, 1870 թ., էջ 3։

ՄԱՐՄԱՇԵՆ.— Երրորդ եկեղեցին
վերանորոգումից առաջ

գործվել են վանքի կառուցվածքների քանդված քարերը, խաչքարեր և Պահլավունյաց իշխանական տան անդամների գերեզմանների տապանաքարերը։ Գլխավոր եկեղեցուց մինչև հարավային փոքր եկեղեցին մի շարքով ընկած են մի քանի մահարձաններ, որոնց խաչքարերն անհայտացած են. մնում են միայն պատվանդանները, առվոներում գերեզմանաքարերով։

Փոքր Մարմաշենի կամ Վերին վանքի խումբը գտնվում է նախորդ խմբից քիչ դեպի հյուսիս, ձորակի մյուս ափին, փոքրիկ բարձունքի վրա։ Բաղկացած է մի եկեղեցուց և կից փոքր գերեզմանոցից։ Եկեղեցին կենտրոնագմբեթ փոքրիկ շենք է, խաչաձև հատակագծով՝ ուղղանկյուն խաչթևերով։ Արևելյան խաչթևն աբսիդային է, ուր տեղավորված է բեմը. դուռն արևմտյան կողմից է։ Հուշարձանն ավերակ վիճակում է. պահպանվել է հյուսիսային կես մասը, որի երեսապատ քարերի մեծ մասը պոկված է։ Գմբեթի թմբուկից պահպանված փոքրիկ մասը կլոր է և հիմքին փոխանցվում է առագաստների միջոցով։ Այդ հանգամանքը վկայում է, որ եկեղեցին ենթարկվել է հիմնական վերանորոգման։ Կանգուն մնացած մասերը շարված են կարմիր տուֆի սրբատաշ քարերով, կրաշաղախով. նրա կառուցողական ձևերը խիստ բնորոշ են է դարին։

Գերեզմանոցը տարածվում է եկեղեցու շուրջը. գերեզմանաքարերը գլխավորապես կարմիր տուֆից են՝ իրենց դարաշրջանին համապատասխան ձևով մշակված։ Կան նաև որձաքարից գերեզմանաքարեր՝ կիսամշակ ձևով։ Գերեզմանոցում կան մի շարք խաչարձան-մահարձաններ, որոնցից միայն պատվանդանների կրաշաղախ միջուկն է պահպանվել։ Կան նաև առանձին խաչքարերի բեկորներ ու նրանց պատվանդանները։

Այս գերեզմանոցում են թաղված Վահրամ Պահլավունի իշխանի կին Սոփիա տիկինը, նրանց Ապուղամր որդու կինը և ուրիշներ, որոնց գերեզմանաքարերը բերել և դրել են մեծ վանքի մոտ եղած գերեզմանոցում նոր թաղված նեղեցյալների վրա։

Գերեզմանոցում որպես տապանաքար օգտագործված են եկեղեցուն պատկանող և այլ բեկորներ։ Գերեզմանոցի հարավ-արևելյան եզրին ընկած է քարե կլոր սյան մեծ խոյակի հետաքրքիր մի բեկոր, որը հիշեցնում է Դվինի պեղումներից հայտնաբերված խոյակները, որի զարդաքանդակները խիստ բնորոշ են Զ—Է դարերին։ Նման

ՄԱՐՄԱՇԵՆ.— Երրորդ եկեղեցին
վերանորոգումից հետո

մի ամրողջական խոյակ դրված է Վերին Ղանլիջա գյուղի ավերակ եկեղեցու բեմում, որպես վիմագիր։ Թե որտեղից են բերված այդ խոյակները, հայտնի չէ, միայն պարզ է, որ նրանք պատկանում են խոշոր, մոնումենտալ ու գեղեցիկ շինության։

Այդ ավերակ եկեղեցին, որի բեմում դրված է նշված խոյակը, հիմնադրված է հին եկեղեցու փլատակների վրա։ Սորը կառուցել են 1830-ական թվականներին Ղարսից եկած և այդտեղ բնակություն հաստատած հայ դաղթականները։ Հին եկեղեցու մնացորդներն այդ վայրում վկայում են, որ այստեղ հնում բնակավայր է եղել։ Մարմաշենի վանքի գլխավոր եկեղեցու հյուսիսային պատի վրա եղած ընդարձակ արձանագրության մեջ, վանքին նվիրված կալվածների թվում հիշատակվում է նաև վանքը վերականգնողների սեփականությունը կազմող և վանքին պատկանող հողաբաժինների վրա հիմնադրված Տիրաշեն անունով գյուղը։ Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այդ հին բնակավայրը, որ սահմանվել են եկեղեցու մնացորդները և որի վրա նոր բնակություն հաստատեցին Ղարսից գաղթած հայերը, կոչվում Վերին Ղանլիջա, նշված արձանագրության մեջ հիշատակված Տիրաշեն գյուղն է։

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի Շինարարության և ճարտարապետական գործերի պետական կոմիտեն դեռ 1945 թվականից ձեռնարկել է Մարմաշենի վանքի հուշարձանների ընդհանուր վերանորոգման ու բարեկարգման աշխատանքներին։ Արդեն ամբողջապես ավարտված են փոքր եկեղեցու քանդված մասերի վերականգնման աշխատանքները, բարեկարգված է վանքի հողային տարածությունը։ Այժմ աշխատանքներ են տարվում երկրորդ եկեղեցու քանդված մասերը վերականգնելու և քայքայված մասերն ամրացնելու ուղղությամբ։

Դ) ՄԱՐՄԱՇԵՆԻ ՎԻՄԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. ԳԼԽԱՎՈՐ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՊԱՏԻ ՎՐԱ, ԱՐՏԱՔՈՒՍ.

1. Շնորհիւն Աստուծոյ ես Վահրամ Իշխանաց Իշխան և Անրիպատ Պատրիկ. որդի Գրիգորի իշխանի Հայոց Մեծաց, ի ցեղէ
2. Պահլաւունի եւ զարմից Սրբոյն Գրիգորի հայոց Լուսաւորչի, որ յաղագս ի Քրիստոս յուսոյն հիմնադրեցի զսուրբ եւ
3. զտիեզերական ուխտս Մարմաշեն, սկսալ ի Նեռ թուականին հայոց. յաւուրս Սմբատա որդւոյ Աշոտոյ հայոց
4. թագաւորի, մինչեւ ի ժամանակս Յովանիսի որդւոյ Գագկա հայոց շահանշահի՝ առն իմաստնոյ, շինողի եւ խաղա-
5. ղարարի, եւ ի թուականս հայոց ՆՀԸ եւ կատարեցաք մեծ ջանիւ եւ բազում ծախիւք՝ ես եւ մայր իմ Շուշիկ Հայոց
6. Տիկնաց Տիկին, եւ եղբարք իմ Վասակ Իշխանաց Իշխան որ նահատակեցաւ ի թուրքաց պատերազմի եւ Աբլխարիք
7. հայոց մարզպան և մանուկն Համզէ, որք էաք ամենայն տամբ եւ տոհմիւ հաւատարիմք տէրանց մերոց եւ նա-
8. հատակեալ ի վերա Տանս Հայոց՝ աշխատութեամբ եւ արեամբ մեր եւ որդւոց մերոց եւ գանձուց առատու-
9. թեամբ եւ ամենայն հնարիւք խնդրէաք գխաղաղութիւն աշխարհիս եւ զհաստատութիւն եկեղեցեաց։ Շինեցաք եւ այլ
10. բազում եկեղեցիս եւ վանորայս. բայց զտեղի հանգստեանս մերոյ առաւել պատուով մեծացուցաք և լիացուցաք
11. ամենայն գոյիւգ յերամբք եւ դաշտաւք. աւանդեցաք ի սա գեղս եւ ագարակս գանձագինս— զԲազարանի գեղ եւ գիւր ագա-

12. ռակն, զԳոդիսն եւ զՊորտանգն, զԱրագէն եւ զԱզատա, զԱսմանէն եւ
զեզնկայն։ Ի յԱւշականի այգիէ եւ Գ ջաղաց, եւ Բ ջաղաց
13. Ի Դողս, ի յԱշտարակի այգի, ի Կարբոյ դաշտի այգի, ի Սերկեւլէի այգի.
ի Վժան այգի, ի Մրենի այգիէ, ի յԱնի տեղ եւ կղզականի։
14. եւ զարդարեցաք զսա ամենայն կազմութեամբ ի յիշատակ յաւիտենից՝
մեզ եւ որդւոց մերոց եւ կարգեցաք ի ձեռն սուրբ հաւր
15. Երեմիայի եւ որ զկնի յաջորդեցաւ Սոսթենէսն, որին որդիացեալ եւ փո-
խարէն հատուցման ընկալեալ մեր ի ժառանգաւորաց
16. սուրբ ուխտիս տարին Զ քառասունք անխափան մինչեւ ի գալուստն Քրիս-
տոսի։ Արդ եթէ ոք ի մերոց կամ յաւտարաց աւագ որ զմեր զտուրս ի սուրբ
17. ուխտէս պակասեցանէ կամ հայր որ զմեր ժամս խափանէ ինքն որոշեալ
լիցի ի Քրիստոսէ եւ դատող նորա սատանա լիցի եւ մի տեսցէ նա զփառս
Աստուծոյ, իսկ որ
18. հաստատուն պահեն զաւանդս մեր աւրհնեալ եղիցին։

Բ. ՆՈՒՅՆ ՅԵՂ. ՆԱԽՈՐԴԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԿՈՂՄՈՒՄ.

1. Շնորհիւն Աստուծոյ ես Մարիամ Ափխազաց եւ Հայոց
2. թագուհի, դուստր Մեծին Սենիքերիմա եւ թոռն Դագկա
3. Հայոց Արքայի, որ եռու զՏարոն ի սուրբ եւ ի տիեզե-
4. ական ուխտս Մարմաշէն առաջնորդութեամբ հաւր
5. Սոսթենիսի՝ վասն Դագկա իմ պապոյն մեղաց թո-
6. ղութեան եւ Կատային՝ իմ հանկանն եւ հատուցումն
7. բարի ընկալա ի սրբոցս զսեանն եկեղեցին
8. զՍուրբ Պետրոսի ի Քրիստոս պատարագաւ զտարին ողջոյն
9. Կատային՝ իմ հանկանն մինչեւ ի գալուստն Քրիստոսի։
10. Արդ եթէ ոք ի մեծամեծաց կամ ի փոքունց, ի հայոց
11. կամ ի վրաց որ այս գրոյս հակառակ կա եւ զիմ գեղն զատ-
12. ռաս ի յայս ուխտէս հանէ, ինքն ելցէ ի կենացն Աստուծոյ
13. եւ պարտական լիցի արեանն Քրիստոսի եւ մի տեսցէ զփառսն Աստուծոյ.
14. իսկ որ հաստատուն պահեն զաւանդս մեր աւրհնեալ եղիցին։

Գ. ԳԼԽԱՎՈՐ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՅՈՒՍԻՍԱՑԻՆ ՊԱՏԻ ՎՐԱ, ԱՐՏԱՔՈՒՍՑ.

1. Ի ժամանակս քարեպաշտից եւ աստուածասիրաց պատարագաց մերոց Աթա-
բակ Իւանէի եւ մանդատոր թախուցէս Շահնշահի, հրամանաւ սոցին վեր-
2. ըսին նորոգումն եղեւ հրաշափառ տաճարի Աստուծոյ, մա(ր)ս լուսոյ
սրբոյ կաթողիկէիս Մարմաշիեցոյ, ի ձեռն որդւոց Ապուղամրի Մագիս-
տրոսի Տէր
3. Գրիգորոյ արքիեպիսկոպոսի եւ հարազատի իմոյ Ղարփին, բոռանց Վար-
համա իշխանաց իշխանին, զարմից եւ շառաւեղի սրբոյն
4. Գրիգորի շինողի ի հիմանց մեծաւ տենչութեամբ եւ յուսով զսայ վասն
բազմագումար քահանայից եւ պարգեւեալ արդիւնս յոլովս՝ գեղ-
5. աւրայս, այգեստանս, կուղպականի եւ ջաղացանի, որ եւ ցուցանէ իւր
արձանագիրն մի բան միջէ, եւ փարթամացուցեալ ամենայն
6. գայիք տո ի լեռոյ եւ առուեալոյ զգէտս կարեւորս զիւրեանց եւ զեկաց.
եւ ունէր ժամանակ իբրեւ ոչ սակաւս զի
7. աւերեալ էր յանաւրինաց եւ զվանքս գեղ արարեալ զկաթողիկէս բերդա-
նման ամրացուցեալ կայր ի խաւարի եւ ի սգաւորութեան

8. զրկեալ յամենայն զոյից մինչև յաւուրս յայսոսիկ. իսկ ի ՈՉԴ բուա-
կանիս հայոց քաջ եւ արի զաւրականն Քրիստոսի
9. սիրելի եղբայրն իմ Խարիփն իմով կամակցութեամբ խորհուրդ բարի ի
միտ արկեալ ազատել զսա ի տղմուտ եւ զազիր մթնա-
10. զգածութենէն հասուցանել նախկի փառաւորութեանն հանեալ արտաքս
զչինականսն, եւ եղեւ բնակաւան սրբոց Հաճանայից եւ
11. կրաւնաւորաց հանոյացելոց Աստուծոյ. զարդարեցաք զսա սպասիւք պայ-
ծառազգեստիւք եւ սրբութեամբք ոսկեղէն եւ արծաթեղէն եւ
12. Հին եւ Նոր Կտակարանաւք եկեղեցականաւք: եւ ընծայեցաք ի սմայ
նուէր հայրենի գեղն զԱզատա եւ որ ի վանիցս հողիս
13. վէրայ շինեցաք եւ անուանի Տիրաշէն եւ ի յայսկոյս գետոյն ջաղացանի
որ կան ի կարմրնջեն ի վայր եւ ի վեր, զխոտ, զհող, եւ
14. զոր ինչ ի սկզբանէ ունէին, եւ քաղաքիս զմեր պապենի հայրենիք եկե-
ղեցին զՍուրբ Ստեփանոս բոլոր ամենայն ժողովրդ-
15. եամբն, եւ երկու այգի ի Մարմետի որ ի նախնեաց մերոց ի մեզ էր հա-
սեալ. եւ միաւորեցաք զՎերի վանքն մեծ վանիցս իւր ամենայն
16. ստացուածաւք եւ լիցի հրամանաւ միոյ առաջնորդի: Մինչ այս առ այս-
չափ կատարեցաւ առժամայն գեղեցկագեղ եղբայրն իմ Խարիփ
17. Մագիստրոսն գովեալն յամենայն լեզուաց մարտիրոսացաւ ի պատե-
րազմի անաւրինաց, եւ միայն մնացի ես՝ Գրիգոր եղկելի եւ զրկեալ
ի նմանէ:
18. Զմարմին նորա բերեալ թաղեցաք առ դրանս սրբոյ կաթողիկէիս մերձ առ
նշխարս հաւուն մերոյ Վարճամա իշխանի, եւ փոխարէն հատուսցին սպա-
19. սաւորք սորա ընդ մերոյն արդեանցս զոր արարաք զկաթողիկէիս զաւագ
խորանին պա(տարագ)ն յանուն նահատակին (առն) Խարփին կատարել
յամենայն աւր
20. ի սկզբանէ տարոյն մինչեւ ցկատարումն տարոյն յայսմհետէ մինչ ի ծա-
գումն Որդոյն Աստուծոյ: Որ ոք խափանէ կամ շորթել ջանայ ընչից
21. եկեղեցոյս որոշեսցի ի փառացն Աստուծոյ եւ զրկեսցի ի մշտնջենական
կենացն: Կատարիչք գրելոյս աւրհնեսցին յԱստուծոյ եւ ի սրբոց նորա
ոգի եւ մարմին:

Դ) ՏԱՊԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. ՎԱՆՔԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԿՈՂՄԻ ԳԵՐԵԶՄԱՆՈՑՈՒՄ

1. Այս ճանգիստ է Սոփեա աղախնի Քրիստոսի, կնոջ Վահրամա Պահ-
լաւունոյ Իշխանաց Իշխանի,
2. դստեր Տիգրանա հայոց մարզպանի տեառն Անձեւացեաց Մեծին Վաս-
պուրա-
3. կանի կիսաւրեա առ Աստուած փոխեցա եւ թողի զաւակս իմ տրտում.
աղա-
4. չեմ յիշե(ս)ջիք ի Քրիստոս եւ Աստուած ձեզ ողորմեսցի: Թուին ՆԿԴ:

Բ. ՓՈՔՐ ՄԱՐՄԱՇԵՆԻ ԿԱՄ ՎԵՐԻՆ ՎԱՆՔԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆԸ

1. Զշնաւորիկ քարգարձս յիշեց(էք ի Քրիստոս):

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՄՈԶԱԻԿ ՆԿԱՐԱԶՈՒԹՅԱՆ ԱՐՎԵՍՏԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ*

ԴԱՎԻՆԻ ՄՈԶԱԻԿԱՆ

Գառնիից հետո Հայաստանում հայտնաբերված մոզաիկաներից ամենահինը Դվինի մոզաիկան է։ Հանդիսանալով հին Հայաստանի գլխավոր մշակութային կենտրոններից մեկը, Դվինը պատմության մեջ խոշոր դեր է խաղացել։ Պատմականորեն Դվինի զարգացումը զուգադիպել է հայկական ճարտարապետության ու արվեստի վերջնական ձևավորման շրջանին։

Հայաստանի այս պատմական մայրաքաղաքի ավերակները վաղուց իրենց վրա հրավիրել են հայ և օտար հնագետների ուշադրությունը։ 1899 թվականին Ռուսական կայսերական հնագիտական հանձնաժողովի հաշվետվության մեջ տպված են հետախուզական պեղումների նկարագրությունները Դվինի մասին։ Պրոֆ. Մարից հետո, Դվինում պեղումներ է կատարել Էջմիածնի Հայրիկյան թանգարանի և հնագիտական պեղումների տեսուչ խաչիկ վարդապետ Դաղբաշը։

Դվինի ուսումնասիրությունը, սակայն, գիտական հողի վրա դրվեց և լայն ծավալ ստացավ 1937 թվականից հետո։ Նպատակ ունենալով ի հայտ բերել և ուսումնասիրել 4-րդից մինչև 13-րդ դարին պատկանող Հայաստանի երբեմնի մայրաքաղաք Դվինում հայ ժողովրդի մշակութային արժեքների ստեղծման ճշմարտացի պատմությունը, Հայաստանի գիտությունների ակադեմիայի գիտական արշավախումբը լուրջ հայտնություններ հասավ հայկական ճարտարապետության հնագույն նմուշների հայտնաբերման և ուսումնասիրության բնագավառում։

Դեռևս 1907 թվականին խաչիկ վարդապետ Դաղբաշը պեղումներ է կատարել Դվինի կաթողիկե եկեղեցում և հյուսիսային կողմից բեմի վրա, երկու կանգուն խորության մեջ հայտնաբերել է մոզաիկ հատակ և Տիրամոր գլուխը։ Զվարթնոցից «Արարատ» ամսագրին ուղարկած իր հոդվածում նա գրում է.

«Դվնա կաթողիկեի թե՛ հատակը և թե՛ առաստաղը մոզաիկաներով զարդարված է եղել. հյուսիս-արևելյան փոքր սեղանի հատակի վրա մնացել է, գախտի բերմամբ, Դվնա Աստվածամոր գլուխը. ձախ աչքի մոզաիկաները թափված. երեսի, բերանի մասը նույնպես։ Հատակի վրա արևմտյան և հարավային դռների կողմից բավական տարածությամբ մոզաիկ հատակ զանազան գույնզգույն քարերով (Ի) զարդաձև բանված-քով։ Տաճարի պատերի ծեփերը նույնպես զանազան գույներով ներկած, ինչպես Զվարթնոց եկեղեցում։ Թե՛ հատակի և թե՛ առաստաղի մոզաիկաներից, նույնպես և պատերի ծեփերի ներկած կտորներից բավական քանակությամբ ունեմ ապակեծածկ դարակներում դասավորված»[19]։

Ահա այն ամենը, ինչ որ ասված է կաթողիկե եկեղեցում պեղումներ կատարող խաչիկ վարդապետ Դաղբաշի փոքրիկ հոդվածում։ Սակայն այդ մոզաիկայի մասին ամսագրի խմբագրության տված տեղեկություններում կան ավելի մանրամասնություններ։ Ամբողջական է մնացել դեմքի կես մասը և աջ աչքն ամբողջապես, ինչպես նաև աջ այտի կեսը, ճակատը՝ մազերի հյուսվածքով և նեմբուսը։ Ձախ կողմում նկարված են բացված ծաղիկներ։ Լուսանկարչի տված տեղեկությունների համաձայն, այդ մոզաիկան կազմված է եղել գույնզգույն քարերից և ոչ թե ապակիներից, ինչպես Զվարթնոց

* Նարտանկված ամսագրի 1957 թվականի N N 8—9-ից և 9-ից։

19 «Արարատ», Էջմիածին, 1907 թ., հուլիս-օգոստոս, էջ 660։

եկեղեցու խաչը։ Գունեղագույն քարերից մեծերը մոտավորապես տասը կոպեկանոցի մեծություն են ունեցել։ Նրբություն արտահայտող մասերի, ինչպես այտի և աչքի քարերը ավելի մանր են եղել։ Նեմբուսը կազմված է եղել սև քարերից, մազերի հյուսվածքը՝ բաց, աչքը՝ մուգ-շագանակագույն, կոպերը, ինչպես և բիրը՝ ավելի սեագույն քարերից։

Դժբախտաբար, Հայաստանի այս հիանալի մոզաիկ դիմանկարը չի հասել մեր ձեռքը։ Մոզաիկայի հայտնաբերման օրից երկու տարի անց՝ 1909 թվականին կողոպտվել ու անհայտացել է այն ամենը, ինչ որ ձեռք էր բերվել Խաչիկ վարդապետ Դաղյանի պեղումների հետևանքով։ Այս թանկարժեք նյութերի կորուստի առթիվ Էջմիածնի «Արարատ» ամսագրում տպագրված իր հոդվածում Խաչիկ վարդապետը գրում է.

«... Թուրքերը, օգտվելով բացակայությունից, անհավատարիմ պահապանների շնորհիվ ջարդ ու փշուր են անում պահարան-դարակները և միջի հնությունները ոչնչացնում։ Բերդերից և շրջականներից ժողովված դրամներս գողանում են։ Խեցեղեն ամանները կոտրատում, իսկ Տաճարի միջի հարավ-արևմտյան անկյունում աղյուսով թաղակապ շիրիմների միջից հանած հայրապետական զգեստների ժողովածուն ոչնչացնում են կտոր-կտոր անելով։ Հյուսիս-արևելյան կողմնակի սեղանի հատակի վրայի մոզաիկ Աստվածամոր գլուխը ոչնչացնում են, ժամանակավոր թանգարանի փայտեղեն նյութերը, ծածկը և պարագաները հափշտակում»[20]։

1937 թվականից հետո Դվինում կատարված լայնածավալ պեղումները նոր լույս են սփռում Դվինի մոզաիկաների կերտման ժամանակաշրջանի բնաբանման և մոզաիկաների առանձնահատկությունների վերհանման վրա։

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պետական պատմական թանգարանի կողմից 1951 թվականին Դվինի կաթողիկե եկեղեցում կատարված պեղումները ցույց են տվել, որ այդ եկեղեցին հնագարյան մեհյան է եղել, և Հայաստանում քրիստոնեական կրոնը պետականորեն ընդունվելուց հետո վեր է ածվել եկեղեցու։ Տարով այդ եկեղեցու պեղման արդյունքները, հատկապես կաթողիկեի երկրորդ հատակի նկարագրությունը, հնագետ-պատմաբան պրոֆ. Կ. Ղաֆադարյանը գրում է.

«Կաթուղիկեի այս երկրորդ հատակը նշանավոր է այն բանով, որ ծածկված է եղել բնական քարերից կազմված խճանկարով, որի հետքերը բացվել էին դեռևս 1938 թվականին, իսկ 1951 թվականին այդ մոզաիկան մեծ ծավալով հայտնաբերվեց եկեղեցու արևմտյան մասում, իր բուն տեղում։ Դեռևս եկեղեցու կանգուն ժամանակ, երբ նորոգել են եկեղեցին, խճանկարի երեսը ծածկել են կրաշաղախի թանձր շերտով, ուստի և այժմ խիստ դժվար է բաց անել նրա երեսը, որովհետև խճանկարի հատիկները վերին կրաշաղախին ավելի են կպած, քան թե տակի շերտին։ Մոզաիկ հատակը շինելու համար նրա տակ լցրել են մի շերտ քար և այդ շերտի երեսին, կրաշաղախի վրա, մեկ քառակուսի սանտիմետրից ավելի փոքր մակերես ունեցող գունեղագույն խորանարդաձև խճաքարերը դասավորել են գեղեցիկ երկրաչափական ձևերով»[21]։

Դվինում մեզ չհաջողվեց տեսնել այդ մոզաիկան, որովհետև այն խճամքով ծածկված էր հողով՝ հետագայում նրան տեղափոխելու նպատակով։ Սակայն Դվինի հնաբերդում կազմակերպված թանգարանում մենք ուշի-ուշով դիտեցինք այդ մոզաիկայի դունավոր վերարտադրությունը։

Ինչպես նորագույն պեղումների տվյալները ցույց են տալիս, Դվինի կաթողիկեն կառուցված է եղել հեթանոսական շրջանում։ Պատմությունից հայտնի է, որ քրիստոնեության սկզբնական շրջանում հեթանոսական մեհյանները վերածվել են եկեղեցու, նպատակ ունենալով դրանով արմատախիլ անել հեթանոսական կրոնը։ Այս երևույթը ընդհանուր է եղել ոչ միայն Հայաստանում, այլև բազմաթիվ այլ երկրներում (Բյուզանդիայում, Նուբիայում, Հռոմում)։

Դվինի կաթողիկե եկեղեցու վերաբերյալ գոյություն ունի մի ավանդություն, որի մասին հիշատակում են մեր հին պատմագիրները։ Այդ ավանդության համաձայն, երբ դվինցի Շավասպ Արծրունին և Վնգոն փորձել են վերականգնել հեթանոսական կրոնը Հայաստանում, նրանք առաջին հերթին աշխատել են կաթողիկե եկեղեցին նորից վերածել հեթանոսական մեհյանի, որովհետև համոզված են եղել, որ այն սկզբից էլ մեհյան է եղել։ «... Ինչ էլ որ լինի, մի բան պարզ է,— գրում է պատմաբան-հնագետ Կ. Ղաֆադարյանը,— որ Դվինցի Վնգոն և Շավասպ Արծրունին մեհյանի այդ տեղն ընտրել էին ոչ թե պատահական կերպով, այլ այն պատճառով, որ այդտեղ հնում

[20] «Արարատ», Էջմիածին, 1909 թ., փետրվար, էջ 178։

[21] Կ. Ղաֆադարյան, «Դվին քաղաքը և նրա պեղումները», Երևան, 1952 թ., էջ 88։

ատրուշան է եղել, որն այն ժամանակ դեռևս մնացել էր մարդկանց հիշողության մեջ»[22]։ Այս կարծիքն է հայտնել ավելի առաջ նաև Թ. Թորամանյանը[23]։

Կաթողիկե եկեղեցու վերաբերյալ այս պատմական ստույգ տեղեկությունները մեզ խիստ անհրաժեշտ են՝ որոշելու համար Դվինում գտնված երեք մոզաիկաների (հատակը, առաստաղը և մոզաիկ կիսանդրին) կերտման դարաշրջանը։

Հակառակ մինչև այժմ հայտնված կարծիքների (ըստ որում և մեր), Դվինի պեղումների նորագույն արդյունքներին ծանոթանալուց հետո, մենք հակվում ենք այն տեսակետին, որ Դվինի բոլոր մոզաիկաներն էլ հեթանոսական ծագում ունեն, հեթանոսական դարաշրջանի ստեղծագործություններ են։

Ի՞նչ փաստեր կան մեր կարծիքը հիմնավորելու համար։

Իր արժեքավոր աշխատության մեջ, պրոֆ. Կ. Ղաֆադարյանը, տալով Դվինի կաթողիկե եկեղեցու պեղումների արդյունքները, նկարագրելով կաթողիկեի երկրորդ մոզաիկ հատակը, ենթադրում է, որ այդ փաճանկարը պատկանում է եռանավ բազիլիկ տաճարին, հետևապես նա 5-րդ դարի գործ է և վերաբերում է կա՛մ 450 թվականի և կա՛մ Վահան Մամիկոնյանի 480-ական թվականներին կատարած նորոգությանը[24]։ Իսկ խաչիկ վարդապետ Դադյանի պեղումներով 1907 թվականին հայտնաբերված մոզաիկ կիսանդրին, որ դրվել է եկեղեցու հյուսիսարևելյան փոքր սեղանի հատակի վրա, համարվում է 7-րդ դարի գործ, որովհետև այդ տարիքը շինված է 7-րդ դարում և հատակի խճանկարի հետ ոչնչ կապ չունի[25]։

Մենք կարծում ենք, որ թե՛ մոզաիկ հատակը և թե՛ «Տիրամոր գլուխը» շատ ավելի վաղ շրջանի, հեթանոսական դարաշրջանի ստեղծագործություններ են և չեն կարող կերտված լինել Վահան Մամիկոնյանի 480-ական թվականներին կատարած նորոգության ժամանակամիջոցում։ Բացի այդ, եռանավ բազիլիկաների գոյությունը հայկական ճարտարապետության մեջ շատ ավելի հին է։

Կ. Ղաֆադարյանը ոչ ճիշտ եզրակացության է հանգում նաև մոզաիկաների գեղարվեստական մասնակի վերլուծման գործում։ Նա գրում է, որ 5-րդ դարի մոզաիկ մնացորդներն ունեն միայն երկրաչափական ձևեր, իսկ 7-րդ դարը՝ կոմպոզիցիոն նկարները։ Բացի այդ, 7-րդ դարի խճանկարների հատիկները խիստ կերպով հնից տարբերվում են իրենց նրբությամբ»[26]։

Բոլորովին էլ այդպես չէ։ Գառնիի նորահայտ մոզաիկան, ինչպես նաև հնագարյան այլերկրյա հեթանոսական մոզաիկ արվեստը հակառակն են ապացուցում։ Գառնիի հայկական մոզաիկան, իր կոմպոզիցիոն նկարով և մարդկանց ու կենդանիների նուրբ գծագրությամբ, ցույց է տալիս, որ հայ մոզաիկ նկարիչները կարող էին ստեղծել և ստեղծել են արվեստի հիանալի գործեր։

Խաչիկ վարդապետ Դադյանն էլ իր գտած մոզաիկ փոքր կիսանդրին անվանել է «Աստվածամոր գլուխ», երևի ենթադրելով, որ Ս. Գրիգոր եկեղեցում գտնված յուրաքանչյուր հնությունը անպայման քրիստոնեական ժամանակաշրջանի գործ կլինի։ Ավելի հնարավոր է ենթադրել, որ դա հայ հեթանոսական աստվածուհիներից մեկի կիսանդրին է, որ կերտել է մի անանուն մոզաիկ նկարիչ։ Դվինի կաթողիկե եկեղեցու հյուսիսային բեմի վրա երկու կանգուն խորության մեջ հայտնաբերված մոզաիկ հատակն ու նրա վրա գտնված մոզաիկ կիսանդրին Հայաստանում քրիստոնեական կրոնը պետականորեն հաստատվելուց առաջ, հին դարաշրջանի ստեղծագործություններ են։ Ճշգրիտ կերպով անհնար է որոշել այդ մոզաիկաների կերտման տարեթիվը այն չափով, որչափով որ մեզ անհայտ է, թե ե՞րբ է հիմնվել Դվինի հեթանոսական մեհյանը (կաթողիկե եկեղեցու սկզբնական շինությունը), սակայն հավանական է, որ այդ մոզաիկաները 4-րդ դարից առաջ են, նախքան քրիստոնեության Հայաստանում պետական կրոն հռչակվելը։

Մեր այս ենթադրությունը հաստատում են Դվինի մոզաիկաների շինանյութերն ու տեխնիկան։ Դվինի թե՛ մոզաիկ հատակը, թե՛ առաստաղը և թե՛ աստվածուհու գլուխը պատրաստված են բնական պարզագույն լավ մշակված քարե խորանարդիկներից։ Շինանյութերի մեջ չի կիրառված գունավոր ապակին, որը հաստատում է մոզաիկայի հնությունը։ Սակավաթիվ գույներն ու երանգները նույնպես ապացույց են մոզաիկայի հնության։ Աստվածուհու մոզաիկան կազմված է գունազարդ քարերից, մոտավորապես տասը կոպեկանոցի մեծությամբ,

22 Կ. Ղաֆադարյան, «Դվին քաղաքը և նրա պեղումները», էջ 88։

23 Թ. Թորամանյան, «Նյութեր հայկական ճարտարապետության պատմության», հատ. 1-ին, Երևան, 1942 թ., էջ 214։

24 Կ. Ղաֆադարյան, «Դվին քաղաքը և նրա պեղումները», էջ 88։

25 Նույն տեղում։

26 Նույն տեղում, էջ 88—89։

իսկ այտի և աչքի քարերը ավելի մանր են։ Այդ դիմանկարը կերտելու համար կիրառված են մի քանի դույնի խիճեր։ Նիմբուսը կազմված է սև քարերից, մազերը բաց սեվաթույր են եղել, աչքերը՝ մուգ-շագանակագույն, իսկ կոպերն ու աչքի բիրը՝ ավելի սեպագույն քարերից։

Այդ մոզաիկաների մասին եղած ժլատ տեղեկություններից անգամ երևում է, որ նրանք կերտված են «օպուս տեսալատում» տեխնիկայով։ Դվինի պեղումների նկարագրությունից երևում է, որ մոզաիկ հատակը շինելու համար նրա տակը լցրել են մի շերտ քար և այդ շերտի երեսին, կրաշաղախի վրա շարել են գույնզգույն խորանարդաձև խճաքարերը»,— գրում է Կ. Ղաֆադարյանը իր աշխատության մեջ։ Այս ձևով կազմված մոզաիկան պատկանում է «օպուս տեսալատում» տեխնիկային, երբ նախապես տափանված շերտի երեսին պատրաստում են 2—3 սմ. հաստությամբ գետին, որ բաղկացած է լինում մեկ մասը կրաքարային խմորից, երկու մասը կվարցե ավազի, մեկ կամ մեկ և կես մասը շատ մանրացած աղրուսի կամ կղմինդրի և որոշ քանակությամբ վուշի կամ ընկույզի յուղի խառնուրդից։ Այս տեսակ պատրաստած գետինը շատ լավ է պահպանում մոզաիկաները։ Դվինի մոզաիկ հատակն էլ «օպուս տեսալատում» տեխնիկայով է կառուցված, երբ այդպիսի գետնի վրա շարել են քարերի խորանարդիկները և, նկարի նախագծի համաձայն, ստեղծել են զանազան երկրաչափական ձևեր ու պատկերներ։ Այս տեխնիկայի կիրառման դեպքում քարե խորանարդիկները լավ մշակված, հղկված են եղել։

ԶՎԱՐԹՆՈՑԻ ՄՈԶԱԻԿԱՆ

Զվարթնոցը կառուցել է Ներսես Գ Իշխանեցին, որը քաղաքական նկատառումներով Դվինից փոխադրվեց այնտեղ։

Մովսես Կաղանկայտվացու վկայությամբ, հույների Կոստանդին Գ կայսրը, որ ներկա է եղել Զվարթնոց տաճարի օծման արարողությանը, այնքան հիացած է եղել նրա դեղեցկությամբ, որ հրամայել է եկեղեցին կառուցող ճարտարապետին իր հետ մեկնել Կոստանդնուպոլիս, այնտեղ ևս նման եկեղեցի կառուցելու համար։ Բայց ճանապարհին ճարտարապետը մահացել է։

Զվարթնոցը հարուստ է եղել նրբաճաշակ զարդաքանդակներով։ Կամարաղեղների եռանկյուններում քանդակված են մարդկային դեմքեր։ Ճարտարապետ Վ. Հարությունյանը[27] ենթադրում է, որ դրանք Զվարթնոցը կառուցող ճարտարապետների և վարպետների դիմանկարներն են, իսկ քարերից մեկի վրա փորագրված «Յոհան» անունը Զվարթնոցի գլխավոր ճարտարապետի անունն է։

Ուշադրության արժանի է 1,26×1,26 մետրանոց քարե սալի վրա փորագրված արևի ժամացույցը և մի քարե սալ Ներսես Գ-ի կողմից դրած հունարեն արձանագրությամբ, որի մեջ ասված է. «Կառուցել է Ներսեսը, հիշեցնելով։ Ներսես Գ կաթողիկոսի անունը հիշատակված է նաև հյուսածո խոյակների վրա՝ փակագրիրով։ Խոյակի մի կողմում գրված է «Ներսէս», իսկ մյուս կողմում՝ «Կաթողիկոս»։

Զվարթնոց եկեղեցին հարուստ է խաղողի ողկույզների և այլ մրգերի զարդաքանդակներով։

Զվարթնոցի հոյակապ ճարտարապետությունը մենք չէինք ունենա, եթե ականավոր գիտնական, ճարտարապետ Թորոս Թորամանյանը 1904 թվականին լացված ավերակներն ու բազմաթիվ բեկորները մանրամասն չուսումնասիրեր և չչափագրեր, որի հիման վրա և կազմել է եկեղեցու նախագիծը։

Զվարթնոցի ճարտարապետությունը մեծ ազդեցություն է ունեցել Հայաստանի հետագա ժամանակների ճարտարապետության վրա (Թալինի մեծ տաճարը, Արուճի տաճարը, Եղվարդի եկեղեցին)։

1937 թվականից Զվարթնոցում գործում է հատուկ թանգարան, որտեղ ցուցադրվող նյութերի մեջ կան ճարտարապետական բեկորներ, խճապատվերների (մոզաիկայի) և որմանկարների պատառիկներ, սմալտաներ (խճապատկերների գույնզգույն խորանարդիկներ) երկաթե իրեր, գույնզգույն գլազուրով պատած կավամաններ, կարասներ, ծեփվածքի կտորներ, որոնց վրա պահպանված են արձանագրություններ զանազան լեզուներով։

Զվարթնոցի եկեղեցին հայ ղեղարվեստի պատմության մեջ բացառիկ տեղ է գրավում։ Այդ եկեղեցին 7-րդ դարի հայ ճարտարապետության մեծագույն կոթողն է, որ իր վրա է հրավիրել ճարտարագետների և արվեստագետների ուշադրությունը։ «Եթե Զվարթնոցի բոլոր զարդարանքները ձուլածո ոսկիով և արծաթով շինվեին,— գրում է հայ ականավոր ճարտարապետ Թ. Թորամանյա-

27 Վ. Հարությունյան, «Զվարթնոց», Հայպետհրատ, Երևան, 1947 թ., էջ 16։

ներ,— այնքան սքանչացում չպիտի պատճառեին, որչափ որ կպատճառեն ներքուստ ուրբ սյուներու վրա կախված կրկնակ հսկա գմբեթները և գմբեթներու խարիսխը կազմող ութ աղեղները, որոնք արտաքին պատին զուգահեռական կորությամբ ձգված են մեկ սյունեն դեպի մյուսը»։

«Զվարթնոցի ավերակները պարզապես կծաղրեն մեր այսօրվա գիտական օրենքներուն վրա հիմնված դատողությանց երբին հաշիվները. եթե նախքան Զվարթնոցի գտնվելը նույն ծրագիրը հրապարակի վրա դրվեր, ներկա արվեստագետներ, տոկտուվով լցված, խելագար պետի համարեին ներկայացնողը, բայց իրականությունը լռեցուցած է ամեն հավակնոտ բերաններ»[28]։

Այսպիսի բարձր գնահատական են տվել և մյուս մասնագետները, որոնք քննության են առել Զվարթնոցի ճարտարապետական և զարդանկարչական առանձնահատկությունները։

Զվարթնոց եկեղեցու ավերակները պատահաբար հայտնաբերվեցին 1888 թվականի օգոստոս ամսին վիեննացի գիտական Ստրչիգովսկու կողմից, որ եկել էր էջմիածին մեր ամենահին փղոսկրյա ավետարանն ուսումնասիրելու։ Ճիշտ է, դրանից առաջուա ակադեմիկոս Կոնդակովը (1880-ական թվականներին) տեսել էր Զվարթնոցի խոյակները, սակայն ենթադրել էր, որ դրանք էջմիածնի տաճարի մնացորդներ կլինեն, վերանորոգման ժամանակ դեն նետված։

Զվարթնոցում առաջին անգամ՝ 1893 թվականին պեղումներ է կատարել Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանը, սակայն ցարական կառավարության կողմից պաշտոնական արտոնագիր չունենալով, 1900-ին հայիկ վարդապետ Դադյանին է վիճակվում պեղումները շարունակել։

Զվարթնոցի պեղումները, տրոշ ընդհատումներով, տևեցին քսան տարի և, պետք է ասել, լիովին արդարացրին ակնկալված հույսերը։ Ճարտարապետ Թ. Թորամանյանի քրտնաջան աշխատանքի շնորհիվ վերականգնվեց ընդհանրապես հռոմեական-բյուզանդական-հունական և հայկական տճերի խառնուրդ ներկայացնող Զվարթնոց եկեղեցու հատակագիծը, որ մի չքնաղ ստեղծագործություն է, հայտնաբերվեցին գեղարվեստական բարձրարժեք զարդաքանդակներ, սրմանագարդեր, խաչքար, գրեստների մնացորդներ, մոզաիկայի և որմանկարների պատառիկներ, սմալտաներ, գունդգունդ շնարավով պատած կավե ամաններ, կարասներ, զանազան իրերի մնացորդներ և այլն։

Զվարթնոց եկեղեցու մասին հայկական գրավոր սկզբնաղբյուրներում չափազանց հետաքրքրական տեղեկություններ կան։

Այդ եկեղեցին նկարագրել է եկեղեցու կառուցման ականատես Սեբեոս պատմագիրը, որ հիացմունքով է խոսում եկեղեցու մեծության ու շքեղության մասին[29]։

Զվարթնոցի մասին խոսում են նաև Մովսես Կաղանկատվացին, Թոմա Արծրունին, Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցին, Ստեփանոս Ասողիկը, Սամվել Անեցին, Մխիթար Այրիվանեցին, Վարդան Բարձրբերդցին և Կիրակոս Գանձակեցին։ Այս բոլոր պատմագիրները հիացմունքով են խոսում Զվարթնոցի գեղեցկության մասին, այդ եկեղեցին անվանելով՝ «որպէս աստվածակերտ փարախ», «զարմացուցիչ տեսողաց», «զարմացուցիչ տիեզերաց»։

Զվարթնոցի կառուցումը սկսվել է 641 թվականին և ավարտվել է 661 թվականին։ Եկեղեցին կանգուն է մնացել 300 տարի։ Զվարթնոցը կառուցված է 7-րդ դարում. դրանից ավելի հին է Տեկորի տաճարը (5-րդ դար), իսկ ամենից հինը Գառնին է։

Կարո՞ղ էր ճարտարապետական այնպիսի մի հոյակապ հուշարձան, ինչպիսին է Զվարթնոցը, մոզաիկաներ չունենալ։

Գրավոր հին աղբյուրներում Զվարթնոցի մոզաիկայի առկայության մասին առաջին անգամ հիշատակում է 10-րդ դարի արաբ մատենագիր Ալ-Մուկադդասին։ Նա գրել է.

«Դուբիլից (Դվինից) երեք փարսախ հեռավորության վրա գտնվում է սպիտակ, տաշած քարերից շինած ութը սյուների վրա [նստած] գմբեթաձև դպխարկի նմանող մի եկեղեցի, որի մեջ դտնվում է Մարիամ կույսի նկարը։ Որ դռնից էլ [ներս] մտնես [եկեղեցի], դու կտեսնես Մարիամ կույսի պատկերը»[30]։

Զվարթնոցի մոզաիկաների բեկորները, որոնք գտնվել են տաճարի արևելյան աբսիդի վրա,—ասում է հնագետ պատմաբան Կ. Ղաֆադարյանը,—ապացույց են այն բանի, որ 10-րդ դարի արաբ մատենագիր Ալ. Մուկադդասիի գրածը Զվարթնոցի վերաբերյալ միանգամայն ճիշտ է, իսկ, ինչպես հայտնի է, Զվարթնոցը կործանվել է 925 թվականին տեղի ունեցած երկրաշարժից։ Ըստ Գարեգին վարդապետ Հովսեփյանի, որ հայ

28 Թ. Թորամանյան, «Հայկական ճարտարապետություն», Երևան, 1948 թ., էջ 176։

29 Սեբեոս, գլ. ԼԳ, էջ 192—193։

30 Ալ-Մուկադդասի. «Ախսանատ տեկասիմի ֆի-մարիֆատ—Լակալիմ», «Նյութերի ժողովածու Կովկասի վայրերի և ցեղերի նկարագրության համար», Թբիլիսի, 1908 թ. (ռուսերեն)։

արվեստի մասնագետներից մեկն է։ Զվարթնոցը կործանվել է այդ եկեղեցին կառուցող Ճարտարապետի սխալ հաշվարկումների հետևանքով (գմբեթի ծանրությունը սխալ տեղաբաշխելու համար)։

Խաչիկ վարդապետ Դադյանի կատարած ոչ մասնագիտական պեղումների հետևանքով ոչնչացել է եկեղեցու սեղանի կիսաբոլորակ մոզաիկ հատակը։ Վերջինիս նույնիսկ անշան նկարագրությունը չենք գտնում Խաչիկ վարդապետ Դադյանի հոդվածում, որը տպագրված է Էջմիածնի «Արարատ» ամսագրում։ Պեղումները ցույց են տվել, որ Զվարթնոցն ունեցել է մոզաիկ զարդարանքներ։ Զվարթնոցի թանգարանում (որ կազմակերպվել է 1937 թվականից) ցուցադրված իրերի մեջ կան մի շարք ճարտարապետական և մոզաիկ պատառիկներ։

Բացի մոզաիկ հատակից, Խաչիկ վարդապետ Դադյանի կատարած պեղումների ժամանակ գտնվել է մի մեծ խաչի բեկոր, որ արժանի է լուրջ ուշադրության։ «Ավերակների առակից,—գրում է Մեսրոպ վարդապետը,—սեղանի մասում գտնվել է մի մեծ կտոր մոզաիկա, մոտավորապես 60—70 սմ. մեծությամբ, որ ներկայացնում է մեծ խաչի բեկոր։ Հավանական է, որ նա ընկել է սեղանի կիսաբոլորակ ծածկից։ Մոզաիկ զարդերը պետք է որ ընդարձակ տարածություն բռնած լինեն, որովհետև բացի այդ մեծ կտորից, փոքրիկ բեկորներով և հատ-հատ գունզգույն քարերով լիքն են եղել ավազն ու խիճերը։ Խաչիկ վարդապետի կարդությամբ մի մշակ զբաղված էր հատկապես այդ քարերը ժողովելով։ Փոքրիկ քառակուսի քարերը կա՞մ սեփական գույն ունեն, կա՞մ ներկված են միայն դրսի երևացող կողմից»։[31]

Այս նկարագրությունից կարելի է եզրակացնել երկու բան. նախ, որ Զվարթնոց եկեղեցում գոյություն է ունեցել մեծ մոզաիկ խաչ, և երկրորդ՝ եկեղեցու սեղանի կիսաբոլորակ հատակը մոզաիկապատ է եղել։ Այն հանգամանքը, որ մոզաիկ բեկորներով և հատ-հատ գունզգույն քարերով լիքն են եղել ավազն ու խիճերը, որի հետևանքով մի մարդ զբաղվել է այդ մոզաիկ քարերի հավաքմամբ, ցույց է տալիս, որ Զվարթնոց եկեղեցին ունեցել է հարուստ մոզաիկա։ Այնուհետև պարզվում է, որ գտնված մոզաիկ խաչի թևերը ոսկեգույն են, վեց շարքով և եղերված մի շարք կարմիր քարով։ Ճաճանչները սպիտակ գույն ունեն, իսկ խաչի թևերի և ճաճանչների միջև եղած տարածությունը լցված է շրջանաձև արծաթե գորշ ու կապույտ շլյուտերով։

Ահա այն ամենը, ինչ գոյություն ունի Զվարթնոցի մոզաիկաների մասին։

Այս ժլատ տեղեկություններն էլ հնարավորություն են տալիս որոշակի եզրակացության հանգելու։ Ամենից առաջ՝ Զվարթնոցի մոզաիկան քրիստոնեական բնույթ ունի (Դառնիինը՝ հեթանոսական է)։ Մոզաիկ հատակի մասին առանձին բան չենք կարող ասել, որովհետև չգիտենք, թե դա կոմպոզիցիոն նկա՞ր է եղել, թե՞ երկրաչափական գծանկար, մոզաիկ հատակը ավելի՞ հին է, քան մոզաիկ խաչը,—այս ամենը մնում են անհայտության մեջ։ Իսկ մոզաիկ խաչի առկայությունը բավական է մոզաիկայի քրիստոնեական բնույթը որոշելու համար։ Խաչի նկարագրությունից երևում է, որ այդ մոզաիկայում որպես շինանյութ կիրառված է նաև ոսկին, որ բյուզանդական մոզաիկաների հատկանշական կողմն է, հատկապես Հուստինիանոսի ժամանակներում։ Ոսկու և արծաթի կիրառումը լայն տարածում է գտել բյուզանդական մոզաիկաներում։ Զվարթնոցի մոզաիկ խաչի կերտման մեջ կիրառված են բնական գույնի քարերը, բացակայում են սմալտան և գունավոր ապակին։

Այս առանձնահատկությունները ցույց են տալիս, որ Զվարթնոցի մոզաիկաները պատրաստված են տեղական շինանյութերից՝ գունավոր քառակուսի քարերից։ Թե քանի գույն և երբերանգ ունի մոզաիկ խաչը կամ հատակը,— այդ ևս հնարավոր չէ պարզել։

Ե՞րբ են ստեղծագործվել այդ մոզաիկաները, ո՞վ է եղել մեծ խաչի նկարիչը, ո՞ւմ գործերն են մոզաիկ զարդերն ու հատակը Զվարթնոցում,—այս մասին անհնար է որևէ խոսք ասել։ Մի բան միայն կարելի է հաստատապես պնդել, որ եթե Զվարթնոցը կառուցվել է 641—661 թվականներին,— իսկ սա պատմական փաստ է,—ապա մոզաիկ հատակն ու խաչը կերտվել են եկեղեցու կառուցումից հետո, որովհետև շենքի ավարտումից հետո միայն կատարվում են ներքին կահավորման, դեղարվեստական ձևավորման, քանդակազարդման, նկարազարդման աշխատանքները։

Զվարթնոցում գտնվել են նաև որմանկարների բեկորներ[32], որոնք արժանի են ուշադրության։ 7—10-րդ դարերում քիչ եկեղեցիներ կան Հայաստանում, որ նկարազարդ են։ Դրանցից մեկն է Զվարթնոցը, որ ունեցել է որմանկարներ։

31 Մեսրոպ վարդապետ, «Էջմիածին և Հայոց հնադույն եկեղեցիները», Էջմիածին, պր. Ա, էջ 55—56։

32. Վ. Հարությունյան, «Զվարթնոց», էջ 19։

(Շարունակելի)

Գ. ՆԱՋԻԿՅԱՆ

(Մանկավարժական գիտությունների թեկնածու)

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԻՆԴԼՅԱՆԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ*

Հինդլյանի պաշտպանած և զարգացրած ուսուցողական արվեստի սկզբունքների ու մեթոդների մեջ բացառիկ ուժով ընդգծվում է գիտելիքները կյանքի հետ կապելու կարևոր սկզբունքը։ Նրա համար կրթությունը ինքնանպատակ չէ, ոչ էլ արտաքին զարդ կամ հիշողությունը, երևակայությունը, մտածելու կարողությունը զարգացնելու միջոց միայն։ Նա հասարակական մեծ թերություն էր համարում այն հանգամանքը, երբ դպրոցի շրջանավարտները «չեն գիտեր իրենք իրենցմե խորհիլ, իրենք իրենցմե զգալ, ձեռներեցության ոգի չունին... ու ընկերային այդ մեծ թերության գլխավոր պատասխանատուն է մեր դասարակության եղանակը, որ ազատ, անձնական աշխատության չի վարժեցներ աշակերտները, խորհելու և գործելու միջոցներ չընձեռեր անոնց»[23]։

Ինչի է պետք, օրինակ, «եթե տղան գիտե, թե ինչպես կհաշվեն եռանկյան մը մակերեսությունը, բայց երբ եռանկյունաձև պարտեզի մը առջև չկրնա հաշվել մակերեսությունն, հայտնի է, թե այս հմտությունը բացարձակապես անարժեք է իր համար, քանի որ օգուտ մը չի կրնար քաղել իր գիտցածենն»[24]։

Հինդլյանը ենթադրությունների կողմնակից չէ։ Աշակերտների մեջ գործնական հմտությունների զարգացումը չափազանց է կարևոր ի հակակշիռ մտավոր զարգացման։ Նա գրում է. «Կարելի եղածին չափ շատ առիթներ տվեք տղան գործելու. ֆիզիկական, իմացական և բարոյական խորունկ ունակություններ ստանալու համար գործել պետք է... փոխանակ քարոզելու, ընել տվեք, գործել տվեք, քիչ խոսք, շատ գործ, կյանքի մեջ գործը ավելի արժեք ունի, քան խոսքը։ Երազատեսներ մի՛ հասցնեք, այլ գործող անհատականություններ»[25]։

Հինդլյանը ուզում էր նաև «որդեգրել ուսուցման մեթոդ մը, որ ոչ միայն ծանոթություններ տա, այլ մանավանդ ուժվցնե միտքը և սիրտը»։ Այս տեսակետից էլ նա մեծ նշանակություն էր տալիս ուսումնական առարկաներին, մանավանդ ուսումնական ծրագրերին, խիստ անհրաժեշտ համարելով թեթևացնել դրանք, նրանցում բաժին տալով երեխաների ընթերցանության, ինքնուրույն աշխատանքներին, նրանց բանավոր և գրավոր խոսքի վարժություններին, շարադրություններին և զեկուցումներին։

Այս շատ համառոտակի շարադրանքը ցույց է տալիս, որ Հինդլյանը իր դիտակտիկական առաջավոր հայացքներով դպրոցի դերը է խաղացել պոլսահայ դպրոցի կյանքում, արժանանալով հասարակության, ուսուցիչների բարձր հարգանքին։

2. Հինդլյանին շատ են զբաղեցրել բարոյականության և երեխաների բարոյական դաստիարակության հարցերը։ Հասարակական-մանկավարժական մտքի շատ ներկայացուցիչների նման, նա այդ հարցերը քննության է առնում մարդկանց տնտեսական դրությունից, դասակարգային շահերից անկախ։

Բայց Հինդլյանը հավատում էր ժամանակակից հասարակության մեջ տիրող «կենաց պայքարը», «ազգությանը» և «եսասիրությանն ոգին»։ Նա անկեղծորեն հավատում էր, որ դաստիարակությունը ի վիճակի է փոխել այդպիսի դրությունը, եթե նա մարդուն դաստիարակի համամարդկայնության ոգով,

* Շարունակված ամսագրի 1957 թվականի № 8—9-ից։

23 Անկեղծ էջեր, հատ. Գ, էջ 101։

24 Նույն տեղում, հատ. Ա, էջ 168։

25 Նույն տեղում, հատ. Գ, էջ 153։

բարոյական վեհ ու ազնիվ նկարագրով։ Նա ուզում էր, որ դպրոցը ընդհանրապես (այդ թվում իր գիշերօթիկ և ցերեկային մասնավոր դպրոցը) իր նշանաբանն ունենա փիլիսոփա Ֆիխտեի ասածը՝ «ցույս, սեր, կյանք»։

Չհրաժարվելով իր հաստատ համոզմունքներից ու ձգտումներից և քիչ թե շատ օգտագործվելով սահմանադրությունից հետո տրված խոսքի ազատությունից, Հինդլյանը իր բազմաթիվ հոդվածներում («Պետք է նոլոգել կրթությունը», «Նոր կազմական կանոնագիր» և այլն), բացահայտում է ժամանակի դպրոցներում տիրող քարացած սովորություններն ու նախապաշարմունքները։ Նա գրում էր, որ դպրոցում ընությունից օժտված այդ ուրախ, առույգ, սրամիտ ու շարժուն երեխաները «հմայության և թախծության կդատապարտվին։ Դիտելու և դատելու կարողության ծիլերը կսպանվին անոր մեջ և ձեռներեցության ոգին չեն թույլատրեր անոր, ու մտքի զիրությունը կմշակեն անոր մեջ, ու կեղծիքի ամեն տեսակ ստորությանց կվարժեցնեն զայն, մարդը պզտիկցնելով, նվազեցնելով այսպես անոր մեջ, ամեն երևակայելի և անհերևակայելի միջոցներով»[26]։

Պետք է քանդել այդ դպրոցը,— գրում էր նա,— և ստեղծել նորը, որի նպատակը պիտի լինի «մարդը կազմել տղան մեջ, և ոչ թե տղան հրահանգել այնպես, ինչպես կհրահանգեն, կմարզեն անասունը»։ Հինդլյանը բարձր էր գնահատում դը Մոլեի, Լև Տոլստոյի հիմնած մասնավոր դպրոցների հաջողությունները, որտեղ էլ հաշվի էին առնվում երեխաների տարիքային և հոգեբանական առանձնահատկություններն ու պահանջները, հարգում էին երեխաների արժանապատվությունը, այդ դպրոցներում վերացվել էին մարմնական պատիժները, մեծ ուշադրություն էին դարձնում երեխաների հետաքրքրությունները, ինքնագործունեությունը և ճաշակը զարգացնելու, սիրտը ազնվացնելու վրա։

Ելնելով Երեխաների բնությունը, ազատությունն ու արժանապատվությունը հարգելու սկզբունքից, Հինդլյանը առանձնապես դուրս է գալիս դպրոցում տիրող կույր ու անվերապահ հնազանդության, արհեստական կարգապահություն դաստիարակող մեթոդների դեմ։ Հինդլյանը պահանջում էր, որ և՛ դրպրոցում և՛ ընտանիքում գործադրվող բարոյական դաստիարակության մեթոդները նպատակ ունենան զարգացնելու երեխաների կամքը, գիտակցությունը, պատասխանատվության զգացմունքը՝ իրենց պարտականությունների ու նպատակների նկատմամբ։

Այդ նպատակին հասնելու միակ ճիշտ ուղին համոզման և հարկադրանքի մեթոդների խելացի զուգակցումն է, ծնողների և ուսուցիչների համաձայնեցված գործակցությունը։ Հինդլյանը բացառիկ դաստիարակչական ուժ ու դեր է վերագրում օրինակին, մասնավորապես ուսուցչի անձնական օրինակին։

Դեռ Կոստանդնուպոլսի Բերայի մանկավարժական լսարանում կարդացած դասախոսությունների մեջ, նա խիստ քննադատության է ենթարկել եզվիտների հակաբանական մանկավարժական սիստեմը և ապագա ուսուցիչներին կոչ է արել հետևել «կրթիչ մանկավարժության» նոր սկզբունքներին։ «Իրավ է,— գրում է Հինդլյանը,— թե հիսուսյաններու վարժոցներուն մեջ կարգ ու կանոնը, լռությունը կատարյալ էր, բայց ինչպես ուսուցչությունը, ինչպես ամեն բան, նույնպես և այդ բարեկարգությունը արվեստական էր հոն, այդ բարեկարգությունը չէր պարտուց դիտակցության վրա հիմնված բարեկարգությունը, զոր կպահանջեն կրթիչ մանկավարժությունը»[27]։

Ըստ Հինդլյանի կարգապահությունը հիմնված է հնազանդության վրա, բայց ճշմարիտ կարգապահությունը պիտի հիմնված լինի ինքնակամ և ոչ կույր հնազանդության վրա։ «Այս կերպ,— ասում է նա,— հնազանդությունը ունի իմացող տարր մը, թե՛ այն տարիքին մեջ, յորում տղան կգգա իր տգիտությունը, և հավատք ունի իր վերակացուներուն վրա, և թե՛ այն հասակին մեջ, ուր պատանին կըմբռնե իրեն տրված պատվերի ոգին։ Բարոյական չէ այն տեսակ հնազանդությունը,— շարունակում է նա,— որ ոչ խորհողութենե և ոչ ինքնարավութենե կրխի և բարոյական չէ այն պատվերը, ուր տղան չընդնշմարեր մեր սերն հանդեպ իրեն։ Ո՞ր տղան չպիտի ուզեր հնազանդիլ իր դաստիարակի հրամանին, որ պիտի զգար վեհ անկեղծության խորաթափանց դորովը շեշտ մը»[28]։

«Հնազանդությունը կարևոր է,— շարունակում է նա,— բայց հնազանդության վարժեցնելու համար ամեն միջոց անխտիր հանձնարարելի չէ. չի կարելի արդարացնել մարմնական պատիժները, ոտղուն արժանապատվությունը, անոր մարմնույն փափկությունը, ամեն բան դեմ կելնեն մարմնական պատիժներու դրության»[29]։

Հինդլյանը դեմ էր նաև բարոյական սին քարոզներին և հորդորներին, անտեղի պարսավանքներին, պարգևներին և դովասանք-

26 Անկեղծ էջեր, հատ. Գ, էջ 90։

27 Փունջ մանկավարժական բանախոսության, էջ 55։

28 Նույն տեղում։

29 Անկեղծ էջեր, հատ. Գ, էջ 337։

ներին, որոնք չեն արդարացվում երեխաների դիտակցությամբ։ Երեխաների մեջ «բարի զգացմանց ծիլեր ձգելու և նրանցից «բարձր» նկարագրի տեր մարդ կազմելու համար, Հինդլյանը ամենաճիշտ և ապահով միջոցը համարում է այն բազմաթիվ օրինակները, զորս կարելի եղածին չափ պետք է քաղել տղուն աչաց առջև տեղի ունեցած իրողություններեն, օրվան դեպքերեն, ըստ մանկավարժական այն սկզբունքին, թե՝ պետք է պարզեն ի բաղդրյալն, դյուրինեն ի զբաղարինն, իրականեն ի փոխաբերականն երթալ, մնաց որ ամեն դաս՝ ընթերցանություն, պատմություն, թվագիտություն, բնական գիտություններ, և այլն, նյութ կմատակարարի բարոյականի, բավական է, որ դաստիարակը գիտնա առիթեն օգուտ քաղել»[30]։

Այդ բոլորը սակայն դեռ բավարար պայմաններ չեն համարվում երեխաների ճիշտ դաստիարակության համար։ Որպեսզի բարոյական պահանջները իրենց մարմնացումը գտնեն երեխաների առօրյա գործունեության ու վարքի մեջ, Հինդլյանը կարևոր է համարում, որ դաստիարակի զրույցները, բացատրություններն ու համոզումը ազդեն ոչ միայն մտքի ու հիշողության վրա, այլև նրանց հոգու, զգացմունքների վրա։

«Տղան կարող է գոց զրուցել, թե որոնք են յուր դանազան պարտականությունները, թե պետք է արդարասեր և ողորմած ըլլալ, թե ամոթ է ագահ ու անձնասեր ըլլալ, այս ամենեն ապացույց մը չէ տղուն բարոյականի տեր ըլլալուն։ Որպեսզի բարոյական մշակությունն սպասված արդյունքն հառաջ բերե, անհրաժեշտ պայման մը կա, այն է թե՝ պետք է տղուն հոգին հուզե. ուսմանց մեջ,— ավելացնում է նա,— ինչ որ սիրտեն չի բխիր, սիրտը չի թափանցեր»[31]։

Երեխաների բարոյական ճիշտ դաստիարակության համար Հինդլյանը բացառիկ նշանակություն է տալիս աշխատանքային դաստիարակությանը։ Այդ հարցում, հայ մանկավարժության մեջ և դպրոցի կյանքում նա հանդես է գալիս ոչ միայն որպես ականավոր մանկավարժների աշխատանքային դաստիարակության վերաբերյալ գաղափարների եռանդուն քարոզիչ, այլև այդ բնագավառում ձեռք բերած իր փորձի արգասիքներով։

«Բան մը ստույգ է,— գրում է Հինդլյանը,— այդ բանը սա է, որ կյանքին գլխավոր արժեքը աշխատության մեջ է։ Աշխատությունն է աղբյուր զորության, ուրախության, վստահության և երջանկության։ Առանց ա-նոր ամեն մարդ դժբախտ է»[32]։

Հինդլյանը դպրոցում ձեռքի աշխատանքի առարկա մտցնելու և երեխաների մեջ աշխատելու սեր և ունակություններ պատվաստելու անհրաժեշտությանը չի մոտենում նեղ գործամոլության, մասնագիտացման տեսակետից։ Նրա համար աշխատանքը, ձեռարվեստը ամենից առաջ դիտվում է որպես մարդու ֆիզիկական, մտավոր և բարոյական դաստիարակության խոշոր գործոն։ Ձեռքի աշխատանքի նշանակությունն այն է, որ նա «հավասարակշռություն մը կհաստատե մտավորական և ֆիզիկական կարողությանց մեջ»[33] և բացի այդ, «ձեռարվեստի միջոցով մարդ կազնվանա»[34]։

Աշխատանքային դաստիարակությունը դպրոցում՝ ձեռքի աշխատանքի միջոցով «արհեստ մը սորվելու համար չէ»,— գրում է Հինդլյանը և նշում, որ «ադիկա մասնագիտական վարժարաններու գործ է, այլ՝ իր հակակշիռ իմացական պրկումին, իրրև միջոց ձեռքի ճարտարարության մշակման, ու նաև՝ իրրև թանկագին միջոց՝ իմացական կարողությանց զարգացման, ինչպես նաև խել մը տեսական դիտելյաց ապահով յուրացման»[35]։

Հ. Հինդլյանի դպրոցում աշակերտները սովորում էին փորագրություն, կավմարարություն, կավագործություն, նորոգում էին դանազան իրեր, գործիքներ, պատրաստում խաղալիքներ։ Նա հատուկ նշանակություն էր տալիս կահագործության, հողամշակության և անասնարուծության։ Բարձր դնահատելով ձեռքի աշխատանքի կրթա-դաստիարակչական նշանակությունը և այդ բնագավառում ընդհանրացնելով իր փորձը, Հինդլյանը նշում էր, որ «... Այսոր շատ թերի ուսմանց ծրագիր մը պիտի ըլլա այն ծրագիրը, որ չի պարունակեր ձեռական աշխատություններ»[36]։

Բարոյական դաստիարակության այս պահանջներն ու միջոցները Հինդլյանը տարածում է նաև երեխաների ընտանեկան դաստիարակության բնագավառի վրա։ Ավելին. նա ճիշտ կերպով նշում է, որ «դպրոցին դաստիարակությունը թերի է առանց ընտանեկան դաստիարակության և լավագույն դաստիարակը չի կրնար ծնողքին տեղը բռնել»[37]։

---

30 Անկեղծ էջեր, հատ. Ա, էջ 61։

31 Նույն տեղում, էջ 62։

32 Նույն տեղում, հատ. Գ, էջ 356։

33 Նույն տեղում, հատ. Ա, էջ 134։

34 Նույն տեղում, հատ. Գ, էջ 360։

35 Քանհինգ տարվա կյանք մը, էջ 49։

36 Անկեղծ էջեր, հատ. Գ, էջ 155։

37 Նույն տեղում, էջ 365։

Հետևաբար, «դպրոցին և ընտանիքին գործակցությունը անհրաժեշտ պայման է դաստիարակության գործին հաջողության համար»[38]։ Հինդլյանը դաստիարակչական հզոր ուժ է վերագրում հատկապես մայրերին, գտնելով, որ «ոգայն պետք է դաստիարակել յուր ամենեն մատաղ տարիքեն, սկսյալ այն ժամանակ, երբ երեխայն մայրը միայն ունի իբր դաստիարակ. նկարագրի կազմությունն այդ տարիքեն կսկսի արդեն»[39]։

Այս շատ կարևոր հանգամանքը նկատի ունենալով է, որ Հինդլյանը յուրջ ուշադրություն էր հրավիրում աղջիկների ճիշտ ու խելացի դաստիարակության խնդրի վրա, այդ հարցում ևս քննադատական սուր դիտողություններ անելով կնոջ կոչման ու դերի մասին գոյություն ունեցող հետադիմական հասկացողություններին ու նրանց նկատմամբ ցուցաբերվող ոչ ճիշտ վերաբերմունքի դեմ։

Հինդլյանը մերկացրել է պրոֆ. Մանուվրևի այն փարձերը, որոնց նպատակն է եղել ապացուցել «կնոջ ուղեղի ցածր լինելը տղամարդու ուղեղի համեմատությամբ», ինչպես նաև դոկտ. Մյոպյուսի «կնոջ բնախոսական սկարության վրա» աշխատության մեջ առաջ քաշված ոչ գիտական տեսակետները, մի աշխատություն, որն այն ժամանակ մեծ աղմուկ էր հանել Գերմանիայում։ Այդ գրվածքի մեջ հեղինակը ձգտել է ապացուցել «կնոջ խելքի բնականորեն ցածր լինելը տղամարդու խելքից», որը, իբր թե, «հանդես է գալիս ֆիզիկական և հոգեկան նկարագիրներով», որ իբր թե կնոջ ուղեղն ավելի պզտիկ ու ավելի թեթև է եղել, և թե «բնազդն է տիրում նրանց իմացականության վրա, որ նրանք քննասեր միտք չունեն»[40], և այլն և այլն։

Այդ ոչ ճիշտ դաղափարից այն հետևությունն էր արվում, որ կնոջ դերը մարդկության մեջ մայրությունն է միայն, որ մտավոր աշխատանքը վնասում է նրան։

«Ժամանակներն ու բարքերը փոխվեր են, բարեշրջության օրենքն է, որ կկատարվի»,— գրում էր Հինդլյանը։ Նա ողջունում էր կանանց մեջ սկսված առաջադիմական շարժումը։ Կոստանդնուպոլսի «Դպրոցասեր տիկնանց ընկերության վարժարան»-ի վերարացման առթիվ գրած իր հոդվածում (1909 թ.), նա նշել է, որ կանայք պետք է տղամարդկանց հետ միասին ընդհանուր զարգացում ստանան, տեղյակ լինեն արվեստին ու գրականությանը. նրանք նույնպես ազատ կերպով պետք է փորձեն իրենց ուժերը և յուրջ զարգացում և գրագիտություններ ունենան, ինչպես տղամարդիկ։ «Ամուսնությունը պիտք է զարդի առնուր մ'ըլլալ, շահու վրա հիմնված, կամ կույրկուրայն»[41],— գրում է Հինդլյանը։ Նա գատապարտում է ծնողների հին սովորություններն ու նախապաշարմունքները, որոնք «սատակվին, ընդհանրապես աղջիկները կմնծցնեն սորկության մեջ։ Անոնք անմասն են կարծես, բոլոր մարդոց իրավունքը եղող ազատություններեն ու անկախություններեն»[42], Հինդլյանը արգահատելի էր համարում քաղքենիությունը, հարուստ դասակարգի աղջիկների վիճակը, որոնց սեռուն հայացքը ոչ այլ ինչ է, եթե ոչ ամուսնությունը միայն։ «Զանձրացած խոշոր բեբեքներ (կուկլա) են անոնք,— գրում է նա,— անգործությանմեջ թրմբեցնելով իրենց ջիղերը, վիպասանություններով զրդեցնելով իրենց երևակայությունը, ապարդյուն մսխելով իրենց կյանքի ամենեն բեղմնավոր հասակը, սպասելով իրենց նշանածին, որ երբեմն շատ կուշանա ներկայանալու, և երբեմն ալ բնավ չի դար»[43]։

Հինդլյանը անչատ և երկսեռ ուսման մասին եղած շատ տարածված վիճաբանություններին մեջ հանդես է գալիս որպես համատեղ ուսման ջերմ կողմնակից, գտնելով, որ «դպրոցներու մեջ մանչ և աղջիկ միասին մեծցնելու սովորությունը ամենաքանկագին միջոցը պիտի ըլլար, իմ կարծիքս, սեռական բանավոր հրահանգմանեն»[44]։

Ինչպես տեսնում ենք, թեկուզ և այս համառոտակի շարադրանքը ցույց է տալիս, որ Հ. Հինդլյանի մանկավարժական հայացքների մեջ բազմակողմանի քննության են առնվում դաստիարակության և կրթության այն կարևոր հարցերը, որոնք հսկայական նշանակություն ունեին հայ դպրոցի կյանքում 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին։

Հինդլյանի մանկավարժական դաղափարների այս համառոտ շարադրանքը թերի կլիներ, եթե դանց առնվեր այն առաջավոր հայացքը, որ նա ուներ ուսուցչի նկատմամբ։ Ինչպես նշվեց, Հինդլյանը խիստ քննադատության էր ենթարկում պոլսահայ դպրոցների, հատկապես կեդրոնական վարժարանի ծրագրերն ու կանոնագրերը, ուսուցման մեթոդները, պահանջելով, որ ուսման բովանդակությունը, ուսուցման սկզբունքները և դասավանդման մեթոդները արձագանքեն կյանքի պահանջները և ապահովեն երեխաների բազմակողմանի զարգացումը։

---

38 Անկնդծ էջեր, հատ. Ա, էջ 58։

39 Նույն տեղում, էջ 155։

40 Նույն տեղում, հատ. Դ, էջ 78։

41 Նույն տեղում, էջ 93։

42 Նույն տեղում, հատ. Գ, էջ 35։

43 Անկնդծ էջեր, հատ. Գ, էջ 378։

44 Նույն տեղում, էջ 117։

Զբաղեցնելով մանկավարժական պահանջներով ու հմտությամբ կազմված ծրագրերի և դասագրքերի մեծ նշանակությունը դաստիարակության ու կրթության մեջ, Հինդլյանը վճռական դեր է վերագրում ուսուցչին, որովհետև նրա համար չկա «ավելի դժվար բեֆեիֆ մը, քան տղա մը դաստիարակելու բեֆեիֆը»[15]։ Իր մանկավարժական երկարամյա գործունեության ընթացքում Հինդլյանը եկել է այն ճիշտ և հաստատ համոզման, որ «ամենեն հոռի կանոնագիրն ու ծրագիրը լավագույն արդյունքները կուտան ձեռնհաս դաստիարակին ձեռաց մեջ, ամենեն կատարյալ կանոնագիրն ու ծրագիրը ապարդյուն կմնան անկարող դաստիարակին ձեռաց մեջ»[16]։

Հինդլյանը այն կարծիքին էր, որ «գերմարդկային կամ գոնե 'գերմարդու կարողություն' կպահանջե դաստիարակի ասպարեզը», որովհետև «դաստիարակությունը ընդարձակ, մանվածո, փափուկ գործ մըն է»։

«Ամեն դպրոցական օրենք,— գրել է նա իր տեսչական օրագրում,— որքան ալ բարձր ու անշահախնդիր, ազատական միտքերու ծնունդ ըլլա, կանոնագիրներ, որքան ալ կատարյալ ըլլան, և ծրագիրներ, որքան ալ ճոխ ու բարեկազմ ըլլան, իդեաներ կամ նույնիսկ երազներ են միայն, մինչև որ լգործադրվին կարող դաստիարակներու ձեռքով»[17]։ Այստեղից էլ նա այն հետևությունն է անում, որ «դպրոցը այն ատեն միայն լուսո վառարան կըլլա, երբ իրենց պաշտոնին բարձրության արժանի մարդոց կողմանե կկառավարվի»։

Ահա թե ինչու Հինդլյանը շատ բարձր էր գնահատում ուսուցչի ստեղծագործական ինքնուրույն աշխատանքը, մանկավարժական ընդհանուր պատրաստությունն ու դասավանդելու վարպետությունը։

Ավելին. այդ պահանջները դեռ բավարար հատկանիշներ չեն ուսուցչի համար։ Հինդլյանը ուսուցչի այդ կարևոր հատկությունների հետ պահանջում էր նաև, որ նա «ազնվական և ուղիղ նկարագիր ունենա», որովհետև նրա անձնավորությունը, վարքն ու բարքը, վճռական ազդեցություն է գործում աշակերտի զարգացման ու ձևավորման վրա։

Հինդլյանը ցավով արձանագրում էր, որ «առավել կամ նվազ չափով հմուտ ուսուցիչներ ունինք, բայց ազնվական նկարագրով՝ հուսահատեցուցիչ կերպով քիչ»։

Հինդլյանը շատ անգամ է վրդովվել և կսկիծով արձանագրել հայ ուսուցչի նյութական խղճալի վիճակը։ «Ոչինչ ավելի ողորմելի է, քան թրջահալ ուսուցչին նյութական վարձատրությունը, ու ոչինչ ավելի քմահաճ, անարդար ու անհավասար»[18],— գրել է նա 1911 թվականին։

Հինդլյանը խիստ քննադատում էր այն թաղականներին, հոգաբարձուներին, որոնք իրենց տգիտությամբ, քմահաճ վերաբերմունքով և անիրավություններով տեղն ու տեղը խեղդում էին հայ ուսուցչի ամեն մի արդարացի պահանջն ու բողոքը, սպառնալով «անոթութենե մեռցնել զինքը»[19]։

Նա պահանջում էր ոչ միայն բարվոքել ուսուցչի նյութական վիճակը, այլև ստեղծել ուսուցիչներ պատրաստող մի հատուկ հաստատություն, որովհետև լավ դպրոցներ ունենալու համար,— նշում էր նա,— լավ ուսուցիչներ պիտի ունենալ, և լավ ուսուցիչներ ունենալու համար՝ վարժարանոց։

***

Կարելի էր շատ ավելի մանրամասն ու հանգամանորեն շարադրել Հ. Հինդլյանի մանկավարժական հայացքները, բայց այդ աշխատանքը հնարավոր չէ ներկայացնել ամսագրի սուղ էջերի միջոցով։

Մեր նպատակն էր համառոտակի ձևով ընթերցողներին ցույց տալ Հինդլյանի հիմնական գաղափարները դաստիարակության ու կրթության վերաբերյալ, որոնց դժբախտաբար մեր մամուլը մինչև այժմ ուշադրություն չի նվիրել։

Հ. Հինդլյանը մեր այն մանկավարժներից է, որը հանդես է եկել հին և իր ժամանակի դպրոցի թերությունների քննադատությամբ։ Նա հայ մանկավարժության մեջ ու դպրոցի կյանքում պաշտպանել, քարոզել և տարածել է առաջավոր, նոր գաղափարներ։

Առանձնապես գնահատելի է Հինդլյանի վերաբերմունքը ռուսական առաջավոր մանկավարժության նկատմամբ, մի հանգամանք, որը նշանակություն ունի հայ և ռուսական մանկավարժական մտքի սերտ կապերն ավելի խոր կերպով ուսումնասիրելու և լուսաբանելու տեսակետից։

Նա տարածել և զարգացրել է ուսուցողական արվեստի այնպիսի սկզբունքներ և դասավանդման մեթոդներ, որոնք դգալի դեր են խաղացել կրթության գործի բարելավման մեջ արևմտահայ դպրոցում։

Անշուշտ, նրա արծարծած և պաշտպանած որոշ մանկավարժական սկզբունքներ մեզ համար անընդունելի են, նրա որոշ տեսակետներն իրենց վրա կրում են սահմանա-

15 Քսանհինգ տարվա կյանք մը, էջ 246։

16 Անկեղծ էջեր, հատ. Գ, էջ 50։

17 Նույն տեղում, հատ. Ա, էջ 164—165։

18 Նույն տեղում, հատ. Գ, էջ 255։

19 Նույն տեղում, էջ 119։

փակության կնիքը։ Բայց, ինչպես նշել ենք, դրանք բացատրվում են քաղաքական այն միջավայրի պայմաններով, որի մեջ ստիպված է եղել ապրել ու գործել Հինդլյանը։

Կարևոր է նշել սակայն, որ այդ բոլորը չեն ժխտում նրա մանկավարժական ազնիվ գործունեության, նրա փայփայած առաջավոր գաղափարների ու վեհ ձգտումների նշանակությունը։

«... Կուզեմ շեշտել սա կետը,— գրում է Հինդլյանը «Անկեղծ էջեր»-ի չորրորդ հատորի առաջաբանում,— թե անոնք իրոք անկեղծ էջեր են, փրցված՝ հայ մանուկը խորապես սիրող դաստիարակի մը մտածումներեն և զգացումներեն, հայ մանուկին համար բարախող հայ դաստիարակի մը սրտեն»։

Մենք կարծում ենք, որ նշանավոր մանկավարժի այս խոսքերը նրա գործունեության լավագույն գնահատականն են։

Հովհաննես Հինդլյանը մի լուսավոր դեմք է մեր մանկավարժական մտքի ու դպրոցի պատմության մեջ, որի ժառանգության լուրջ ուսումնասիրությունն ու քննադատաբար օգտագործումը կհարստացնեն հայ մանկավարժության ու դպրոցի պատմության գանձարանը։

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Կ. ՂՈՐՂԱՆՅԱՆ

ԿԱՐՄԻՐ ԲԼՈՒՐԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հետազոտելով Սևանի ավազանում սփռված քրիստոնեական շրջանի հուշարձանները, Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանը ԺԹ դարի յոթանասնական թվականներին հայտնաբերեց սեպաձև գրություններ՝ փորագրված ժայռերի վրա։ Նա հայտնեց այդ մասին գիտնականներ Մ. Նիկոլսկուն և Ք. Պատկանյանին, ուղարկելով նրանց իր հայտնաբերած արձանագրությունների մանրամասն նկարագրությունը։ Այնուհետև սեպաձև գրություններ գտնվեցին Արագածի շրջակայքում և Արարատյան դաշտում։ Այդպիսով, շնորհիվ Մեսրոպ արքեպիսկոպոսի ջանքերին, գիտական աշխարհը իմացավ, որ Արևելյան Հայաստանի սահմաններում գտնվում են սեպաձև արձանագրություններ։ Նրանց վերծանությամբ զբաղվեցին Նիկոլսկին, Պատկանյանը, Խախանյանը, արտասահմանյան գիտնականներ Սիեսը, Մարգվարդը և ուրիշներ։ Պարզվեց, որ արձանագրությունների հեղինակներն են Ուրարտուի թագավորները, որոնք պատերազմներ են վարել Հարավային Անդրկովկասում։ Անցած դարի ինֆնտանական թվականներին Նիկոլսկին հրապարակեց «Սեպաձև արձանագրությունները Անդրկովկասում» իր աշխատությունը։ Երևացին ուրարտական արձանագրություններին նվիրված մի շարք աշխատություններ։ 1913 թվականին Բ. Տուրաևը «Հին Արևելքի պատմությունը» գրքում նշեց այն մեծ նշանակությունը, որ ունեցել է Ուրարտուի մշակույթը Կովկասի և Հյուսիսային Մերձավորավոյան շրջանների համար։

Սակայն ուրարտական արձանագրությունների և ուրարտական պատմության բազմակողմանի ուսումնասիրությունն սկսվեց միայն սովետական կարգերի ժամանակ։ Սովետական հեղինակավոր գիտնականների գլխին են պատկանում մի շարք փայլուն հետազոտություններ՝ նվիրված Ուրարտուի պատմությանը, մշակույթին և լեզվին։ Գրիգոր Ղափանցյանին են պատկանում Ուրարտուի պատմությանը նվիրված ստվար հետազոտությունը, ինչպես և մի քանի այլ աշխատություններ։ Ս. Մ. Դյակոնովը հրապարակել է ատորեստանյան և բաբելոնյան աղբյուրների տեղեկությունները Ուրարտուի մասին։ Առաջ են տարվում ուրարտական կենտրոնների պեղումները, այն կենտրոնների, որոնք հիշատակվում են Հայկական ՍՍՌ-ի սահմաններում գտնված արձանագրություններում։ Հայտնաբերվեցին մեր երկրի հնագույն պատմությանը վերաբերող այնպիսի նյութեր, որոնց ուսումնասիրումը նոր լույս է սփռում մեր պատմության վրա։ Ուրարտագիտությունը հարստացավ և շարունակում է հարստանալ մեր գիտնականների կարևոր աշխատություններով։ Այդ աշխատությունների շարքում ակնառավոր տեղ են գրաված Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Բորիս Պիոտրովսկու ուսումնասիրությունները Ուրարտուի պատմության և մշակույթի մասին։ Հենվելով պատմական և հնագիտական բնագավառներում ձեռք բերված նորագույն ավյալների վրա, պրոֆ. Բ. Պիոտրովսկին ապացուցում է, որ հայ ժողովրդի պատմության ուրարտական շրջանը եղել է սարկատիրական շրջան։ Պատմական գիտությունների դոկտոր Ս. Երեմյանը, ուսումնասիրելով մեր պատմության Արաշիսյան շրջանը, հայտնում է այն միտքը, որ

այդ շրջանը նույնպես ստրկատիրական շրջան է եղել։

Բայց որո՞նք էին ուրարտացիները։ Ե՞րբ և ի՞նչ պայմաններում երևացին նրանք մեր երկրում, ե՞րբ և ի՞նչպես կառուցեցին նրանք այն յայնանիստ և ամուր շինությունները, որոնց շուրջը մեր գիտնականները կատարում են իրենց մանրազնին հետազոտությունները։

Մեր թվագրությունից առաջ երկրորդ հազարամյակի կեսերին, Վանա ծովակի շուրջը տարածվող լեռնոտ աշխարհում ապրում էին մանր ցեղեր, որոնք ժամանակի ընթացքում միացան ավելի խոշոր և ավելի ուժեղ ցեղերի հետ։ Այդ ցեղերը կազմակերպեցին մի հզոր պետություն, որ կոչվում էր Ուրարտու։ Ուրարտուի կենտրոնն էր Տուսպան՝ այժմյան Վանը։ Ուրարտուն իր հզորության գագաթնակետին հասավ մեր թվագրությունից առաջ ութերորդ դարի կեսերին։ Ուրարտական թագավորները հաղող արշավանքներ էին կատարում դեպի հարևան երկրները։ Հաղթված երկրներից ուրարտացիները դուրս էին բերում բազմահազար գերիներ և հարուստ ավար։ Գերիների և ավարի մասին հպարտորեն խոսում են Ուրարտուի աշխարհակալ թագավորները իրենց արձանագրություններում։ Միաժամանակ նրանք խոսում են և այն շինարարության մասին, որ ծավալեցին նվաճված երկրներում իրենց կարիքների համար։

Ուրարտացիներին հրապուրեցին մանավանդ Արարատյան դաշտը, երկրագործության և այգեգործության այդ հնագույն օրրանը, Սևանի ավազանի և Հարավային Անդրկովկասի արոտները։ Ուրարտացիների համար մեծ նշանակություն ունեին նաև Հայաստանի պղնձով հարուստ լեռները։

Ուրարտացիները իրենց նվաճած երկրներում ծավալում են խոշոր շինարարություն։ Կառուցվում էին խոշոր բերդեր և ամրոցներ, որտեղ ապրում էր ուրարտական փոխարքան, որն իր ձեռքի տակ ուներ զգալի զինվորական ուժ՝ կանխելու համար ամեն մի ապստամբական շարժում։ Բերդերին կից կամ նրանցից ոչ հեռու և նրանց հովանու տակ գտնվում էր ուրարտական տիրապետության տնտեսական կենտրոնը, ուր կուտակվում էին նվաճված գավառներից արտահանվող տուրքերը։

Այդ կենտրոններից ամենահինը և ամենախոշոր հարավային Անդրկովկասում հանդիսանում էր Իրիբունի կամ Երեբունի քաղաքը, որի ավերակները գտնվում են Երևանի հարավ-արևելյան ծայրամասում և հայտնի էին Արին-բերդ անվան տակ։ Դեռ 1893 թվականին Մ. Նիկոլսկին հրապարակեց Արին-բերդում գտնված մի արձանագրության թարգմանությունը։ Նա պատկանում էր Մենուայի որդի Արգիշտի թագավորին։ Արգիշտին ասում է, որ կառուցել է «այս բերդը այս տասը հազար քարերից»։ Բայց բերդի սիստեմատիկ և հետևողական պեղումներն սկսվեցին միայն 1950 թվականին, երբ ճարտարապետ Կոստանդին Հովհաննիսյանը Արին-բերդում հայտնաբերեց երկու նոր արձանագրություն։ Նրանցից մեկը պատմում է Երեբունի բերդի կառուցման մասին։ Երեբունին հիմնվել էր «հարեկելու թշնամի երկրները և երկիր Ուրարտուն մեծարելու համար»։

ԿԱՐՄԻՐ ԲԼՈՒՐ.— Թելշեբաինիի արխիվից մի տախտակ սեպաձև արձանագրությունով

Արին-բերդում ծավալվեցին գիտա-հետազոտական աշխատանքներ ճարտարապետ Կ. Հովհաննիսյանի, պրոֆ. Բ. Պիոտրովսկու և Մոսկվայի Պուշկինի անվան թանգարանի աշխատակիցների մասնակցությամբ։ Պեղումները հայտնաբերեցին մի շարք շինություններ, որոնք պալատի և տաճարի բնույթ ունեն։ Շինություններից մեկը ունի հարուստ տրմանկարներ։ Նկարների վրա ներկայացված են սրբազան ծառեր։ Մի նկարի վրա խալդ աստուծո պատկերն է։ Խալդը, կարմիր հագած, սև գլխարկով, կանգնած է առյուծի վրա։ Պեղվել է մի մեծ սյունազարդ դահլիճ։ Սյուների թիվը դահլիճում հասնում է երեսունի։ Ընթացիկ տարվա պեղումների ժամանակ բացվեց «Մուսիա» կոչված տաճա-

ը։ Մուտքի մոտ, երկու կողմերում, պատի վրա գտնված են միևնույն բովանդակությունն ունեցող երկու արձանագրություններ, որոնք վկայում են, որ տաճարը կառուցել է մենուայի որդի Արգիշտի Ա թագավորը։

Երեբունի կառուցման մասին խոսում է, բացի տեղում հայտնաբերված արձանագրությունից, նաև Խորխորի հայտնի արձանագրությունը։ Այդ արձանագրության մեջ Արգիշտի Ա-ը պատմում է Երեբունի բերդի կառուցման մասին, հայտնելով, որ նա Հյուսիսային Սիրիայից այնտեղ է տեղափոխել 6600 գերի։

կորցրեցին իրենց վաղեմի նշանակությունը մեր թվագրությունից առաջ Ը դարի վերջերում։

Ուրարտական պետությունը ցնցվեց մի մեծ ապստամբության պատճառով։

Ապստամբությունը թեև ճնշվեց, բայց ուրարտական թագավորները փոխեցին նվաճված երկրների կառավարման ձևը։ Սարդուրիի որդի Ռուսան վերացրեց խոշոր փոխարքայությունները։ Նա կազմեց փոքր վարչական տնտեսական կենտրոններ։ Այդ շրջանում Երեբունի դինվորական ամրոցը և Արգիշտիխինելի տնտեսական կենտրոնը կորցրեցին իրենց վաղեմի դիրքը։

ԿԱՐՄԻՐ ԲԼՈՒՐ.— Գինու պահեստը

Երեբունին ուներ զինվորական-վարչական նշանակություն։ Այն ժամանակ տնտեսական կենտրոն էր հանդիսանում ուրարտացիների համար Արգիշտիխինելի քաղաքը։ Նրա ավերակները գտնում են Արմավիր բլրի վրա, Հոկտեմբերյանի շրջանի Արմավիր գյուղի մոտ։ Ուրարտական այդ կենտրոնը ուներ հսկայական նշանակություն։ Այդ մասին են խոսում Արմավիրում գտնված բազմաթիվ արձանագրությունները։

Ուրարտացիների տիրապետության հնագույն կենտրոնները Հարավային Անդրկովկասում՝ Երեբունին և Արգիշտիխինելին

Հանդես եկան ուրարտական տիրապետության նոր կենտրոններ, օրինակ՝ նշանավոր Թելշեբաինի բերդը, որի ավերակները գտնվում են Երևանի շրջակայքում և հայտնի են Կարմիր բլուր անվան տակ։

Կարմիր բլրի պեղումները սկսվեցին 1939 թվականին, երբ բլրի վերին շերտում գտնվեցին Արգիշտիի որդի Ռուսա թագավորի արձանագրության մասերը։

Պեղումները կատարվում են Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Լենինգրադի էրմիտաժի միջոցներով պրոֆ. Պիոտրովսկու անմիջական ղեկավարությամբ։

Պեղումները տվեցին և շարունակում են տալ շատ հարուստ նյութեր, որոնք հնարավորություն են տալիս ուսումնասիրելու հին ուրարտական մշակույթը և ուրարտացիների կապերը հին Արևելքի երկրների՝ Ատրեստանի, Եգիպտոսի, նաև սկյութացիների հետ, որոնք ապրում էին Հյուսիսային Կովկասում և Մերձսնծովյան շրջաններում։

Բերդը կառուցվել է է դարի կեսերում մեր թվագրությունից առաջ և պատերազմի աստուծո անունով անվանվել է Թեյշեբաինի։ Այդպես, Հրազդանի ափին բարձրացավ ուրարտական տիրապետության վարչական ու տնտեսական նոր կենտրոնը։ Նրա կարևորությունը ընդգծում է Ռուսա Բ-ի արձանագրությունը, որ գտնվել է Զվարթնոցում և պահվում է այժմ Ս. Հռիփսիմեի տաճարում։ Իր արձանագրության մեջ Ռուսան պատմում է այն աշխատանքների մասին, որ նա ձեռնարկել էր բերդի շրջակայքը բարեկարգելու համար, տնկել է այգիներ, անց է կացրել լրանցքներ։

Թեյշաբաինին ապրում էր ուրույն կյանքով։ Անդրկովկասի հեռավոր վայրերից, Արարատյան դաշտից և երկրի լեռնային մասերից այստեղ էին բերվում ուրարտացիների կողմից գանձվող հարկերը։ Անընդհատ հոսանքով Թեյշեբաինի էին մտնում ցորենը, գարին, միրգը, խաղողը, բուրդը, կաշիները, աղն ամենը, ինչ արտադրում էր նվաճված երկրների ազգաբնակչությունը։ Տեղ հասած մթերքները վերամշակվում էին ամրոցի բազմաթիվ արհեստանոցներում, պահվում էին ամբարներում և այնուհետև բեռներով ուղարկվում Ուրարտուի կենտրոնը՝ Տուշպա։

Կարմիր բլրի պահեստներում հայտնաբերված են ահագին քանակությամբ հացատիկ և պտուղներ։ Առաջին տարիների պեղումների ժամանակ գտնվեցին սարոր, խնձորներ, նուռ և խաղող։ Հետագա պեղումների ժամանակ, հայտնաբերվեցին նաև սերկևիլ և կեռաս։ Շատ հետաքրքիր տեսարան են ներկայացնում գինու պահեստները։ Գինին պահվում էր մեծ կարասների մեջ։ Ամեն մի կարասի վրա դրոշմված է գինու քանակը։ Կարասում պահվում էր մոտ հազար լիտր գինի։

Թեյշեբաինիում պահվում էին ոչ միայն մթերքները։ Այստեղ գտնվել են հին ուրարտական արվեստի հիանալի նմուշներ։ Կարասներից մեկում շարված էին 97 բրոնզյա թասեր։ Ամեն մեկի վրա փորագրված է թագավորի անունը՝ Արգիշտի, Սարդուրի, Ռուսա։ Նրանց անունները դրոշմված են և բրոնզյա վահանների վրա, որ գտնվել են պահեստներում։ Արգիշտի Ա-ի և Սարդուրի Բ-ի անուններն են կրում բրոնզյա կապարճները։ Կապարճների վրա դրոշմված են ռազմական կառքերի և ձիավորների նկարներ։ Կարմիր բլրում գտնված մյուս իրերը՝ բրոնզյա սաղավարտը, երկաթե տուրը, վերջապես ռազմական ձիու հարուստ սարքերը թույլ են տալիս գրեթե լրիվ գաղափար կազմելու ուրարտական թագավորների և ընդհանրապես զինվորականների ռազմական հանդերձանքի մասին։

Ինչպես ցույց են տալիս պեղումները, միջնաբերդի շրջակայքում գտնվում էր քաղաքը իր երկար և լայն փողոցներով։ Նրանց երկարությամբ դետեղված էին բնակելի թաղերը։ Թեյշեբաինիի ազգաբնակչությունը իր պարենն ստանում էր պետությունից։ Բնակարաններին կից չկան մթերք պահելու շենքեր, չկան և անասուն պահելու հարմարություններ։ «Երևի այն քաղաքում,— ասում է պրոֆ. Բ. Պիոտրովսկին, որ 15 տարուց ի վեր պարապում է Կարմիր բլրի պեղումներով,— ապրում էին ուրարտական զինվորները իրենց ընտանիքներով և բազմաթիվ արհեստավորները, որոնք աշխատում էին միջնաբերդի արհեստանոցներում, երկրագործները, որոնք մշակում էին պետական դաշտերը և այգիները։ Բնական է, որ բնակիչների այդ մասը կախում ունեին ուրարտական պետական իշխանությունից և պարեն էին ստանում պետությունից։ Կարմիր բլուրը հին արևելյան սատրապական հասարակության տիպիկ քաղաքային ավան էր»։

Մեր թվագրությունից առաջ Ը դարում Ուրարտուն սկսեց թուլանալ։ Ապստամբությունների հետևանքով խախտվել էր նրա հրբեմնի զինվորական հզորությունը։ Ատրեստանը՝ Ուրարտուի մշտական ախոյանը, առաջին մահացու հարվածը հասցրեց Ուրարտուին։ Ատրեստանի Սարգոն թագավորը արդյունավետ ճակատամարտում ջարդեց ուրարտական զորքը, կողոպտեց մայրաքաղաքը։ «Սարգոն թագավորը իմացավ իր զորքերի պարտության մասին,— հեղնաբար ասում է Ատրեստանի Սարգոն թագավորը իր հաղթանակի առթիվ փորագրված արձանագրությունների մեջ,— նրա սիրտը դողաց ահից, ինչպես թռչունի սիրտը, որ փախչում է արծիվից»։

Հյուսիսից Ուրարտուին սպառնում էին սկյութացիները։ Ուրարտուի տնտեսական և քաղաքական անկման օրերին սկյութացիները, դաշնակցած Անդրկովկասի այլ ցեղերի հետ, երևացին Թեյշեբաինիի մոտ։

— Սկյութացիների հարձակմանը,— ասում է պրոֆ. Պիոտրովսկին,— նախորդե-

ցին մի շարք պատրաստություններ ամրոցի ներսում։ Երբ սկսվեց տագնապը, դարբասներից գլխավորը շարվեց քարերով և փակվեց։ Պեղելով Թեյշեբաինին, մենք գտանք դարբասը փակված վիճակում։ Այդ կողմից պաշարվածները ապահով էին։ Իրենց լրտեսների միջոցով այդ մասին գիտեին, երևի, և սկյութացիները։ Նրանք չմոտեցան փակված դարբասին։ Իրենց հարվածները նրանք ուղղեցին դեպի հյուսիս-արևմտյան դարբասը, որի մուտքը փակված չէ։ Այդ մասին են վկայում սկյութական բազմաթիվ նետերը, որ գտնվել են այդ դարբասի պարիսպների տակ։

Ամբարներից մեկում 1954 թվականին գտնվեցին մարդկանց 14 այրված կմախքներ։ Ոսկորների մեջ կային զանազան իրեր, ի միջի այլոց հրաշալի ոսկե ապարանջան՝ զարդարված առյուծի գլուխներով։ Հարձակումից և հրդեհից նկուղում ապաստան որոնողները պատկանում էին, երևի, ամրոցի բարձր դասակարգին, որի մասին է ասում շքեղ ապարանջանը։

1956 թվականի պեղումները կատարվեցին ճիշտ այն դարբասի շուրջը, ուր որոշվեց Թեյշեբաինիի ճակատագիրը։ Գտնվեցին սկյութական նետեր և ուրիշ իրեր։ Նրանց թվում է ինչ որ ամանի արծաթյա

ԿԱՐՄԻՐ ԲԼՈՒՐ.— Արծաթե ամանի կափարիչը վրան ամրացված ոսկեձույլ նուռով

Մինչդեռ սկյութացի զինվորները գրոհում և խորտակում էին ամրոցի մուտքը, միջնաբերդում ծագեց հսկայական հրդեհ։ Դժվար է ասել, թե ո՞վ առաջացրեց հրդեհը—հարձակում գործող զինվորնե՞րը, թե՞ ներսում փակված ստրուկները, որոնք անհամբեր սպասում էին հաղթողներին։ Համենայն դեպս մենք ունենք հրդեհի ակներև նշաններ։ Ավերակների մեջ գտնվեցին մարդկանց և անասունների այրված ոսկորներ։ Հրդեհի ժամանակ դահլիճների ծանր ծածկը փլվել է ու իր տակ թաղել մարդկանց և անասուններին։ Նրանց կմախքները և ուրիշ շատ իրեր դարերով մնացել են հողի հաստ շերտերի տակ և հայտնաբերվեցին միայն պեղումների ժամանակ։

կափարիչը, զարդարված ոսկե շերտերով։ Կափարիչի գլխին ամրացված է ոսկեձույլ մի նուռ։ Ուրարտական արվեստի այդ հիանալի նմուշը կրում է Արգիշտի Ա-ի արձանագրությունը։ Միաժամանակ գտնվել են Սարդուրի Բ-ի վահանը և երեք սաղավարտներ։ Նրանցից մեկի վրա, ճակատի մասում, որոշված են ձիավոր խմբերի նկարներ։

Շատ հետաքրքիր է և ուշադրավ, որ Թեյշեբաինին ունեցել է տնտեսական արխիվ, նման այն արխիվներին, որ պահվում էին Ասորեստանի և Բաբելոնի քաղաքներում։ Կավե տախտակները, որ գտնվել են պեղված ավերակների մեջ, պարունակում են սեպաձև գրություններ, որոնք խոսում են առօրյա կյանքի զանազան դեպքերի մասին։

Տախտակներից մեկը պատմում է, որ հրաման է տրված ուղարկել չորս արհեստավոր, մեկ ձի պարենով և եղներ։ Մյուսների վրա գրված է, որ ստացված են կաշիներ և բուրդ։ Մի ուրիշ տախտակի արձանագրությունը խոսում է խաղողի այգիների մասին։

Թելշեբաինին ընկավ սկյութացիների հարվածների տակ մեր թվագրությունից առաջ 8 դարի վերջերին։ Նույն վիճակը ունեցան Ուրարտուն և տնտեսական մյուս կենտրոնները։

Ուրարտուի սահմաններում, այդ մի ժամանակ ուժեղ պետության ավերակների վրա, կազմվեցին ցեղերի նոր խմբավորումներ։ Ուրարտուի անկումից հետո կատարվեց հայ ժողովրդի կազմավորումը։ Ուրարտուի ավերակների վրա ստեղծվեց հայկական առաջին պետությունը։

Ժողովուրդն իր մշակույթը ստեղծագործելու առաջին պահին լայն կերպով օգտագործեց ուրարտական մշակույթի ժառանգությունը։ Ուրարտական ազդեցությունը առանձնապես արտահայտվել է հայկական ճարտարապետական բնագավառում։ Այդ ուղղությամբ կարևոր հետազոտություններ է կատարել ճարտարապետ Կոստանդին Հովհաննիսյանը։ Նա նշում է, օրինակ, հայկական ժայռափոր և ուրարտական նույնպիսի կառուցվածքները, ուրարտական ստիլյանների և հայկական խաչքարերի միջև եղած ընդհանրությունները։

Ուրարտուն խոշոր ստրկատիրական պետություն էր։ Նրա սահմաններում և նրա փլատակների վրա, կատարվեց, ինչպես ասացինք, հայ ժողովրդի կազմավորման երկարատև պրոցեսը և ապա ստեղծվեց առաջին հայ պետությունը։ Բայց մեր տեղեկությունները հայկական պետության սկզբնական շրջանի մասին, ինչպես և ավելի վաղ շրջանների մասին, դեռ սահմանափակ են։ Պատմական գիտությունների դոկտոր Բարդեն Առաքելյանի ղեկավարությամբ Գառնիում կատարված պեղումները հայտնաբերել են հին արվեստի նմուշներ և նյութեր։ Ն տալիս մեր թվագրությանը նախորդող վերջին դարերի և մեր թվագրությունից հետո առաջին երեք դարերի մասին։

Արտաշես Ա-ի և ավելի վաղ շրջանների հուշարձանների ուսումնասիրումը կլրացնեն այն բացերը, որ կան մեր գիտելիքներում ուրարտական պետության անկման և հայկական պետության կազմավորման դարաշրջանների պատմության բնագավառում։

ՀԱՆԳԻՍ
ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ԿՈՍՏԱՆԴԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԹԱՌԼԱՆՅԱՆԻ
(1884—1957)

Մայիսի 22-ին, չորեքշաբթի օր, երկարատև հիվանդությունից հետո, 73 տարեկան հասակում, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ի Տեր հանգչավ Մայր Աթոռի միաբան հոգեշնորհ Տ. Կոստանդին վարդապետ Թառլանյանը։

Հանգուցյալը ծնվել է 1884 թվականին Թբիլիսիում։ Իր սկզբնական կրթությունն ստացել է տեղի Ս. Ավետարան եկեղեցու ծխական դպրոցում, որն ավարտելուց հետո 1905 թվականին ընդունվել է Թբիլիսիի Ներսիսյան հոգևոր դպրոցը։ Ներսիսյան դպրոցից վկայական ստանալուց հետո, սկսվում է նրա մշակութային-հասարակական գործունեությունը նախ «Մշակ» և ապա «Մուրճ» թերթերի խմբագրություններում, որպես աշխատակից և միաժամանակ դպիր սրբագրիչ։

1920 թվականին վերջնականապես ֆա տեղափոխվում է Երևան, աշխատում զանազան խմբագրություններում, և զբաղվում է առավելապես ուսուցչությամբ մինչև 1946 թվականը, երբ նրա համար բացվում է մի նոր շրջան։ Նա ընդունվում է Մայր Աթոռի միաբանության շարքերը, և իր նոր ասպարեզում, իր կարողության չափով, ծառայում է սիրով և նվիրվածությամբ։ Մայր Աթոռում նա վարում է զանազան պաշտոններ որպես մատակարար, Հոգևոր Ճեմարանի վերակացու, Խոր-Վիրապի վանքի վանահայր։ Վերջին տարին նա ծառայում էր անկողնին, շրջապատված Մայր Աթոռի միաբանության գուրգուրանքով և սիրով։

Հանգուցյալը ունի չհրատարակված մի շարք պատմա-բանասիրական ուսումնասիրություններ։

Տ. Կոստանդին վարդապետը Մայր Աթոռի համեստ, ակնիվ և պատրաստված միաբաններից էր, սիրված և հարգված։

Մայիսի 24-ին, ուրբաթ օր, Ս. Գայանեի վանքում, գերաշնորհ Տ. Մահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը պատարագեց և կատարեց հանգուցյալի վերջին օծումը և իր դամբանականում անդրադարձավ Տ. Կոստանդին վարդապետի կյանքի և գործունեության վրա։ Հավարտ սուրբ պատարագի հանգուցյալի աճյունը ամփոփվեց Ս. Գայանեի վանքում, ի շարս Մայր Աթոռի հանգուցյալ միաբանների։

Հավիտենական հանգիստ հանգուցյալ Տ. Կոստանդին վարդապետի հոգնատանջ աճյունին և խաղաղություն իր հոգուն։

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԸ
ՀՍՏՏԱՐԱՐՈՒՄ Է ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ
1957—1958 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԵԾՐՋԱՆԻ ՀԱՄԱՐ

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը գիշերօթիկ դպրոց է վեց դասարաններով— երեքը՝ դասարանական, երեքը՝ լսարանական: Նրա նպատակն է պատրաստել զարգացած և ազգանվեր հոգևորականներ: Ճեմարանը տալիս է բարձրագույն հոգևոր կրթություն: Ուսանողներին ձրիաբար տրամադրվում են ճանաչակցարան բոլոր հարմարություններով, հանդերձեղեն, սնունդ, գրենական պիտույքներ և այլն:

Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարան կարող են ընդունվել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու գավակ եղող 18-ից 25 տարեկան ամուրի անձինք, որոնք չեն պատկանում որևէ կուսակցության, զերծ են ֆիզիկական թերությունից և հիվանդությունից, չեն դատված և ունեն առնվազն 7-ամյա կրթություն:

Դիմողները քննություն պիտի հանձնեն հայոց, լեզվից ու գրականությունից, հայ ժողովրդի պատմությունից և երգեցողությունից: Բարձր կրթություն ունեցող թեկնածուները կտեղավորվեն համապատասխան դասարաններում:

Դիմողները պիտի ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

1. Ինքնագիր դիմում այն մասին, որ իրենք Ճեմարանն ավարտելուց հետո ցանկություն ունեն հոգևորական դառնալու:
2. Բարի վարուց վկայական՝ ստորագրված եկեղեցական իշխանության կողմից:
3. Բժշկական վկայական՝ առողջության մասին:
4. Ծննդյան և մկրտության վկայական:
5. Կրթության վկայական կամ համապատասխան տեղեկանք:
6. Երեք լուսանկար:

Արտասահմանյան երկրների թեկնածուները պետք է իրենց դիմումն ու հարակից փաստաթղթերը ներկայացնեն իրենց թեմերի առաջնորդներին ոչ ուշ քան սույն թվականի օգոստոսի 1-ը, իսկ ներքին թեմերի թեկնածուները՝ մինչև օգոստոսի 15-ը՝ Հոգևոր Ճեմարան, Հայկական ՍՍՌ, Էջմիածին:

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ